Լ. Գ. ՏԵՐԵԽՈՎԱ ԵՎ Վ. Գ. ԵՐԴԵԼԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՍԱԳԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՁՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1935

18 DEC 2017

Լ. Գ. ՏԵՐԵԽՈՎԱ ՑԵՎ Վ. Գ. ԵՐԴԵԼԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՍԱԳԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՑԵՐՐՈՐԴ, ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանեց Հ. ԵԼԻԲԵԿՅԱՆ

Հաստատված է ՌՍՖԽՀ Լուսժողկոմատի կողմից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1935

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Զորրորդ դասարանում դուք պետք է ուսումնասիրեք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Դուք կիմանաք, թե

Խորհրդային Միության զանազան տեղերում ինչպիսի բնություն կա և բնակիչներն ինչպես են ապրում այդ տեղերում:

Մեր Միության մեջ ինչպես են կռվում բնության դեմ և ինչպես են օգտագործում բնությունն աշխատավորների կարիքների համար.

Ինչպես կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վերակառուցվում է ԽՍՀՄ-ի տնտեսությունը և լավանում է աշխատավորների կյանքը:

Դուք կիմանաք թե յերկրագնդի վրա, բացի ԽՍՀՄ-ից, եվ ինչ պետություններ կան և վորտեղ են գտնվում նրանք:

Մեր դասագրքի մեջ խոսվում է այդ բոլորի մասին: Դասագրքի նյութը լավ մշակեցեք: Միաժամանակ ուսումնասիրեցեք աշխարհագրական քարտեզը: Քարտեզի միջոցով դուք լավ կպատկերացնեք այն վայրերը, վորոնց ծանոթանալու յեք:

Առանց աշխարհագրական քարտեզի չի կարելի աշխարհագրություն սովորել: Ինամքով վարվեցեք այս դասագրքի միջի քարտեզների հետ:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍ
11-24204/գր

Պատ. խմբագիր Ս. Դավթյան, Տեխ. խմբագիր Գ. Զենյան
Սրբագրիչ Ս. Շահբազյան

Հրատ. 3439 Գլավ. 284 Պատ. 1042 Տիրաժ 40,000

Հանձնված է արտադրության 9 սեպտեմբերի 1935 թ.
Ստորագրված է տպելու 19 հոկտեմբերի 1935 թ.

Պետհրատի տպարան, Յերևան, II Դումայի, 4

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

I. ԽՍՀՄ-Ի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ) գտնվում է արևելյան կիսագնդում, յերկու աշխարհամասերում՝ Յեվրոպայում և Ասիայում:

Գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա գտեք Յեվրոպա և Ասիա աշխարհամասերը: Նայեցեք, ԽՍՀՄ-ն Յեվրոպայի՞ և Ասիայի վո՞ր մասերում է գտնվում:



Նկ. 1. ԽՍՀՄ տարածության վրա ազատ կերպով կարող են տեղավորվել գլխավոր կապիտալիստական պետությունները

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը յերկրագնդի ամենամեծ պետություններից մեկն է (նկ. 1):

ԽՍՀՄ-ն բռնում է ամբողջ բնակված ցամաքի վեցերորդ մասը: Արևմուտքից դեպի արևելք նա ձգվում է 10 հազար կիլոմետր, իսկ հարավից դեպի հյուսիս 4 1/2 հազար կիլոմետր յերկարությամբ:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա Միության արևմտյան սահմանի մոտ դուք Մինսկ քաղաքը. նույն քարտեզի վրա արևելյան սահմանի մոտ, Ճապոնական ծովի ափին, դուք Վլադիվոստոկ քաղաքը: Ցույց տվեք այն յերկաթուղին, որ միացնում է այդ յերկու քաղաքներն իրար հետ: Արագընթաց գնացքն այդ տարածությունն անցնում է 13 որում:

Նայեցեք քարտեզին:

ԽՍՀՄ-ի Ցեվրոպական և Ասիական մասերն իրարից բաժանվում են Ուրալյան լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով և Կովկասյան լեռներով:

Քարտեզի վրա գտեք ԽՍՀՄ-ի Ցեվրոպական և Ասիական մասերի միջև յեղած սահմանը:

ԽՍՀՄ-Ի ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Նայեցեք քարտեզին.

Մեր Միության ափերը զանազան կողմերից վողողվում են ծովերով: ԽՍՀՄ-ն այդ ծովերի վրայով առևտուր է անում ուրիշ յերկրների հետ:

Հյուսիսային կողմից Միության ափերը հազարավոր կիլոմետր տարածության վրա վողողում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը: Ինչպես գիտեք, այդ ովկիանոսը ցուրտ գոտում է գտնվում: Նրա մի զգալի մասը ծածկված է սառույցներով վոչ միայն ձմեռը, այլև ամառը: Սառույցները խանգարում են նավագնացությունը Սառուցյալ ովկիանոսում:

Միայն արևմտյան մասում՝ Կոլա թերակղզու և Նոր Ցերկիր կղզիների միջև Սառուցյալ ովկիանոսի մի մասն ազատ է սառույցներից: Դա Բարենցի ծովն է: Ատլանտյան ովկիանոսից անցնում է այստեղ Գոլֆշտրոմ տաք հոսանքը: Սա տաքացնում է Բարենցի ծովը, և ամառը սառույցները քաշվում են հեռու դեպի հյուսիս:

Բարենցի ծովը Կոլա թերակղզու ափերի մոտ չի սառչում նաև ձմեռը:

Նկ. 2. Բարենցի ծով

Բարենցի ծովից դեպի հարավ ցամաքի մեջ է մտնում Սպիտակ ծովը: Այստեղից անցնում է ծովային կարճ ճանապարհը դեպի Արևմտյան Ցեվրոպայի յերկրները՝ Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա: Շատ չոգենավեր մտնում են Ֆիննական ծոցը. նրանք բերում են արտասահմանյան ապրանքներ և տանում են մեր ապրանքները:

Միության Ցեվրոպական մասի հարավային կողմը գտնվում է Սև ծովը: Սա տաք, չսառչող ծով է, դրա-

նով մեր հարավային նավահանգիստները կապվում են աշխարհի հետ:

Հյուսիսից Սև ծովի մեջ է մտնում Ղրիմի թերակղզին, որը Սև ծովը բաժանում է մոտ այնքան խոր Ազովի ծովից:



Նկ. 3. Սև ծով

Միության արևելյան ծովային սահմանը կազմում են Մեծ կամ խաղաղ ովկիանոսի ծովերը՝ Բերինգյան, Ոխոտյան և Ցապոնական: Բերինգյան և Ոխոտյան ծովերն իրարից բաժանվում են Կամչատկա թերակղզով: Սառույցները դժվարացնում են նավագնացությունն այդ ծովերում: Ոխոտյան և Ցապոնական ծովերի միջև գտնվում է Սախալին կղզին: Սախալինի հյուսիսային կեսը պատկանում է Խորհրդային Միությանը, իսկ հարավային կեսը՝ Ցապոնիային: Այդ ծովերից ամենակարևորը Ցապոնական ծովն է. նրա միջոցով մենք կապվում ենք Մեծ ովկիանոսի հետ:

Վարժություններ. 1. ԽՍՀՄ-ի կոնտուրային քարտեզի վրա ծովային սահմանների վրայով կապույտ գիծ քաշեցեք և ապա իրենց տեղերում գրեցեք Միության վերը բերած ծովերը, կղզիները և թերակղզիները: Հիշեցեք դրանց անունները և դիրքը քարտեզի վրա:

2. Քարտեզի վրա ցույց տվեք այն ծովային ճանապարհը, որը Ֆիննական ծոցից տանում է Անգլիա:

3. Քարտեզի վրա ցույց տվեք Սև ծովից Ֆրանսիա, Վլադիվոստոկից Ցապոնիա տանող ծովային ճանապարհները:

ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ
(Սահմանակից պետությունները)

Խորհրդային Միության մերձավոր հարևաններն են արևմուտքում՝ Ֆինլանդիան, Եստոնիան, Լատվիան, Ռումինիան. հարավում՝ Թուրքիան, Իրանը (առաջ Պարսկաստան էր կոչվում), Աֆղանստանը, Չինաստանը, Մոնղոլիան և Ցապոնիայի գերիշխանության տակ գտնվող Մանջուրիան և Կորեան:

Գտեք այդ պետությունները քարտեզի վրա:

ԽՍՀՄՆ-ն միակ պետությունն է ամբողջ աշխարհում որտեղ իշխանությունը պատկանում է բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը:

Խորհրդային Միության բանվորա-գյուղացիական իշխանությունը միակ իշխանությունն է ամբողջ երկրագնդի վրա, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարում է յերկրագնդի բոլոր ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու համար:

Խորհրդային Միության ժողովուրդները պատերազմ չեն ցանկանում, բայց նրանք ամեն մի բոլշևիկ պատրաստ են պաշտպանելու իրենց սոցիալիստական պետությունը: Կարմիր բանակն արթուն պահպանում է Միության սահմանները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. Միության կոնտուրային քարտեզի վրա ցամաքային սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք և ապա գրեցեք սահմանակից պետությունների անունները:

ԽՍՀՄ-Ի ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

Դիտեցեք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը:

Քարտեզի մեծ մասը ներկված է կանաչ գոն յնով: Դա ցույց է տալիս, որ ԽՍՀՄ-ի մեջ ցածրադիր հարթություններ շատ կան:



Նկ. 4. Հարթություն.

Քարտեզի վրա նշանակված են յերեք մեծ դաշտավայր՝ Արևելյան-Յեվրոպական, Արևմտյան-Սիբիրական և Թուրանի:

Քարտեզի կանաչ գույնի մեջ տեղ-տեղ յերևում են բաց դեղնավուն բծեր: Դրանք բարձրություններն են. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում գտնվում են Միջինռուսական և Մերձվոլգյան բարձրությունները, Ասիական մասում՝ Արևելյան-Սիբիրական բարձրությունը:

ԽՍՀՄ-ի համարյա ամբողջ հարավային և արևելյան սահմանի յերկարությամբ, ինչպես և ԽՍՀՄ-ի Ասիական և Յեվրոպական մասերի միջև պարզ յերևում են դարչնագույն շերտեր—դրանք լեռներ են: ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում գտնվում են Ղրիմի լեռները, ԽՍՀՄ-ի Յեվրոպական և Ասիական մասերի միջև ձգվում են Ուրալյան և Կովկասյան լեռները: Աֆղանստանի և Չինաստանի սահմանամերձ շրջաններում բարձրանում են Պամիր լեռնաշխարհը և Տյան-Շան լեռները, Չինաստանի և Մոնղոլիայի սահմանամերձ շրջանում— Ալտայան լեռները:

Վարժություններ. 1. ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք և հիշեցեք վերը բերած դաշտավայրերը, բարձրությունները և լեռները:

2. ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա դիտեցեք «ամենաբարձր գագաթներ» նկարը և ապա գտեք այդ գագաթները քարտեզի վրա:

ԽՍՀՄ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԳԵՏԵՐՆ ՈՒ ԼՃԵՐԸ

ԽՍՀՄ-ում մեծ գետեր շատ կան: Նրանցից մի մասը սկիզբն է առնում բարձրություններից, մի մասն էլ բարձր լեռներից:

Քարտեզից յերևում է, որ Խորհրդային Միության գետերը հոսում են զանազան ուղղությամբ, դեպի նրա ափերը վողողող բոլոր ծովերը:

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսն են թափվում հետևյալ մեծ գետերը՝ Հյուսիսային Դվինա, Պեչորա, Ոբ, Յենիսեյ և Լենա:

Ոխոտյան ծովն է թափվում Ջրառատ Ամուրը:

Դնեպրը թափվում է Սև ծովի մեջ. այս գետի վրա կառուցված է Դնեպրյան էլեկտրակայանը:

Դնեպրից դեպի արևելք Ազովի ծովն է թափվում Դոն գետը: Նա ամառն այնքան է բարակում, որ առաջ են գալիս ծանծաղուտներ: Ծանծաղուտները խանգարում են նավագնացությունը:

Կասպից ծովն է թափվում Վոլգան, որը Միության Եվրոպական մասի ամենամեծ նավադնաց գետն է: Նրա մեջ շատ վտակներ են թափվում: Այդ վտակներից ամենամեծերն են Ոկան և Կաման:

Ուրալյան լեռներից սկիզբ է առնում և թափվում Կասպից ծովը յերկար, բայց սակավաջուր Ուրալ գետը:

Ցիննական ծոցն է թափվում կարճ, բայց յայն ու ջրառատ Նեվան:

Քարտեզի վրա գտեք այդ բոլոր գետերը: Ցույց տվեք նրանց հոսանքը, սկսած ակունքից մինչև գետաբերանը:

Խորհր. Միության մեջ շատ լճեր կան: Անուշահամ լճերից իրենց մեծությամբ աչքի յեն ընկնում՝ խոր Բայկալն Արևելյան-Սիբիրական բարձրության վրա, Լադոգա և Ոնեգա լճերը Միության Եվրոպական մասի հյուսիս-արևմուտքում:



Նկ. 5. Բայկալ լիճ

Աղի լճերից ամենախոշորներն են՝ Կասպից և Արալյան լճերը, որոնց սովորաբար ծով են ասում:

Քարտեզի վրա գտեք հիշած լճերը:

Վարժություն. Կոնտուրային քարտեզի վրա իրենց տեղերում գրեցեք վերը բերած գետերի և լճերի անունները:

Հիշեցեք նրանց անունները և քարտեզի վրա ունեցած դիրքը:

Կապույտ մատիտով գիծ քաշեցեք գետերի ամբողջ հոսանքի ուղղությամբ, սկսած ակունքից մինչև գետաբերանը:

Գետաբերանի մոտ գրեցեք յուրաքանչյուր գետի անունը: Կապույտ մատիտով ներկեցեք կամ բարակ գծերով ծածկեցեք վերը հիշված լճերի բռնած տեղը:

II. ԽՍՀՄ-Ի ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԽՍՀՄ-ն հյուսիսից դեպի հարավ ձգվել է 4 1/2 հազար կիլոմետր տարածության վրա:

Միության հյուսիսային մասը գտնվում է բևեռային շրջանից դեպի հյուսիս, նրա ափերը վողողում ն Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը և այդ պատճառով էլ նրա կլիման ցուրտ է:

Միության մեծ մասը գտնվում է բարեխառն գոտում: Քանի վոր ԽՍՀՄ-ն հյուսիսից դեպի հարավ մեծ տարածություն է բռնում, այդ պատճառով էլ նրա բնությունը շատ բազմազան է:

Ցուրտ գոտու ձմեռային սոսկալի սառնամանիքները դեպի հարավ (աստիճանաբար) թուլանում են. կլիման ցրտից դառնում է բարեխառն ցուրտ, ապա բարեխառն, իսկ հարավում նույնիսկ տաք է. այդպես հյուսիսից դեպի հարավ փոխվում է վոչ միայն կլիման. կլիմայի հետ փոխվում է նաև բուսական և կենդանական աշխարհը:

Ամբողջ Միությունն իր բնությամբ բաժանվում է մի քանի գոտիների, կամ զոնաների:

1. ԲԵՎԵՌԱՅԻՆ ԳՈՏԻ

Դիտեցեք գլոբուսը և կիսագնդերի քարտեզը. դուք տեսնում եք, վոր Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի հյուսիսային ափերի յերկարությամբ (հյուսիսային բևեռի շուրջը) հազարավոր կիլոմետր տարածությամբ ձգվում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը:

Եվրոպայի և Ասիայի համարյա ամբողջ հյուսիսային ափերը Խորհրդային Միությանն են պատկանում: Նրան են պատկանում նաև այն բոլոր կղզիները, վորոնք գտնվում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի Միության կից մասում:

Դա ԽՍՀՄ-ի ամենահյուսիսային մասն է, Միության բևեռային գոտին է:

Դժվար է բևեռային գոտու բնությունը: Ձմեռը մի քանի ամիս շարունակ արևն այս աշխարհում բոլորովին չի ծագում, իշխում է բևեռային գիշերը: Կոլա թերակղզու հյուսիսային ափերում այդ բևեռային գիշերը տևում է 2 ամիս, Նոր Յերկիր կղզում՝ 4 ամիս, իսկ հյուսիսային բևեռում՝ կես տարի:

Ամառը, ընդհակառակը, արևը բոլորովին մայր չի մտնում— բևեռային ցերեկ է լինում:

Բայց արևը կեսորին շատ չի բարձրանում և այդ պատճառով թույլ է տաքացնում:



Նկ. 6. Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս

Առաջադրություն. 1. Կիսագնդերի քարտեզի վրա գտեք Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի այն մասը, որ պատկանում է Նորվեգային Միությանը:

2. Գտեք հետևյալ ծովերը՝ Բարենցի, Սպիտակ և Կարայի:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՈՎԿԻԱՆՈՍԸ

Ձմեռը: Դեպի ամեն կողմ տարածվում է սառցե անսահման անապատը: Հսկայական սառցադաշտերը պատել են ովկիանոսը: Նրանք շարժվում են իրար ճնշելով: Ճայթյունով ու դղրդոցով ջարդվում են սառույցները և կուտակվելով սառցակույտեր «տորոսներ» առաջ բերում:

Սոսկալի սառնամանիքներ են. ձյունախառն փոթորիկը, բուք ու բորանը կատաղի յեն:

Արդեն մի ամբողջ ամիս է, որ ամեն ինչ պատած է բևեռային գիշերվա խավարով: Կյանքը կանգ է առել: Բոլոր կենդանի էյակները թաղնվել են: Սառցե անապատով յերբեմն միայն անցնում է սպիտակ արջը:

Յերբեմն յերկինքը պարզվում է և այդ ժամանակ սառցե անապատը լուսավորվում է աստղերի փայլով և լուսնի լույսով: Յերբեմն էլ յերկնակամարի վրա շողշողում է հյուսիսափայլը:

Ամառը: Արևը մի քանի ամիս շարունակ լուսավորում է և բոլորովին մայր չի մտնում: Ծովի մակերևույթի վրա սառույցն սկսում է հալվել: Սառցադաշտերը կոտրատվում, ջարդվում են: Նրանք հալվում են շատ դանդաղ, և ամբողջ ամառվա ընթացքում լողում են ովկիանոսում:

Սառույցների վրա տաքանում են փոկերը: Յերևում են խմբերով անհաշիվ տառեխներ, ձողաձկներ ու այլ ձկներ:

Նոր Յերկիր կղզիների ժայռոտ ափերի մոտ յերևում են ծովացուլերի մեծ հոտեր, իսկ Ասիայի ափերի մոտ՝ կետեր:

ԲԵՎԵՌԱՅԻՆ ԿՂԶԻՆԵՐ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի սառցապատ մակերևույթից բարձրանում են բազմաթիվ մեծ ու փոքր կղզիներ:

Բևեռային կղզիներում տարվա մեծ մասը ձմեռ է լինում և կղզիները ովկիանոսի հետ միասին պատած են սառույցներով ու ծածկված են ձյունով:

Բնությունն այստեղ կենդանանում է միայն 2—3 ամսվա ընթացքում: Ձյունը և սառույցները հալվում են: Քարաժայռերը մերկանում են: Տեղ-տեղ յելևում է աղքատ բուսականություն՝ գունդգունդ քոսեր, մամուռների կանաչ բարձեր, (իսկ մամուռի մեջ փոքրիկ ծաղիկներ), բևեռային կակաչներ, անմոռուկներ, զանգակիկներ:



Նկ. [illegible] շուկա.

Կղզիների ծովափնյա ժայռերի վրա հավաքվում են բազմաթիվ թռչունները: Այստեղ բուն չինելու և ձագեր

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՌԱՔԱՐԿ
ՀԱՍՍՐ

հանելու համար հարավից չվում են այդերուկները, տուզահավերը, վորոշները: Ցերբեմն սրանց բների շարքը տարածվում է մի քանի կիլոմետր: Թռչունների յերամները ամպերի պես անցնում են ժայռերի վրայով: Թռչունների աղմուկը լցնում է ողը: Զուր չե, վոր այդ տեղերն անվանում են թռչնի շուկա:

Բայց ամառն այդ բևեռային կղզիների վրա կարճատև է: Դեռ ձյունն ու սառույցը բոլորովին չհալված, նորից գալիս են ցրտերը: Թռչունները թռչում են դեպի հարավ և ձմեռը կրկին վերադառնում է:

Դաժան է բևեռային կղզիների բնությունը:

Մարդիկ միայն վերջերս են սկսել բնակություն հաստատել նրանց վրա:

ՆՈՐ ՑԵՐԿՐՈՒՄ

Առաջին բնակիչները: Վաթսուն տարի առաջ Նոր Ցերկիր կղզիների ափին մոտեցավ մի նավ, վորի վրա գտնվում էին նենեց արդյունաբերողներ—Ֆոմա Վիլկան իր ընտանիքով և ընկերներով:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք Նոր Ցերկիր կղզիները:

Նրանք ափ իջան, բարձրացան ժայռերը:

Վիլկան նայեց իր շուրջը: Սև ժայռոտ լեռներ, տեղտեղ ծածկված ձյունով, մեկ ել ծերպերում մամուռ... Վո՛չ մի շունչ .. Վո՛չ մի ձայն: Սարսափը պատեց նրան:

Մտածում էին վերադառնալ տուն, բայց յերբ ծովափին մի կիսախարխուլ խրճիթ գտան, վերոշեցին մնալ: Տեղը նրանց արդյունաբերության համար բավական հարմար է՝ հեռու տեղերից գալիս էին այստեղ փոկերի մեծ հոտեր. լեռներում թափառում էին յեղջերուներ:

Վորսորդները շատ դաղաններ սպանեցին և սկսեցին հայրենիք վերադառնալու պատրաստություն տեսնել: Բայց Վիլկան չցանկացավ տուն վերադառնալ. նա իր կնոջ, յերեխաների և մի ընկերոջ հետ մնաց այս կղզում:

Խրճիթ չինեցին: Մթերքների և վառոդի բավականաչափ պաշար ունեցին:

Ցեկավ ձմեռը: Ծովը ծածկվեց սառույցով: Արևը թաղնվեց, քամիներն աղմկեցին: Սուլաց փոթորիկը: Ամեն ինչ ծածկվեց ձյունով: Ծանր եր ձմեռը: Տնակը համարյա ամբողջապես թաղվել եր, խոր ձյունի մեջ ստիպված եյին լինում ծխնելույզով դուրս գալ: Արջերը շատ անգամ մոտեցան տնակին ուտելու բան ճարելու համար: Բայց ամենից ծանրը մթությունն ու ցուրտն եր: Վիլկայի ընկերն այնպես ել գարնան արև չտեսավ—մեռավ:

Բայց ահա յերևաց արևը: Ցեկավ գարունը: Սառույցը շարժվեց դեպի ծովը: Սառույցների վրա յերևացին փոկեր: Ցեկան թռչունները: Լեռներից ուղմկելով ցած հոսեցին հեղեղները: Վիլկան շատ ծովային գազաններ ու թռչուններ խփեց:

Բայց նա կարոտել եր մարդկանց: Նա նավով պատրաստ կատարեց Նոր Ցերկրի շուրջը, վորպեսզի մի վորևե մարդ գտնի: Սակայն վոչ վոքի չհանդիպեց:

Ձմեռը յեկավ ու կրկին անցավ: Հետևյալ գարնանը նա հանդիպեց արդյունաբերողների, վորոնք տունդրայից եյին յեկել- Վիլկան իր ամբողջ վորսը վաճառեց արդյունաբերողներին և փոխարենը ձեռք բերեց վառոդ, հրացան և մթերքներ: Արդյունաբերողները վերադարձան տուն և պատմեցին, վոր Նոր Ցերկրում առատ վորս կա և վոր այնտեղ ապրում է և վորսորդությամբ ու ձկնորսությամբ է զբաղվում Վիլկան:

Այն ժամանակ տունդրայից չքավոր նենեցներն սկսեցին Նոր Ցերկիր փոխադրվել: Այսպես հիմնվեց առաջին բնակավայրը Նոր Ցերկրում:

Նոր բնակիչներն արտել կազմեցին և Վիլկային եր ավագ ընտրեցին: Ծանր եր Նոր Ցերկրի առաջին բնակիչների կյանքը: Շատերը նրանցից մեռան, վորը լընդախտից ու սովից մեռավ, վորը ծովում խեղդվեց, վորը սառույցների տակն ընկավ, ջարդվեց, կամ սառույցը նրան բաց ծով տարավ, կորցրեց:

Նոր բնակիչների հետ յերկար չապրեց և ինքը Ֆոմա Վիլկան։ Նա մեռավ ընդախտից։

Ինչպես փոխվեց կյանքը Նոր Ցերկրում։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կյանքը մեծ փոփոխության յենթարկվեց Նոր Ցերկրում։

Նոր Ցերկրում այժմ չորս գյուղ կա. բնակիչների թիվը հասնում է 300-ի։ Նենեցները կազմել են վորսորդական արտելներ։ Ծովային գազաններ խփելու համար նրանք այժմ մոտորային նավակով են ծով գուրս գալիս։ Նրանք ճեռք են բերում մեծ քանակությամբ մորթի— բևեռային աղվեսի, արջի։

Տարին յերկու անգամ Նոր Ցերկիր են ուղևորվում շոգենավեր, վորոնք նենեցների համար փոխադրում են զանազան ապրանքներ, վառոդ, զենք, իսկ գրանց փոխարեն նենեցներից ստանում են մորթի, ճարպ։



Նկ. 8. Նոր Ցերկրում

Կառուցվել է դպրոց, յերկու հիվանդանոց, յերկու ռադիոկայան, կազմակերպված է հեռագրական կայան, այդտեղ կայանում ուսումնասիրում են Նոր Ցերկրի բնությունը։

Նոր Ցերկրում կա Խորհուրդ, վորը կարգավորում է Նոր Ցերկրի բնակիչների կյանքը։ Խորհրդի նախագահը Վիլկայի ազգից է։

ԲԵՎԵՌԱՑԻՆ ՎՈՐՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Շատ ծովային գազաններ, ձկներ ու թռչուններ կան ԽՍՀՄ-ի բևեռային գոտում։

Այս հարստություններն ոգտագործելու համար խորհրդային կառավարությունն այստեղ կազմակերպում է բևեռային վորսարդյունաբերական տնտեսություն։ Կազմվում են ձկնորսական և վորսորդական կոլեկտիվ տնտեսություններ, հիմնվում են ձկնորսական բազաներ։

Ցուրաքանչյուր բազա տասնյակներով վորսորդական ու ձկնորսական նավեր ունի։

Վորսորդներին և ձկնորսներին ոգնում են սառցահատ նավերը, սավառնակները և ռադիոն։



Նկ. 9. Փոկերի վորս

ՓՈԿԵՐԻ ՎՈՐՍԸ ՍԱՌՑԱՀԱՏՈՎ

Գարնանային արևի տաք ճառագայթների տակ թաթափանցիկ, կապտավուն սառույցների վրա տաքանում են փոկերը: Նրանք հազարներ են: Տաքանալով նրանք ժամերով նիրհում են, յերբեմն միայն կողքից կողք դառնում:

Չի քնում միայն ծեր, փորձված փոկը—պահակը:

Յերկնքում յերևաց մի սավառնակ: Դա հետախույզն է բարձրացել սառցահատից և փոկերի հոտ է փնտռում: Ողջույն տեսավ փոկերի հանգստի տեղը և ռադիոյով հաղորդեց սառցահատին:

Շուտով հեռվում յերևում է սառցահատը: Վորպեսզի փոկերը չվախենան ու փախչեն, նա կանգ է առնում փոկերից բավական հեռու: Վորսորդները հագնում են սպիտակ խալաթներ և իջնում սառույցի վրա: Նրանք հրացանները ձեռքներին կամաց մոտենում են փոկերին: Ամենաառաջ հրացանաձիգը գնում է առջևից: Անշեղ հարվածով սպանում է պահապան փոկին:

Սկսվում է արագ կրակոց և կարճ ժամանակամիջոցում սպանվում են հարյուրից ավել փոկեր: Հրացանաձիգներն առաջ են գնում:

Հրացանաձիգներին հետևում են քերթողները: Նրանք ունեն մեծ, սուր դանակներ: Նրանք սպանված փոկերից հանում են կաշին և ճարպը:

Գալիս է սառցահատը, բարձում է վորսը և շարժվում դեպի փոկերի նոր հանգստավայրը. ողջույն այդ մասին արդեն ռադիոյով իմաց է տվել:

ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կոլա թերակղզու հյուսիսային ափին, այստեղ—այնտեղ ցրված են ձկնորսական կայաններ, ձկնորսական բաղաներ:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա դուք Կոլա թերակղզին:

Հաճախ գալիս են այստեղ առագաստային և մոտորային նավեր և ծովածոցում խարիսխ ձգում: Վորմանք ձուկ են բերում, իսկ վորմանք, վերցնելով պաշար, սարք և խայծեր, գնում են վորսի:

Ցերը ձկան վորսն սկսվում է, նավերն անընդհատ ձուկ են կրում: Ձուկը նավահանգստում դասավորվում են, գարսում տակառների մեջ, վրան աղ ցանում և շոգենավերով փոխադրում պահեստները:

Ձողաձուկը սովորաբար ծովափերին մոտենում է խիտ շերտով, վոր ունենում է մի քանի կիլոմետր յերկարություն և լայնություն: Նույնպիսի խիտ և մեծ շերտով է շարժվում նաև տառեխը: Սա կանգ է առնում ափերի մոտ և մտնում է խաղաղ ծովախորշերը: Հենց այստեղ էլ նրան ուռկաններով փակում են և վորսում մեծ շերեփներով, պարկերով և դույլերով:

Ձուկն աղ են դնում, չորացնում, ծուխ տալիս:

Մեծ քանակությամբ ձուկ վորսում են մանավանդ տրաուլերներով: Խորհրդային նոր տրաուլերը մի ամբողջ լողացող գործարան է:

Նա վոչ միայն ձողաձուկ է վորսում, այլև այդ ձուկը մշակություն է յենթարկում և դարձնում պատրաստի մթերք:

Հենց վոր տրաուլերը ծով է դուրս գալիս, նրա վրա գտնվող ռադիոկայանն սկսում է իր աշխատանքը: Ռադիստը կապվում է այն բոլոր տրաուլերների հետ, վորոնք այդ ժամանակ գտնվում են ծովում. և, ձկան շարժման մասին ստացած տեղեկությունների հիման վրա, նավապետը նշում է վորսի տեղը:

Տրաուլերն ուղևորվում է դեպի նշած կետը: Տրալը (հատուկ ցանց) իջեցնում են ծով: Նավը շարժվում է, և սկսվում է վորսը:

Մի ժամից հետո տրալը հանում են, ճախարակի միջոցով բարձրացնում և ձուկը մասսայորեն «հոսում է» տախտակամածի վրա: Տրալը ժամը մեկ բարձրանում է և ամեն անգամ իր հետ բերում մոտ հազար կիլոգրամ ձուկ:



Նկ. 10. Ձկան վորս տրաուլերով.

Սկսվում է ձկան մշակումը: Զկնորս-նավաստիները կազմակերպում են կենդանի կոնվեյեր: Մեկը մեծ պատառաքաղով բռնում է ձողաձուկը և դնում յերկաթե թիթեղով պատած մաքուր սեղանի վրա: Ցերկրորդ նավաստին կացնի ճարպիկ հարվածով կտրում է ձկան գլուխը, և գլխատած ձուկն սկսում է սողալ սեղանի հարթ, փայլուն մակերևույթով, այստեղ ճարպիկ ձեռքերը բռնում են ձուկը, սուր դանակով փորը ճեղքում են և փորոտիքը հանում:

Ձուկը ձեռքից ձեռք է անցնում: Հանում են նրա մաշկը, սուր դանակով նրան յերկարությամբ յերկու մասի յեն բաժանում և հանում վողնաշարը: Ձկան փափուկ մասերն աղ են դնում և տրյում տեղափոխում:

Հենց այստեղ ել, տրաուլերի վրա փոսկորներից վոսկրային ալյուր են պատրաստում, իսկ ձողաձկան լյարդից ձկան յուղ են հանում, վորը գործ է ածվում վոչպես բժշկական միջոց և աննդարար նյութ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մեր Միության հեռավոր հյուսիսում բնական շատ հարստություններ կան: Լայն շերտով հազարավոր կիլոմետր տարածության վրա ձգվում են դարավոր անտառներ, այդ անտառներում շատ թանկարժեք մուշտակավոր գազաններ կան: Զանազան տեղերում գտնվել են ածուխ, նավթ, գրաֆիտ և ուրիշ շատ ոգտակար հանածոներ:

Բայց ի՞նչ ճանապարհով դուրս բերել այդ հարստությունները—տայգայի և տունդրայի ընդարձակ դժվարանցանելի տարածությունների վրայով:

Նայեցեք Խորհրդային Միության քարտեզին: Ընդարձակ ջրառատ գետերը շատ տեղերում կտրում են Միության ամբողջ հյուսիսային մասը և իրենց ջրերը տանում դեպի Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս: Այդ ովկիանոսով ամառը կարելի յե գնալ Միության հյուսիսային ծովափի վորևե կետը, ինչպես և ուրիշ յերկրներ:

Բայց Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում նավով ճանապարհորդելը շատ վտանգավոր է: Սառույցներից շատ նավեր են խորտակվել այդ ովկիանոսում: Խորհրդային կառավարությունը վորոշել է հետազոտել Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը և բացել անվտանգ ծովային ճանապարհ Միության ամբողջ հյուսիսային ափի յերկարությամբ:

Այս նպատակով ամեն տարի ուղարկվում են հզոր սառցահատներից և սավառնակներից բաղկացած դիտարշավներ. նրանք ուսումնասիրում են բևեռային ծովերը:

Կղզիների վրա շինված են մի շարք բևեռային կայաններ, վորոնք շարունակ դիտում են յեղանակը և բևեռային սառույցների շարժումը: Նրանք իրենց դիտողությունները ռադիոյով հաղորդում են այն բոլոր նավերին, վորոնք լողում են բևեռային ծովերում:

Վերջին տարիներում խորհրդային սառցահատները Կարայի ծովով ոտար չատ նավեր են անցկացնում:

Վերջին խորհրդային գիտարշավները մի տմառվա ընթացքում կարողացան անցնել Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը մեր Միության հյուսիսային ափերի մոտ:



Նկ. 11. Հյուսիսային ծովային ճանապարհով կատարված եքսպեդիցիաների քարտեզը

Քարտեզի վրա ցույց տվեք Սիբիրյակով, Չելյուսկին, Լիտկեյի գիտարշավների ճանապարհը:

1935 թ. Մուրմանսկից Վլադիվոստոկ են ուղևորվել 73 շոգենավ: Հյուսիսային-ծովային ճանապարհին չորս տեղ կանգնած եյին հզոր սառցահատները: Սրանք շոգենավերն անց են կացրել բևեռային ծովերի սառուցների միջով:

Բայց բևեռային ծովերը դեռ լավ ուսումնասիրված չեն և նավելը շատ տեղերում դեռևս շատ վտանգավոր է: Այդ պատճառով էլ հյուսիսային բևեռային ծովերի հետազոտությունը դեռ շարունակվում է: Կազմակերպվում են նոր գիտարշավներ: Զանազան տեղերում կառուցվում են բևեռային նոր կայաններ:

Դաժան է կյանքը բևեռային կայաններում: Ծանր են նավելու պայմանները բևեռային ծովի սառուցների մեջ. մեծ հաստատակամություն, տոկունություն և խիզախություն ունեն այն հարյուրավոր խորհրդային աշխատավորները՝ ծովագնացներն ու գիտնականները, վորոնք կռվի յեն բռնվել Սառուցյալ ովկիանոսի դաժան բնության հետ Հյուսիսային մեծ ճանապարհի համար, մեր բևեռային դոտու յուրացման համար:

Աշխատանք արտադասյան ժամանակ. Լրագրների միջոցով հետևեցեք թե ինչ ճանապարհներով են անցնում այս տարվա գիտարշավները: Քարտեզի վրա փոքրիկ դրոշակներով նշանակեցեք այդ նավերի անցած ճանապարհը:

«ՉԵԼՅՈՒՍԿԻՆԻ» ՑԵՐԹԸ

Այս հոդվածը կարդալիս պետք է շարունակ հետևել քարտեզին:

1933 թ. ոգոստոսին Մուրմանսկից դուրս յեկավ «Չելյուսկին» բևեռային մեծ շոգենավը: «Չելյուսկինը» տանում եր գիտարշավ Հյուսիսային ծովային ճանապարհն ուսումնասիրելու համար:

Գիտարշավի պետն եր հայտնի գիտնական և բևեռային հետազոտող Ո. Յու. Շմիդտը: Շոգենավը վարում եր փորձված բևեռային կապիտան Վորոնինը:

Առաջին սառուցները: Առաջին յերկու որը «Չելյուսկինը» գնում եր Բարենցի ծովով:

Պաղպաղ եր: Տաք: Մեկ-մեկ պատահում եյին ձկնորսական խոշոր նավեր: Ցերբեմն, ճեղքելով ջուրը, ծովի մակերևույթի վրա յերևում է կետի մեջքը:

Ցերբոդ որը շոգենավը մոտենում է Նոր Ցերկրի ձյունապատ ժայռոտ ափերին և կղզիների միջև գտնվող նեղուցով դուրս գալիս Կարայի ծովը:

Կարայի ծովում շոգենավը հանդիպում է հսկայական սառուցների: Շուտով «Չելյուսկինն» ընկնում է

անընդհատ, միապաղաղ սառույցների մեջ։ Սառույցները հսկայական ուժով զարկվում են շոգենավի կողերին։ Կապիտան Վորոնինը շարունակ փոխելով նավի ուղղությունը, աշխատում է թուլացնել հարվածները։ Բայց դա քիչ է օգնում։ Մեծ սառույցների հետ ունեցած հենց առաջին ընդհարման ժամանակ «Զելյուսկինը» ճեղքված ստացավ։ Պետք եր նորոգել նավը։

Վերջապես սառույցները դառնում են անանցանելի։ «Զելյուսկինն» ստիպված է կանգ առնել։ Ռադիոյով օգնության են կանչում «Կրասին» սառցահատը, որը հոնում է նրան ծանր սառույցների միջով։ Շոգենավը շարունակում է իր ճանապարհը։ Նրա վրա վոչ մի բոպե չի ընդհատվում կազմակերպված աշխատանքային կյանքը։ Կապիտանն իր կամրջակից աչալուրջ հետևում է ծովին։ Գիշեր ցերեկ լսվում է շտուրմանի հրամանը։ Գիշեր ցերեկ կանգնած են մեքենավարները շոգենավի կաթսաների մոտ։ Ցուրաքանչյուր չորս ժամը մեկ փոխվում է նավաստիների պահնորդությունը։ Գիտական աշխատավորներն անընդհատ զբաղված են հետազոտությամբ։

Շոգենավը դանդաղորեն առաջ է գնում Կարայի ծովով։ Սառույցներից նա ընկնում է մութ մառախուղների մեջ։ Մառախուղներից հազիվ ազատվելով նա կրկին շրջապատվում է սառույցներով։

Վերջապես, 17-րդ որը շոգենավը մոտենում է Զելյուսկին հրավանդանին։ Ցավ ի՞նչ ուրախություն։ Այստեղ նա հանդիպում է Խորհրդային Միության բևեռային հինգ լավ նավերի։

«Զելյուսկինը» Զուկոտյան ծովի սառցե գիրության մեջ։ Զելյուսկին հրվանդանից հետո շոգենավն ամբողջ 10 որ գնում է դեպի Բերինգյան նեղուցը, չհանդիպելով վորևե արգելքի։

Արդեն հեռու չե Վրանգելի կղզին, իսկ նրանից հետո մնում է վերջին Զուկոտյան ծովը։ Բայց սա ճանապարհի ամենադժվար մասն է։ «Զելյուսկինը» կրկին ծանր սառույցների մեջ է ընկնում։

Մոտենում է ձմեռը։ Սառույցներն սկսում են իրար հետ միանալ, սառչել։ Շոգենավն ավելի ու ավելի դանդաղ է առաջ շարժվում։ Ցերբեմն սառույցներն այնպիսի մեծ ուժով են ճնշում շոգենավը, վոր նա չարժվում է նրանց ճնշման ուժով։

Ահա, վերջապես, Բերինգյան նեղուցը։

Բայց հանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, սառույցները ճնշում են շոգենավը դեպի հետ և նրան կրկին Զուկոտյան ծովը տանում։

Գալիս է ձմեռը և սառույցները շղթայում են ծովը։ Շոգենավը սառած մնում է հսկայական սառցադաշտի մեջ... Ստիպված են ձմեռել սառույցների մեջ։ Շոգեկաթսայի կրակարանները հանգցնում են, վորպեսզի վառելիքը խնայվի։

Բայց չելյուսկինցիները չեն վհատվում։ Գիտական աշխատավորներն ավելի մեծ յեռանդով շարունակում են իրենց աշխատանքները։ Բոլորն սկսում են ամենայն ջերմությամբ սովորել։

«Զելյուսկինի» խորտակումը։ Արդեն յերկու ամսից ավելի է, ինչ «Զելյուսկինը» ձմեռում է Զուկոտյան ծովի սառույցների մեջ։ Հսկայական սառցադաշտի հետ միասին նա թափառում է ծովում։

Ծովը ծածկած սառցադաշտերն սեղմում են իրար։ Սառույցները դղրդոցով և ճայթյունով կոտրվում, փշրվում են և իրար վրա կուտակվում։ Անցնում է դեկտեմբերը, հունվարը։ Ահա արդեն փետրվարի 13-ն է։

«Զելյուսկինի» վրա կյանքն ընթանում է ինչպես միշտ, թեպետ այժմ ավելի հաճախ են լսվում կոտրվող սառույցների հարվածներ ու ճարճատյուններ։ Բայց բոլորն ընտելացել են դրան։ Միայն նավի հրամանատարական կազմը Շմիդտի և Վորոնինի գլխավորությամբ աչալուրջ հետևում են սառույցներին և իզուր չեն հետևում։

Հանկարծ ցերեկվա ժամը 2-ին լսվում է չչմեցնող հարված և սառցե վիթխարի պատը շարժվում է դեպի

«Չելյուսկինը»: Սառույցների զարկից նավի կողքում մեծ ճեղքվածք է առաջանում:

Հրամայվում է անմիջապես նավը դատարկել, անհրաժեշտ պաշարն իջեցնել սառույցների վրա: Մի քանի վայրկյանից հետո բոլորն իրենց տեղերումն են և նավը դատարկվում է: Վոչ մի իրարանցում, վոչ մի աղմուկ:

Սառույցները նորից ճնշում են շոգենավը: Ցեվ մեկը մյուսի հետևից տրաքվում են շրջածածկի յերկաթե թերթերը: Շոգենավի ձախ կողքը պատռված է: Ջուրն սկսում է նավի մեջ հոսել: «Չելյուսկինը» սուզվում է: Բայց վոչ ճիչ, վոչ հուսահատություն: Աշխատանքը շարունակվում է: Շուտով բոլոր անհրաժեշտ պաշարը, գիտական գործիքները և նյութերը սառցի վրա յեն: Բայց ահա նավի քիթն սկսում է թեքվել: Տախտակամածը ծածկվում է ջրով: Լսվում է հրաման՝ «Թողնել նավը»:

Շոգենավի քիթն արագորեն ջրի տակ է անցնում:



Նկ. 12. «Չելյուսկինի» խորտակումը.

Ամենից վերջը շոգենավը թողնում են դիտաբշավի պետ Շմիդտը և կապիտան Վորոնինը: Մի քանի վայրկյան ևս և «Չելյուսկինն» անհետանում է սառույցների տակ:

Ճամբար սառույցի վրա: Շոգենավը խորտակվեց, և մարդիկ մնացին անտիեան սառցե անապատի մեջ:

Մթություն է: Փոթորիկ: Սաստիկ սառնամանիք:

Շտապ կանգնեցնում են ռադիոկայմը, վրաններ են դնում. աշխատելը սոսկալի ծանր է. գործիքներ չկան, սառնամանիքից մատները չեն ծալվում, քամին դլորում է նրանց, փոթորիկը կուրացնում է աչքերը: Վերջապես ուժասպառ, թրջված, սառած մտնում են վրանները քնում ծանր քնով:

Առավոտը նրանց ուրախ, հուսադրող լուր է բերում: Ուելենի ռադիոկայանը (Զուկոտյան թերակղզու վրա) լսում է չելյուսկինցիներին: Շմիդտը ռադիոյով հաղորդում է Մոսկվա շոգենավի խորտակման մասին:

Կաղատեն... Պետք է միայն դիմանալ, մտածում է ամեն մեկը: Առտիճանաբար կյանքը կարգի յե ընկնում: Ճամբարի վրա ծածանվում է խորհրդային Կարմիր դրոշակը:

Ռադիոյով լուր են ստանում, վոր Մոսկվայից ուղևորության են գալիս սավառնակներ, դիրիժաբլներ և «Կրասին» սառցահատը: Բոլորի տրամադրությունն ավելի ևս բարձրանում է: Սկսում են փնտռել և մաքրել հրապարակներ սավառնակների վայրեջքի համար:

Բայց այն սառցադաշտը, վորի վրա գտնվում է ճամբարը, շարունակ շարժվում է: Այստեղ-այնտեղ յերևան են գալիս մեծ ճեղքեր, սառույցները կուտակվելով իրար վրա հսկայական թմբեր են առաջ բերում: Մեկը մյուսի հետևից կոտրատվում են և աերոդրոմները: Սառցակույտը քանդում է խոհանոցը, իսկ մի ուրիշ անգամ հանրակացարանը: Մի անգամ քիչ մնաց սառցի տակ անցներ ռադիոկայմը: Ճամբարն ամեն մի բոպե վտանգի մեջ է: Իսկ ոգնություն դեռ չկա: Խանդարում են բուքը և մառախուղները: Արդեն մոտ մեկ ամիս թա-

փառում և ծովում լողացող ճամբարը: Բայց չելյուսկինցիները չեն վհատվում: Նրանք բոլշևիկական համառությամբ կռվում են սառույցների դեմ, շարունակում են հետազոտել Զուկոտյան ծովը: Կոմունիստները և կոմյերիտականներն ամեն տեղ, ամենածանր և պատասխանատու աշխատանքի մեջ կանգնած են առաջին շարքերում:

Աշխույժ տրամադրություն պահպանելու համար կազմակերպում են ընթերցանություն, խաղեր, յերգեցողություն, լույս են ընծայում պատի թերթ՝ «Անձնատուր չենք լինի»:

Վերջապես, մեկ անգամ ճամբարի վրա յերևաց սավառնակը, վորը ճեղքել անցել եր մառախուղի և փոթորկի միջով: Չելյուսկինցիների առաջին խումբն ազատված է:

Բայց մառախուղն ու փոթորիկը սաստկանում են: Ստիպված են դարձյալ սպասել:

Մի ամբողջ ամիս դեռ շարունակվում է համառ կռիվը սառույցների դեմ լողացող ճամբարում:

Ամբողջ Խորհրդային Միությունը լրագրների միջոցով, լարված հետևում է թե ինչ է կատարվում հեռավոր հյուսիս-արևելքում: Բոլորն՝ անհամբեր սպասում եյին պարզ ու խաղաղ որերի Զուկոտյան ծովում:

Վերջապես, ապրիլի սկզբին գալիս են այդպիսի որերը: Սավառնակները մեկը մյուսի հետևից իջնում են սառույցների վրա և տանում չելյուսկինցիներին: Ապրիլի 13-ին թռչում են վերջին մարդիկ: Բոլորն ել ազատված են:

Ուրախությամբ ու հպարտությամբ դիմավորում է չելյուսկինցիներին ու նրանց ազատող հերոսներին ամբողջ յերկիրը:

«Չելյուսկին» շոգենավի խորտակվելը չկանդնեցրեց Հյուսիսային ծովային ճանապարհի հետազոտությունը: Հինգ ամիս հետո «Լիտկե» սառցահատը Հյուսիսային սառուցյալ ովկիանոսով անցավ այդ ծովային ճանապարհը՝ Բերինգյան նեղուցից մինչև Մուրմանսկ:

Քարտեզի վրա ցույց տվեք «Չելյուսկինի» խորտակման տեղը և «Լիտկեյի» ճանապարհը Վլադիվոստոկից մինչև Մուրմանսկ:

ԲԵՎԵՌԱՅԻՆ ԿԱՅԱՆՈՒՄ

Ծանր են բևեռային կայաններում ձմեռողների կյանքի պայմանները: Բայց նրանք լավ են հասկանում, թե վորքան մեծ նշանակություն ունի բևեռային ծովերի հետազոտությունը. արիաբար տանում են կյանքի բոլոր դժվարությունները բևեռային սառույցների մեջ, և բևեռային դիշերվա խավարի մեջ բոլոր աշխատանքները կատարում են հարվածային կարգով:

Ահա թե ռադիոյով ի՞նչ է պատմում Ֆրանց Հոֆ-



Նկ. 13. Բեվեռային կայան

սեփի յերկրի բևեռային կայանի կյանքի մասին այդ կայանում ձմեռողներից մեկը:

«Լսեցեք, լսեցեք: Խոսում է Ֆրանց Հոֆսեֆի Յեր-

կիրը: Այս բոպեյիս բևեռային գիշեր է: Արդեն յերկուամիս է, ինչ տևում է նա: Տունը շրջապատված է հրակայական ձյունակույտերով: Ձյունը ծածկում է դռներն ու պատուհանները: Ամեն որ ստիպված ենք մաքրել այդ ձյունը, վորպեսզի նրանք բացվեն: Մեկ-մեկ այնպիսի քամի յե բարձրանում, վոր սառցնող ցուրտը թափանցում է տան բոլոր անկյունները:

Ձյունի մեջ բացված ստիճաններով, լապտերը ձեռքներիս բարձրանում ենք ձյունակույտի գլուխը վորպեսզի այնտեղից իջնենք պահեստը վառելիք բերելու համար:

Ինչ յեղանակ եկ լինի, կայանի աշխատանքները կանգ չեն առնում: Դիտողն իր ժամանակին, փոքրիկ լապտերը ձեռքին, համարյա աննկատելի բևեռային գիշերվա խավարի մեջ, ուղևորվում է յեղանակի դիտողությունների համար պատրաստած հրապարակը: Մի ուրիշ դիտող նույնպիսի լապտերով յուրաքանչյուր ժամը մեկ անգամ գնում է սառցի վրա հաստատված գործիքի մոտ, վորով չափվում է մակնթացությունը և տեղատրվությունը:

Յուրաքանչյուր 15 բոպեն մեկ դուրս է գալիս հերթապահը դիտելու բևեռափայլը:

Աշխատանքը յեռում է և տան մեջ: Լաբորատորիայի մեջ լսվում է ժամացույցի և ինքնագիր գործիքի ուրախ չրխկչրխկոցը:

Միջանցքում պատրաստում են ճանապարհորդական նավակներ, ծռում են սահնակի հիմնաձողեր, մչակում են գաղանի մորթիներ: Խոհանոցում կաթսաներով աղմկում է խոհարարը:

Ընթրիքից հետո ռադիոյով լսում ենք յերեկոյան լրագրի և համերգի հաղորդում, խաղում ենք չամատ, շաշկի, կարդում ենք գրքեր:

Առաջադրություն: ԽՍՀՄ-ի վարչական քարտեղի վրա գտեք թե վոր կղզիների վրա յեն գտնվում գլխավոր ռադիոկայանները:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՂԱՆԱԿԻ ՎՐԱ

Գիտական հետազոտություններն ապացուցում են, վոր Հյուսիսային բևեռային շրջանի յեղանակը մեծ ազդեցություն ունի մեր յեղանակի վրա: Հյուսիսային բևեռային շրջանը մի հսկայական սառցարան է, վորտեղից դեպի մեզ փչում են ցուրտ քամիներ: Վորքան շատ սառույցներ են կուտակվում Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում, այնքան ավելի ցուրտ է լինում մեզ մոտ:

Բևեռային շրջանում ամեն տեղ նույն կլիման չե: Ինչպես գիտենք, սառցապատ ովկիանոսի մեջ գտնվող ջրի տաք շերտը կախված է Գոլֆշտրոմ տաք հոսանքից: Յեթե չլիներ այդ հոսանքը, Յեվրոպայի հյուսիսը բռնված կլիներ սառույցներով, դաժան սառնամանիքը կպատեր բոլոր կենդանի եակներին: Տաք հոսանքի ջերմաստիճանի մեջ տեղի ունեցող ամեն մի փոփոխություն անդրադառնում է մեր յեղանակի վրա:

Յեղանակը ճիշտ դուշակելու համար, մենք պետք է լավ իմանանք թե ինչպես է փոխվում յեղանակը Հյուսիսային Բևեռային գոտում, ինչպես են շարժվում սառույցները Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում:

Վարժություն. Կոնտուրային քարտեղի վրա Միության Բևեռային զոնայի շուրջը գծ քաշեցեք: Գրեցեք բևեռային գոտուն ձեզ հայտնի ծովերի, կղզիների և թերակղզիների անունները:

Գծեցեք Լիտկե սառցահատի անցած Հյուսիսային ծովային ճանապարհը:

Աշխատանք արտադասյան ժամանակ. Բացիկներից, նկարներից, լրագրերի և ամսագրերի կտրվածքներից կազմեցեք «Լրոմ՝ ԽՍՀՄ-ի բևեռային գոտին»:

2. ՏՈՒՆԴՐԱՆԵՐԻ ԳՈՏԻ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ափերով ամբողջ խորհրդային Միության յերկարությամբ ձգվում է տունդրան:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա գտեք տունդրայի գոտին:

ՏՈՒՆԴՐԱՅՈՎ ՁՄԵՌԸ

Ցեղջերուները մեզ արագորեն տանում էին տունդրայով: Մեր շուրջը փռվում էր ձյունապատ անսահման հարթություն: Նա փախչում էր դեպի հետ, ամայի, միապաղաղ: Ամեն ինչ սպիտակ էր: Մեր շուրջը մի բիծ անգամ չէր նշմարվում:

Նկ. 14. Ձմրանը տունդրայում

Սուր, սառը քամին շունչներս կտրում էր և ձյունի փոշին ածում մեզ վրա:

Ձմեռային կարճ ցերեկը կամ ավելի ճիշտ ձմեռային աղջամուղջն արագ անցավ: Գիշերը մոտենում էր: Մը-շուշը խտանում էր:

Քամին մի ակնթարթ դադարեց, բայց հետո սկսեց մռնչալ նոր ուժով:

Հանկարծ ձյունի հսկայական զանգվածներ թափվեցին մեզ վրա: Ձյունե մրրիկը սպիտակ միապաղաղ շերտով պատվում էր մեր շուրջը: Մի բոպեյում գոյացան հսկայական ձյունակույտեր: Սահնակները մերթ ծանրացած դանդաղորեն բարձրանում էին ձյունաթմբի գլուխը, մերթ արագորեն ցած սահում: Ձյունե մրրիկը տևեց մի քանի ժամ, բոլորովին չթուլանալով:

Մենք մի քանի անգամ կանգ առանք յեղջերուներին հանգստացնելու համար: Վերջապես նրանք բոլորովին ուժասպառ յեղան և կանգ առան:

Մենք սահնակներից հանեցինք մորթիներ, պատրաստեցինք վրանի նման մի բան: Մինչդեռ մենք զբաղված էինք, ձյունը մեզ բոլորովին ծածկեց:

Մենք թաղվեցինք ձյունի տակ, կտրվելով ամբողջ աշխարհից:

Ձյունը ծածկեց մեզ, ձյան շերտը բարձրանում էր վեր ու վեր:

Մոտ 4 ժամ մնացինք ձյունի տակ պառկած:

Ցերը ձյունաթմբի տակից դուրս յեկանք, մնացինք զարմացած: Կարծես ձյունի մրրիկ բոլորովին չէր եղել: Մեր շուրջը հեղեղված էր բևեռային շողշողուն լույսով: Ձյունի հարթությունը կայծին էր տալիս և ծիածանի բոլոր գույներով փայլփլում:

Մենք յեղջերուները լծեցինք և առաջ գնացինք: Ցեղջերուները յերկար հանգստից հետո կրկին սկսեցին վազել արագ և հավասար քայլով:

Սկսեց լուսանալ: Շուտով յերևացին յերկու վրան (չում): Սրա շուրջն այստեղ-այնտեղ թափառում էին յեղջերուներ, վորոնք կճղակներով ձյունը փորում էին և արածում քոսը: Վրանի մոտ կանգնած էին յնած սահնակներ:

Վերջապես, մենք յեկանք մի բնակարան և կարող էինք հանգստանալ:

ՏՈՒՆԴՐԱՅՈՎ ԱՄԱՌԸ

Զորս ամիս հետո մենք նույն ճանապարհով հետ եկինք դառնում: Ամառ էր: Տունդրան չէր կարելի ճանա-

չել։ Նա այժմ ամբողջապես ծածկված եր կանաչ ու գորշ մամուռներով, մոխրագույն քոսերով (յեղջերվի մամուռ)։ Մամուռի միջից կարմրին եյին տալիս լոռամրգի պտուղները, նայում եյին ճախնամորու թփերը, կապույտ հապալասները։ Տեղ-տեղ աչքի եյին ընկնում անմոռուկների, բևեռային կակաչների և դեղին ակոնիտոնի ծաղիկների վառ բծերը։ Ցերբեմն եվ յերևում եյին զանազան կեչիներ և ուռենիներ։

Վոր կողմն եվ նայում ենք, ամենուրեք մեր առաջ փայլում են անհամար լճեր։ Բարձր տեղից նրանք կապույտ, փայլուն հայելիների եյին նմանվում։



Նկ. 15. Ամրանը տունդրայում

Արևն ամենևին մայր չեր մտնում։ Տունդրայում կյանքն ամբողջ որը յեռում եր։ Միլիոնավոր սագեր, բադեր, կարապներ և ուրիշ թռչուններ ծածկում եյին լճերը և թռչում եյին ողում։ Դիշեր ցերեկ լճերի վրա աղմկում եյին թռչունները։

Մենք հանդստանում եյինք լճի ափին։ Այստեղ մի փոքրիկ բլրի վրա եյին նենեցների վրանները։ Նենեցներն ամբողջ որը վորսում եյին թռչուններ, բռնում եյին ձկներ, հետո նրանց ծխահարում, չորացնում և ձմեռվա համար պաշար պատրաստում։

Ամառային արեգակը լուսավորում եր և տաքացնում։ Մարդկանց և յեղջերուների համար առատ սնունդ կար։ Բայց մոծակները թունավորում եյին նրանց կյանքը։ Նրանք մեծ խմբերով թռչում եյին ողում մչուշի նման շրջապատելով ամեն մի կենդանի եակ։ Նրանք այնքան շատ եյին, վոր մարդիկ հազիվ եյին կարողանում շնչել։ Յեղջերուների հոտերը խելագարի պես վազում եյին բաց տեղեր, վորտեղ մոծակ քիչ և լինում, վորովհետև բաց տեղերում փչում է քամի և քշում մոծակներին։

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՏՈՒՆԴՐԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ։ ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա գտեք տունդրայի գոտին։

Համարյա ամբողջ տարածությունը, վոր բռնված է տունդրայով, ներկված է կանաչ գույնով։ Այդ նշանակում է, վոր տունդրայի մակերևույթը հարթ է։

Մի քանի տեղերում տունդրայում բլուրներ կան։ Պատահում է և լեռնոտ տունդրա։

Դիտեցեք քարտեզը և ցույց տվեք այն տեղերը, վորտեղ լեռները կտրում են տունդրան։

Կլիման։ Տունդրայի համարյա ամբողջ գոտին գտնվում է բևեռային շրջանից հյուսիս, վորտեղ արեգակը ձմեռը մի քանի որ և նույնիսկ մի քանի ամիս չուրուանակ քոյորովին չի յերևում յերկնակամարի վրա։ Տունդրայի ափերը վողողում են ցուրտ ծովեր, վորոնց մեջ ամառվա ընթացքում անդամ լողում են մեծ քանակությամբ սառույցներ։ Այդ պատճառով եվ տունդրայի կլիման խիստ է։ Ձմեռն այստեղ տևում է 8—9 ամիս։ Հաճախ լինում են սոսկալի սառնամանիքներ և փոթորիկ. հաճախ փչում են ցուրտ և չոր քամիներ։ Ձյունը քիչ է գալիս, և դետինը սառչում է բավական հաստ շերտով։

Ամառը տունդրայում կարճատև է: Արևն որեր և ամիսներ շարունակ մայր չի մտնում: Բայց նա կեսորին անգամ շատ չի բարձրանում և լեռկիրը լիլ է տաքացնում: Այդ պատճառով էլ տունդրայում 50—100 սանտիմետր խորության մեջ գտնվում է հավերժական սառածության շերտ:

Տունդրայի գետերն ու լճերը: Հավերժական սառածության շերտը թույլ չի տալիս, որ հալված ձյունի ջրերն անցնեն գետնի խորքերը: Այդ պատճառով տունդրան հարուստ է լճերով: Փիլ չեն և ջրառատ գետերը, որոնք կտրում են տունդրան: Այդ գետերի մեծ մասն սկսվում և հեռու հարավում: Տունդրայում նրանք հոսում են փոքր տարածության վրա և թափվում են բևեռային ծովերը:

ԽՍՀՄ–ի ֆիզիկական քարտեզի վրա գտեք հետևյալ գետերի գետաբերանները՝ Պեչորա, Ոբ, Յենիսեյ, Լենա:

Բուսականությունը: Տունդրայի բուսականությունը հարուստ չէ: Ցածրադիր տեղերում աճում են մամուռներ, բարձրադիր տեղերում՝ քոսեր: Քոսերից ամենից հաճախ պատահում է «յագելը» (յեղջերվի մամուռ): Ցերբեմն պատահում են գետնի վրա փռվող մանր ծառեր՝ գաճաճ կեչի, ուռի, սոճի: Մամուռների մեջ շատ կան հատապտուղ բույսեր՝ լոռամրգի, ճանչամորի, կապույտ հապալաս, հավամրգի:

Միայն ցուրտ քամիներից պաշտպանված տեղերում աճում են խոտեր, գուլնգզուլն, վառ ծաղիկներով:

Տունդրան անտառազուրկ տարածություն է, ծածկված մամուռով և քոսերով:

Տունդրայի կենդանական բնակչությունը շատ բազմազան չէ, բայց բազմաթիվ է:

Բներում ապրում են բևեռային անթիվ մկներ, որոնք կերակրվում են քոսերով և տունդրայի ուրիշ բույսերով:

Բազմաթիվ լճերի ափերը ծածկված են չվող թռչուններով՝ բադերով, սագերով, կարապներով: Այստեղ

նրանք գտնում են առատ սնունդ՝ ջրային բույսեր, մանր ձկներ և ջրային ուրիշ կենդանիներ: Գետերում և լճերում բազմաթիվ ձկներ կան:

Նկ. 16. Բևեռային աղվես. Նկ. 17. Բևեռային բու.

Տունդրայում շատ կան նաև բևեռային աղվեսներ (песец), և բևեռային բվեր, որոնք կերակրվում են մկներով և չվող թռչուններով: Պատահում են հաճախ և գայլեր: Ամառը տունդրայի ողջույնվում է մոծակների բզզոցով: Նրանք ամպերի պես խիտ հետապնդում են ամեն մի կենդանի եակի:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տունդրան յերկու անգամ ավելի մեծ տեղ է բռնում, քան Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան միասին վերցրած: Այս հսկայական տարածության վրա շատ նոսր է բնակչությունը:

Տունդրայում ապրում են հետևյալ ժողովուրդները՝ նենեցները, լոպարները, չուկչաները, կամչադալները: Ռուսներն ապրում են տունդրայում գտնվող սակավաթիվ քաղաքներում և գետափերին:

Քարտեզի վրա ցույց տվեք այն տեղերը, որտեղ ապրում են այդ ժողովուրդները:

Համարյա այդ բոլոր ժողովուրդները զբաղվում են վորսորդությամբ, ձկնորսությամբ և բազմացնում են յեղջերուների հոտեր: Համարյա բոլորն էլ ապրում են

վոչ թե քաղաքներում ու գյուղերում, այլ քոչում են տեղից-տեղ, վորոնելով սնունդ թե՛ իրենց և թե՛ յեղջերուների համար:

Տունդրայի վաչկատուն բնակչության կյանքը մինչև վերջին ժամանակներս մեծ կախում ուներ նրան շրջապատող դաժան բնությունից:

Եթե շրջակայքում առատ կեր կա յեղջերուների համար, վորսը առատ է, տունդրայի բնակիչն ել լավ է ապրում: Բայց ահա դեռինը սառույցի բարակ շերտով ծածկվեց (նկ. 11), յեղջերուն այլևս կեր չունի. նա նիհարում է և սատկում: Կաղանները հեռանում են ուրիշ տեղ և վորսը վերանում է: Նենեցի ապրուստը դժվարանում է. տարածվում են սովը, հիվանդությունները և աղքատությունը:

Տունդրայի բնակիչները դեռ տգետ են և սնահավատ: Տունդրայի բնակիչների մեջ ել կան կուլակներ, վորոնք ոգտագործում են ամեն մի առիթ, վորպեսզի տարկացնեն չքավորներին և իրենց համար աշխատեցնեն: Կան և տերտերներ (շամաններ), վորոնք հիմարացնում և խաբում են վաչկատուն բնակիչներին:

Խորհրդային իշխանությունը համառ պայքար է տանում տունդրայի ժողովուրդների կյանքը վերակառուցելու համար:

ՆԵՆԵՑՆԵՐ

Նենեցները— յեղջերվապահներ են: Նրանց ամբողջ կյանքը յեղջերուների հետ է կապված: Ամբողջ տարին նրանք ապրում են վրաններում, վորոնք ծածկված են յեղջերվի մորթով: Քնում են յեղջերվի մորթու վրա, կերակրվում են ձկներով և յեղջերվի մսով, խմում են յեղջերվի արյունը, յեղջերվի մորթուց շոր են կարում (նկ. 18):

Յեղջերուները կերակրվում են մոխրագույն քոսերով— յագելով», վորով ծածկված են տունդրայի ընդարձակ տարածություններ: Ցերբ յեղջերուներն ուտում, վերջացնում են յագելը, այն ժամանակ նենեցները քոչում են նոր արոտատեղեր:



Նկ. 18. Նենեցները վերադարձել են ֆակտորիայից.

Նենեցների համար մեծ նշանակություն ունի աղվամազ և ծովային գազանի վորսը: Խփում են բևեռային աղվեսներ, գայլեր, արջեր, ծովացուլեր և փոկեր: Աղվամազ գազանի վորսը սկսվում է հենց ձմռան սկզբից:

Ամառը զբաղվում են ծովային գազանի վորսով, ձրկնորսությամբ, թռչնորսությամբ և ձվեր հավաքելով:

Ձմեռը նենեցները քոչում են դեպի հարավ, ավելի մոտ անտառներին, իսկ ամառը շարժվում են դեպի բևեռային ծովերի ափերը:

Սառնամանիքի, փոթորիկի, մառախուղի և բևեռային գիշերվա խավարի մեջ տունդրայի ձյունապատ լուռ տարածությունների, անծայրածիր հարթության վրա թափառում են նենեցները:

Հենց վոր սառած դեռինը հալվում է, բևեռային ծովերի ափերը կենդանանում են, նենեցներն ամեն ամառ

գալիս են այստեղ: Ծովային քամին յեղջերուների վրայից քշում, հեռացնում է մոծակներին ու բոռերին:

Բայց բևեռային կարճատև ամառը շուտ է անցնում: Ծովափերը ծածկվում են խիստ մառախուղով: Զյունն ավելի ու ավելի հաճախ է գալիս, սուլում և վոռնում է քամին: Թռչունները չվում են, գազանները հեռանում են, մարդիկ ել քոչում են տունդրայի խորքերը, ավելի մոտ անտառներին:

ՉՈՒԿՉԱՆԵՐ

Չուկչաներն ապրում են Չուկոտյան թերակղզում, Ասիայի հեռավոր հյուսիս-արևելքում:

ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա գտեք Չուկոտյան թերակղզին:

Չուկչաների մի մասը— «ծովափնյաները»— ապրում են ծովափին և զբաղվում են ծովային վորսով: Մյուս մասը—«յեղջերվական» չուկչաները— նենեցների նման յեղջերվապահությամբ են զբաղվում և իրենց յեղջերուների հետ քոչում են չուկոտյան տունդրայում:

Ծովափնյա չուկչաների գլխավոր վորսը ներպան է (փոկը), վորի մորթուց չուկչաները շոր են կարում, միսն ուտում են, իսկ ճարպը գործ են ածում վորպես վառելանյութ և լուսավորելու համար:

Վորսի հաջողությունից է կախված ծովափնյա չուկչաների ամբողջ կյանքը: Ցերբ ծովի վրա փոթորիկը յերկարում է— վորսն ել յերկար ժամանակով դադարում է: Չուկչաներն, այդ ժամանակ, սպառելով ունեցած պաշարը, նստում են բնակարաններում առանց սնունդի և առանց ջերմանալու:

Ծովափնյա չուկչաների գյուղերը ցրված են ծովափին: Նրանք բաղկացած են 20—30 վրանից:

Չուկոտյան վրանը մեծ է և բաղկացած է մի քանի բաժանմունքներից: Ներքին բաժանմունքի մեջ կա ոջախ, բացի այդ կան լապտերներ, վորոնց մեջ այրվում է փոկի ճարպը: Ձմեռը, նույնիսկ 45°-ի սառնամանիքներին վրանի մեջ շատ տաք է լինում: Միայն թե փոկի ճարպն անպակաս լինի:

Շներն անհրաժեշտ կենդանիներ են ծովափնյա չուկչաների համար: Նրանք փոխարինում են յեղջերուներին: Ցերբ չուկչան ցանկանում է ձմեռը գնալ ծովը վորսի կամ ապրանքներ գնել, կամ գազան բռնելու համար թակարդ լարել, նա շները լծում է սահնակին և հաջող շների վոհմակը սկսում է վազել առանց սանձի, ղեկավարվելով չուկչայի ձայնով միայն:

ԻՆՉՊԵՍ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ՏՈՒՆԴՐԱՅԻ ՎԱՅԿԱՏՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Ցարի ժամանակ իրավազուրկ՝ տունդրայի վայկատուն ժողովուրդները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դարձան Խորհրդային Միության հավասարազոր քաղաքացիներ:

Խորհրդային որենքներով նրանք ունեն իրենց տունդրային խորհուրդները: Փոքչում է տունդրայի բնակչությունը, դրա հետ քոչում է տունդրայի խորհրդային իշխանությունը— ամառը դեպի հյուսիս, ծովափը, իսկ ձմեռը, սառնամանիքներին՝ դեպի հարավ, անտառների հովանավորության տակ ձմեռելու համար:

Տունդրային խորհուրդ: Մի փոքրիկ ամառային տնակում, վոր բաղկացած է մի քանի վորսարդյունաբերական խրճիթներից, տեղավորվել է տունդրային խորհուրդը:

Ծայրի խրճիթի վրա ծածանվում է կարմիր դրոշակ: Դռան դիմաց կպցրած է մի տախտակ «խորհուրդ» մակագրությամբ:

Փոքրիկ խրճիթը ծայրեծայր լիքն է մարդկանցով: Խորհրդի անդամները՝ նենեցները նստած են նստարան-

ներին, հատակին, թախտերին: Նիստը բացվում է քննության են առնում վորսի հարցը:

— Մեզ թակարդներ են պետք: Հրացան— ավելացնում է մի ուրիշը: Խրճիթներ չունենք.. Զմեռն արդյունաբերողները տաքանալու, քնելու տեղ չունեն: Քնում ենք ձյունի մեջ:

Քննում են վորսի հարցը և վորոշում կայացնում՝ 9 կետում խրճիթներ շինել և խնդրել կոոպերացիային, վոր բերի թակարդներ և հրացաններ:

Քննում են յեղջերվական տնտեսության հարցը: Խոսում են այն մասին, թե ինչպես պետք է դադարեցնել յեղջերուների հիվանդությունները ու կոտորվելը, ինչպես արոտավայրերը բաշխել արդարացի կերպով:

— Մենք, չքավորներս, յեղջերուներ չունենք, ասում է նենեց Նիկոնը, մենք վորսում ենք աղվես և ծովային գազան: Վո՞ր տեղ ճարենք յեղջերվի միս: Մենք խնդրում ենք հարուստ յեղջերվապահին: Նա մեզ միս և տալիս, բայց դրա փոխարեն աղվես և ուզում: Մենք շատ աղվես ենք տալիս: Թող Պետառը մեզ միս տա: Այն ժամանակ չքավոր նենեցն աղվեսը հարուստին չի տա:

Ցերիտասարդ նենեց Լորագովը պատմում է, վոր ամենամոտիկ շրջանում մի նենեցական կոլեկտիվ տնտեսություն և կազմակերպվել և վոր այնտեղ նենեցները ավելի լավ են ապրում և բոլորն ել յեղջերվի միս ունեն:

Այս խոսքի վրա բոլորն ել սկսում են միասին խոսել: Վեճ է բացվում: Վեճը տաքանում է: Մի մասը կոշմնակից է կոլեկտիվ տնտեսություն կազմակերպելուն, մյուսը՝ դեմ է: Այս տաք վեճը տևում է 2 ժամ: Վերջապես հետևյալ վորոշումն են կայացնում՝ մի քանի մարդ ուղարկեն տեսնեն թե նենեց կոլտնտեսություններն ինչպես են ապրում. յեթե նրանք լավ են ապրում, ապա այստեղ ևս կոլեկտիվ տնտեսություն կազմակերպել:

Նենեցները ցրվում են. նրանցից ամեն մեկը մտածում է՝ այժմ, խորհրդային իշխանության որով ապրուստն ավելի հեշտացել է:

ԳԻՇԱՏԻՉ-ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՎԱՐԵՆ ՖԱԿՏՈՐԻԱՆԵՐ

Ցարական իշխանության որով տունդրայի ժողովուրդները տգետ եյին և անպաշտպան:

Տունդրա յեկող վաճառականները հեշտությամբ խարում եյին տունդրայի անսահման տարածության ների մեջ մենակ ընկած քոչվորին: Այդ վաճառականները բերում եյին վոչ միայն տունդրայի բնակիչների համար անհրաժեշտ ապրանքներ— վորսորդական պարագաներ, ալյուր, աղ, լուցկի, այլև ողի: Նրանք հարբեցնում եյին տունդրայի բնակիչներին, չնչին գներով գնում եյին յեղջերուների հոտեր և թանգարժեք մորթի ու հարստացած վերադառնում:

Իսկ մութ, անոգնական քոչվորները տարեցտարի աղքատանում եյին:

Խորհրդային իշխանությունը քշեց տունդրայից գիշատիչ վաճառականներին: Ամբողջ տունդրայում բացվեցին բազմաթիվ պետական առևտրական գրասենյակներ— ֆակտորիաներ: Այստեղ գնում են մորթիներ թե փողով և թե ապրանքներով:

Պետառի ֆակտորիայում: Նենեցների ամառային իջևանավայրից վոչ հեռու տեղավորվել է Պետառի ֆակտորիան:

Ցերկու մեծ ամբար լցված են զանազան ապրանքներով: Մեկի մեջ պարկեր են լցված ալյուրով, ձավարով և աղով: Մյուսի մեջ՝ վառոդ, մանրագնդակ, կապար, ցուղ, թեյ, շաքար, կանֆետներ: Ամաններ ել շատ կան, կան շորեր, գրքեր, պլակատներ:

Ֆակտորիայում մեծ կենդանություն է: Մեկը մյուսի հետևից գալիս են մորթեղեն հանձնողներ: Վորսն առատ ել— ապրանքը բերում են հա բերում: Սեղանների, պատուհանների, ուղղակի հատակի վրա— ամեն տեղ թափված են բևեռային աղվեսի մորթիներ:

Աշխատողներն ուժասպառ են լինում: Վոմանք նստում, գնում են մորթին, վոմանք հաշվում են, վոմանք ել տալիս են մթերքներ ու ապրանքներ:

Մորթեղենը հանձնելուց հետո, նենեցները թեյ են խմում և սպասում, վոր հաշիվներն ստանան:

Ստանալով բոլոր անհրաժեշտ ապրանքներն ու մրթերքները և սահնակի վրա տեղավորելով, նենեցները տուն են վերադառնում:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Տունդրայում կուլտուրական մեծ աշխատանք է տարվում քոչվորների հետ այն տեղերում, վորտեղ նրանք ձմեռում են: Այնտեղ հիմնում են կուլտբազաներ. նրանցից յուրաքանչյուրի մեջ կառուցում են դպրոց, հիվանդանոց, ռադիոկայան, սոցիալիստական կուլտուրայի տուն, կոոպերատիվ: Տունդրայի հարյուրավոր բնակիչներ վոտքով, յեղջերուների կամ շների սահնակներով գալիս են կուլտբազաները:

Կազմակերպում են նաև շարժական վրաններ: Յեղջերուներով, շներով քոչում են տեղից տեղ ուսուցիչը և բուժակը, իսկ նրանց հետ և կինոն, ռադիոն, դրագարանը, դեղատունը: Շարժական վրանները թափանցում են տունդրայի ամենախուլ անկյունները, տեղափոխվում են տեղից տեղ և տարածում խորհրդային կուլտուրան:

Տունդրայի համարյա բոլոր յերեխաները սովորում են դպրոցներում: Մինչև ամենավերջին ժամանակները տունդրայի քոչվոր ժողովուրդները սեփական գիր չունեին: Այժմ մշակված է այբուբեն և հրատարակված են այբենարաններ նենեցերեն և չուկոտերեն լեզուներով:

Մեծ նշանակություն ունեն այն դպրոցները, վորոնց կից կան հանրակացարաններ: Նրանք քոչվորների յերեխաներին սովորեցնում են կուլտուրական կյանքի:

ԻՆՉՊԵՍ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ՏՈՒՆԴՐԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՂՋԵՐՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Յեղջերվապահությունը տունդրայի տնտեսության հիմնական ճյուղն է:

Յեղջերուն չի սպասարկում միայն քոչվորին: Նրա միսը գնում է պահածոների գործարան, կաշին կարևոր հումք է արդյունաբերության համար: Մինչդեռ յեղջերուները սաստիկ տառապում են տունդրայի դաժան բնությունից:

Ամրողջ հոտեր վոչնչանում են սառուցից ու սաստիկ ձնարուքերից: Նրանք, մանավանդ ջահել յեղջերուները, հաճախ բևեռային գիշերները զոհ են գնում վայրենի գազաններին, տառապում են խայթող միջատներից՝ բոռերից, մժեղներից, մոծակներից, կոտորվում են համաճարակից, տարավոխիկ հիվանդություններից:

Խորհրդային իշխանությունն այժմ ամեն միջոց գործ է դնում, վորպեսզի բարձրացնի տունդրայի յեղջերվապահությունը: Հիմնվել է յեղջերվաբուծական կայան, վորտեղ մասնագետներն ուսումնասիրում են յեղջերվին և նրա հիվանդությունները: Հիմնում են յեղջերվապահական ցուցադրական խորհրդային տնտեսություններ:



Նկ. 19. Յեղջերվապահական խորհտնտեսություն

Բացվել է յեղջերվապահական տեխնիկում:

Կազմակերպվում են յեղջերվապահական էլեկտրիֆ. տնտեսություններ:

ՄՈՒՇՏԱԿԱՎՈՐ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՎՈՐՍԸ

Տունդրայում շատ մեծ նշանակություն ունի մուշտակավոր գազանների, մանավանդ, բևեռային աղվեսների վորսը:

Շատ յերկրներ մորթեղենի մեծ կարիք ունեն: Նրանք մեր մորթիներն ուրախությամբ են դնում: Մորթեղենից Խորհրդային Միությունը ստանում է վոսկի, վորով մենք արտասահմանում դնում ենք մի քանի տեսակ մեքենաներ, մեր գործարանների համար: Մենք պետք է աշխատենք զարգացնել մուշտակավոր գազանների վորսորդությունը և մեծացնենք մորթու արտահանումն ուրիշ յերկրներ:

Տունդրայում կազմակերպվում են վորսորդական արտելներ:

Հիմնվում են գազանային ֆերմաներ, վորտեղ տունդրայի ավելի արժեքավոր գազանները բազմացվում են, ինչպես ընտանի կենդանիներ:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տունդրայի յերկրային ընդերքը դեռ քիչ է ուսումնասիրված: Բայց արդեն այժմ էլ պարզ է, վոր տունդրան ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության համար շատ կարևոր ոգտակար հանածոներ կարող է տալ: Ամենից լավ ուսումնասիրված են Կոլա թերակղզու տունդրաների ոգտակար հանածոները:

Անտառային ճահիճների և լճերի մեջ բարձրանում են այնքան էլ վոչ բարձր Խիբինյան լեռները: Ներքևում աճում է սոճու անտառ: Ավելի բարձր՝ յեղևնի և կեչի: Իսկ հետո լեռնային տունդրայի մամուռները և քոսերը:

Քարտեզի վրա ցույց տվեք Խիբինյան լեռները. նրանք գտնվում են Կոլա թերակղզում:

Ամայի և անմարդաբնակ եյին այս տեղերը մի քանի տարի առաջ: Գիտնականներն ամբողջ չորս տարի աշխատում եյին այստեղ: Նրանք հետազոտում եյին Խիբինյան լեռների հանածո հարստությունները: Շատ արժեքավոր ոգտակար հանածոներ գտան, նրանք մամուռներով ու քոսերով ծածկված վայրենի, անմարդաբնակ ժայռերի մեջ: Առանձնապես մեծ արժեք ունեցավ Խիբինյան ապատիտը, վորից շատ լավ պարարտանյութ է ստացվում հողի համար:

Անցավ մի քանի տարի և Խիբինյան վայրի տունդրան կենդանացավ: Ապատիտի հանքերում գիշեր ցերեկ աշխատանքը յեռում է: Բանվորների թիվը հազարների յե հասնում: Խուլ դղրդում եյին պայթյունները: Ղողանջում եյին շղթեշչակները: Աշխատում եյին հորատիչ մեքենաները:

Լեռների թեք լանջերի միջև, վճիտ լճի ափին նոր քաղաք դցվեց: Քաղաքն աճեց ընկ. Կիրովի անսասան եներգիայի և բոլշևիկյան անհողդողդ կամքի շնորհիվ և նրա անունով էլ կոչվեց՝ Կիրովսկ:

Քարտեզի վրա գտեք Կիրովսկ քաղաքը:



Նկ. 20. Կիրովսկ քաղաքը.

Կիրովսկ քաղաքի հիմնադրությունից ընդամենը հինգ տարի է անցել, բայց այնտեղ այժմ արդեն կան մի քանի գործարաններ, քարե շենքեր, մի քանի հիվանդանոցներ, դպրոցներ, ակումբներ, գրադարաններ և մեծ հնչուն կինո:

Կիրովսկի փողոցով անցնում են ավտոմոբիլներ ու ավտոբուսներ: Նրա մեջ ապրում է 30 հազարից ավելի մարդ: Քաղաքից քիչ հեռու շինված է էլեկտրական, որ էլեկտրական հոսանք է տալիս քաղաքին և հանքերին:

Այսպես փոխվեց Խիբինյան վայրենի տունդրան: Կանցնի մի քանի տարի և շինարարությունը կհասնի նաև տունդրայի ուրիշ շատ տեղերում:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տունդրայի բնակիչները հաճախ սովի են մատնվում: Նրանց կերակուրը միատեսակ եր և վատասողջ՝ ձուկ, յեղջերվի միս և ծովային գազանների միս: Վոչ հաց կար, վոչ բանջարեղեն: Միայն խորհրդային կոոպերացիան եր, որ սկսեց տունդրա ներմուծել, ալյուր, աղ: Նրանք չգիտեին թե ինչ բան է բանջարեղենը: Ձկային վոչ արտեր, վոչ բանջարանոցներ:

Մի՞թե սառած հողի, ճահիճի վրա կարող են հացահատիկներ աճել—այսպես եին մտածում բոլորը: Փորձեր կատարեցին և պարզվեց, որ կարող են: Այժմ կոլա թերակղզում հիմնված է մի փորձնական դյուղատնտեսական կայան, որտեղ աճեցնում են վոչ միայն կարտոֆիլ ու կաղամբ, այլև յեղած: Փորձակայանն ապացուցեց, որ տունդրայում կարելի է զբաղվել բանջարաուծությամբ, դյուղատնտեսությամբ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Նայեցեք քարտեղին: Ցերկաթուղին կտրում է տունդրան միայն արևմտյան մասում: Դա Մուրմանի յերկաթգիծն է:

Տունդրայում ել ուրիշ յերկաթուղի չկա:

Հաղորդակցությունը տունդրայի տարրեր կետերի միջև գլխավորապես յեղջերուներով ու շներով է կատարվում:

Տունդրայի համար կարևոր նշանակություն ունի գետային հաղորդակցությունը:

Բևեռային ծովերի ափին մի քանի խոշոր ծովային նավահանգիստներ կան: Դրանց վրայով մեր Միությունն առևտուր է անում զանազան պետությունների հետ:

Դրանցից կարևորներն են՝ Մուրմանսկը, Արխանգելսկը, Իզարկան: Մուրմանսկն ամենահարմարն է: Նա ամբողջ տարին չի սառչում, որովհետև նրա մոտով հոսում է տաք հոսանքը:

Վարժություն: Կոնտուրային քարտեզի վրա տունդրայի շուրջը մատիտով գծեցեք: Գրեցեք տունդրան կտրող գլխավոր գետերը: Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք թե վո՞ր տեղ են ապրում լոպարները, նենեցները, չուկչաները և կամչադալները:

Նշանակեցեք Կիրովսկը և հյուսիսային կարևոր նավահանգիստները՝ Մուրմանսկը, Արխանգելսկը:

Գտեք, թե վո՞ր կողմից և մտնում Բարենցի ծովը Գոլֆշտրոմ տաք հոսանքը:

Աշխատանք արտադասյան ժամանակ. Կազմեցեք մի ալբոմ «Տունդրայի գոտին» թեմայով:

3. ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏԻ

Տունդրայից հարավ ամբողջ ԽՍՀՄ-ի վրայով նրա արևմտյան սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը տարածվում են անտառներ:

Տունդրայի և անտառների միջև վոչ մի տեղ վորոշ սահման չկա: Տունդրան փոխվում է անտառների աստիճանաբար:

Սկզբում տունդրայում յերևում են առանձին վտիտ, ցածլիկ ծառեր չորացած գագաթներով: Դա անտառա-



Նկ. 21. Անտառատունդրա.

տունդրան է: Ավելի դեպի հարավ ծառերը դառնում են ավելի խոշոր, ավելի ուժեղ: Նրանց թիվը հետզհետե աճում է. վերջապես տունդրան անհետանում է և տեղի տալիս անտառների:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա գտնե՛ք անտառատունդրան:

Անտառները բռնում են շատ ավելի մեծ տարածություն, քան թե տունդրան: Տասնևութ այնպիսի պետություն, ինչպիսին Ֆրանսիան է, կարող էին տեղավորվել անտառների գոտում:

Այդ անտառների մեծ մասը բաղկացած է փշատերև ծառերից և կազմում է վայրենի, անանցանելի տայգա:

Այն անտառները, որոնք գտնվում են անտառային գոտու հարավ-արևմտյան մասում, բաղկացած են թե՛ փշատերև և թե՛ սաղարթավոր տեսակներից. դրա համար էլ նրանք կոչվում են խառն անտառներ:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա ցույց տվեք անտառատունդրան, տայգան և խառն անտառները:

ՏԱՅԳԱՅԻ ԳՈՏԻ

ՏԱՅԳԱՅԻ ՎՐԱ. ՑԵՎ. ՏԱՅԳԱՅԻ ՄԵՋ

Սավառնակը բարձրացավ Կրասնոյարսկ քաղաքից և Ցենիսեյ գետի վրայով թռավ դեպի հյուսիս:

Գտնե՛ք Ցենիսեյ գետի վրա Կրասնոյարսկ քաղաքը:

Ներքևում սևին եր տալիս փշատերև անտառը: Տայգան տարածվում եր դեպի ամեն կողմ—դեպի հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք:

Միայն գետի արծաթափայլ ժապավենն եր կտրում այդ անտառները, մերթ գալարվելով, մերթ ուղղվելով: Տեղ-տեղ գետի մոտ, սեղմված խիտ անտառների մեջ, պատսպարվել են գյուղեր. յերբեմն-յերբեմն ծխում ե-յին վայտի գործարանները:

Մոտ հազար կիլոմետր թռանք Ցենիսեյի վրայով և մեր շուրջը, որքան աչքներս կտրում եր, դեպի ամեն կողմ ձգվում եր անսահման տայգան:

Ցերը սավառնակն իջավ, յես մի նեղ հազիվ նկատելի արահետով մոտ տայգան: Հազիվ մի կիլոմետր չանցած, յես ընկա անանցանելի թավուտի մեջ:

Միապաղաղ պատի պես ամեն կողմից շրջապատեցին ինձ բրդոտ կեդրերը, բարձր յեղևինները և մայրիները:

Զնայելով, որ որն արևոտ եր, անտառի մեջ այնքան խավար եր, որ կարծես գիշերը վրա յե հասնում:

Ամեն տեղ կուտակված եյին արմատախիլ յեղած ծառերը, չոր-չոր փայտեր, քարակոշտեր և այս բոլորը պատած եյին մամուռով և քոսերով: Մեռելային լռություն եր:

Ցես վախեցա մոլորվել և չտապեցի դեպի սավառնակը:

ՏԱՅԳԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթը: Նայեցեք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզին: Տայգայի բռնած տարածության մեծ մասը



Նկ. 21. Անտառատունդրա.

տունդրան է: Ավելի դեպի հարավ ծառերը դառնում են ավելի խոշոր, ավելի ուժեղ: Նրանց թիվը հետզհետե աճում է. վերջապես տունդրան անհետանում է և տեղի տալիս անտառների:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա գտնել անտառատունդրան:

Անտառները բռնում են շատ ավելի մեծ տարածություն, քան թե տունդրան: Տասնևութ այնպիսի պետություն, ինչպիսին Ֆրանսիան է, կարող էին տեղավորվել անտառների գոտում:

Այդ անտառների մեծ մասը բաղկացած է փշատերև ծառերից և կազմում է վայրենի, անանցանելի տայգա:

Այն անտառները, որոնք գտնվում են անտառային գոտու հարավ-արևմտյան մասում, բաղկացած են թե փշատերև և թե սաղարթավոր տեսակներից. դրա համար էլ նրանք կոչվում են խառն անտառներ:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա ցույց տվեք անտառատունդրան, տայգան և խառն անտառները:

ՏԱՅԳԱՅԻ ԳՈՏԻ

ՏԱՅԳԱՅԻ ՎՐԱ ՑԵՎ ՏԱՅԳԱՅԻ ՄԵՋ

Սավառնակը բարձրացավ Կրասնոյարսկ քաղաքից և Ցենիսեյ գետի վրայով թռավ դեպի հյուսիս:

Գտնեք Ցենիսեյ գետի վրա Կրասնոյարսկ քաղաքը:

Ներքևում սևին եր տալիս փշատերև անտառը: Տայգան տարածվում եր դեպի ամեն կողմ—դեպի հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք:

Միայն գետի արծաթափայլ ժապավենն եր կտրում այդ անտառները, մերթ դալարվելով, մերթ ուղղվելով: Տեղ-տեղ գետի մոտ, սեղմված խիտ անտառների մեջ, պատսպարվել են գյուղեր. յերբեմն-յերբեմն ծխում էին վայրի գործարանները:

Մոտ հազար կիլոմետր թռանք Ցենիսեյի վրայով և մեր շուրջը, որքան աչքներս կտրում եր, դեպի ամեն կողմ ձգվում եր անսահման տայգան:

Ցերը սավառնակն իջավ, յես մի նեղ հազիվ նկատելի արահետով մտա տայգան: Հազիվ մի կիլոմետր չանցած, յես ընկա անանցանելի թավուտի մեջ:

Միապաղաղ պատի պես ամեն կողմից շրջապատեցին ինձ բրդոտ կեդրերը, բարձր յեղևինները և մայրիները:

Զնայելով, որ որն արևոտ եր, անտառի մեջ այնքան խավար եր, որ կարծես գիշերը վրա յե հասնում:

Ամեն տեղ կուտակված էին արմատախիլ յեղած ծառեր, չոր-չոր փայտեր, քարակոշտեր և այս բոլորը պատած էին մամուռով և քոսերով: Մեռելային լռություն եր:

Ցես վախեցա մոլորվել և չտապեցի դեպի սավառնակը:

ՏԱՅԳԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթը: Նայեցեք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզին: Տայգայի բռնած տարածության մեծ մասը

քարտեզի վրա ներկված է կանաչ գույնով— դա դաշտավայրեր են: Համարյա մեջտեղում այդ դաշտավայրերը կտրվում են Ուրալյան լեռներով: Ցենիսեյից սկսվում է Արևելյան-Սիբիրական բարձրավանդակը: Ջանգան ուղղությամբ նա կտրվում է լեռներով:

Կլիմա: Տայգայի գոտին զանվում է տունդրայից հարավ: Այդ պատճառով արեգակն այստեղ ավելի յե բարձրանում և ավելի յե տաքացնում, քան տունդրայում: Դեռևս հալվում է մեծ խորությամբ:

Ձմեռը տայգայում յերկարատև և ցուրտ է, բայց ավելի կարճ է քան թե տունդրայում (6—8 ամիս):

Տայգայի կլիման նրա տարբեր մասերում միատեսակ չէ: Տայգայի արևմտյան (յեվրոպական) մասում կլիման ավելի մեղմ է. տայգայի այս մասն ավելի մոտ է Ատլանտյան տաք ովկիանոսին: Տայգայի ասիական մասն ավելի դաժան կլիմա ունի: Ատլանտյան ովկիանոսի կողմից այստեղ չեն հասնում տաք և խոնավ քամիներ, իսկ հյուսիսային ափերը վողողվում են բևեռային ցուրտ ծովերով:

Ձմեռն այստեղ լինում են 40° և 50° սառնամանիքներ: Իսկ Վերխոյանսկ քաղաքում սառնամանիքները հասնում են մինչև 70°—սա ամենացուրտ տեղն է ամբողջ յերկրագնդի վրա («ցրտության բևեռ»): Այսպիսի սառնամանիքների ժամանակ սնդիկը պնդում է, յերկաթը դառնում է փխրուն, ծառերը ճայթյունով ճաքում են, թռչունները թռչելիս սառում են ու ընկնում գետին:

Քարտեզի վրա գտեք Վերխոյանսկ քաղաքը:

Գետեր: Տայգան կտրում են մեծ ու ջրառատ գետեր: Նրանք սկսվում են հեռավոր հարավում, մեծ մասամբ լեռներից, անցնում են տայգայի և տունդրայի միջով և թափվում բևեռային ցուրտ ծովերը: Գետերի հովիտներով տարածվում են հրաշալի վողողվող մարգագետիններ:

Քարտեզի վրա գտեք Հյուսիսային Դվինա, Պեչորա, Ոբ, Ցենիսեյ և Լենա գետերը:

Բուսականություն: Տայգայի տարբեր մասերում նրա մակերևույթը և կլիման միատեսակ չեն, միատեսակ չեն և բուսականությունը:

Յեվրոպական տայգան բաղկացած է սոճի և յեղևնի ծառերից, վորոնց հետ խառն աճում է նաև կեչին, կաղամախին:

Ասիական տայգայում, վորտեղ կլիման ավելի խիստ է, ուրիշ ծառեր են աճում, այն է՝ կեղը, խիժոտ փիճի, յեղևին:

Մութ է տայգան. նրա փչատերև խիտ ծառերի միջով քիչ լույս է թափանցում: Այստեղ միշտ կիսախավար է, թաց և խոնավ: Ցեղևնիների մութ ծածկոցի տակ լավ աճում են միայն մամուռներ, քոսեր և սոնկեր:

(Փչատերև անտառի մեջ հողը միշտ ծածկված է լինում թափված փուչ-տերևներով):

Շատ տեղ տայգան անանցանելի յե. ամենուրեք ընկած են ծառեր, կուտակված են քարակոշտեր, հաճախ պատահում են ճահիճներ:

Մռայլ է ու լուռ տայգան: Նրա մեջ չի լսվում թռչունների ուրախ ծլվլոցը: Կենդանիները հազվադեպ են պատահում. նրանք բոլորն աշխատում են հեռու մնալ տայգայի արահետներից: Միայն փոթորկի ժամանակ խուլ աղմուկը լցնում է տայգան, յերբեմն այդ աղմուկը փոխվում է վոռնոցի, կարծես վոռնում է կատաղած ու անհանգստացած գազանը:

Տայգան նոսրանում ու հետ է քաշվում միայն այնտեղ, վորտեղ հոսում են գետեր կամ տարածվում են մեծ ճահիճներ:

Հողեր: Տայգայում հողերն ծածկված են մոմուռի և թափված փուչ-տերևների խոնավ ծածկոցով: Այս ծածկոցը պահպանում է այն խոնավությունը, վորը հողի միջով ծծվում է դեպի ցած: Ջուրը հողից հեռացնում է սննդարար նյութերը: Այդ պատճառով տայգայում առաջանում են մոխրահողեր. նրանք սակավ արդավանդ

են— պարունակում են փոքր քանակությամբ սննդարար նյութեր:

Կենդանական աշխարհ: Տայգայի կենդանական աշխարհը հարուստ է ու բազմազան: Թռչուններից տայգայի մեջ մշտապես ապրում են՝ ցախաքլորը, մայրեհավը և սալամբը: Նրանք կերակրվում են տերևներով և հատապտուղներով, ձմեռը՝ սերմերով և բողբոջներով: Տայգայի մշտական բնակիչ է նաև կտցահարը. Իր սուր ճանկերով նա կպչում է ծառերի կեղևին, սուր կտուցով ծակում կեղևը և այնտեղից ճիճուներ հանում:

Անտառային խոշոր կենդանիներից այստեղ ապրում է իշայծյամը: Նա ամառը կերակրվում է խոտով, իսկ ձմեռը կրծոտում է թփերը և ծառերի ճյուղերը:

Հեշտությամբ ծառից ծառ է ցատկում սկյուռը: Նրան այդ բանում ոգնում է իր յերկար ու բրդոտ պոչը: Սկյուռը կերակրվում է փշատերև ծառերի սերմերով և բողբոջներով:

Տայգայում շատ գիշատիչներ կան: Գիշերները թռչուններին ու սկյուռներին հետևում են կզաքիսը, ժանտաքիսը, սամույրը: Համարյա առանց աղմուկի թռչում են բվերն ու բվեճները: Մանր կենդանիներին ու թռչուններին վորսում է աղվեսը: Ծառերի վրայից նույնիսկ խոշոր կենդանիների (իշայծյամների) վրա յե հարձակվում լուսանը:

Անտառի ծայրամասում ապրում են գայլերը: Ձմեռը նրանք վոհմակներ են կազմում և հարձակում գործում նույնիսկ շատ խոշոր կենդանիների վրա:

Թավ անտառի մեջ ապրում է մուգ դարչնագույն արջը: Նա կերակրվում է բույսերով, հատապտուղներով և կենդանիներով: Ձմեռն անց է կացնում վորջում կիսաքուն վիճակում:

Առաջադրություն: Ինչո՞վ է տարբերվում տայգայի կլիման տունդրայի կլիմայից: Ի՞նչ տարբերություն կա արևմտյան և արևելյան տայգայի կլիմայի մեջ: Ինչո՞վ է տարբերվում արևելյան տայգայի բուսականությունը արևմտյան տայգայի բուսականությունից: Ի՞նչ կենդանիներ են ապրում տայգայում և ինչո՞վ են նրանք տարբերվում տունդրայի կենդանիներից:

ՏԱՅԳԱՅԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Տայգայի գոտում ապրում են եվենկները (տունգուսները), յակուտները, կարելները, կոմի, ռուսները:

Եվենկներն զբաղվում են վորսորդությամբ, յեղջերվապահությամբ և ձկնորսությամբ:

Նստակյաց և կիսանստակյաց յակուտներն զբաղվում են յերկրագործությամբ, անասնապահությամբ և վորսորդությամբ:

Կարելները, կոմի և ռուսները նստակյաց են և զբաղվում են գյուղատնտեսությամբ և մուշտակավոր գազանների վորսով: Նրանք ապրում են գլխավորապես գետերի և յերկաթուղիների մոտ:

Գետերն ու գետակներն առաջ միակ ճանապարհներն եյին անտառի խորքերում: Գետերով մարդը թափանցում եր տայգայի մեջ, կացինն ու հրացանը ձեռքին: Գետակների ափերին, բարձրադիր թմբերի վրա, մուք անտառների մեջ մարդիկ հիմնում եյին գյուղեր, կտրատելով և այրելով շրջակայքի անտառները վարելահողերի համար:

Բնակավայրերն անտառի խորքերն են թափանցում այնտեղ, վորտեղ մարդիկ կազմակերպված հարձակում են գործում տայգայի վրա— դա անտառի և գանազան ոգտակար հանածոների շահագործման տեղերն են: Ներկայումս արդեն բավական շատ քաղաքներ կան տայգայում: Համարյա բոլոր քաղաքները գտնվում են տայգայի հարավային ծայրամասում կամ յերկաթուղիների, կամ գետերի յերկարությամբ:

Վարժություն: Գտեք (նկար 79) քարտեզի վրա, թե յեվրոպական տայգայի վոր տեղերումն են ապրում կարելները և կոմին, ասիական տայգայի վոր մասերումն են ապրում յակուտները և եվենկները:

ԻՆՉՊԵՍ Ե ԼԱՎԱՆՈՒՄ ՏԱՅԳԱՅԻ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՐՈՎ։

Ցարական ժամանակ եվենկները և մյուս ժողովուրդները, վորոնք տայգայում վորսորդությամբ եյին զբաղվում, կտրված եյին կուլտուրական կենտրոններից և իրենց ամբողջ կյանքն անց եյին կացնում պայքարելով դաժան բնության դեմ։ Վատ զինված, նրանք իրենց յեղջերուների հետ թափառում եյին տայգայում վորոնելով մուշտակավոր գազաններ։ Մորթեղենը չընչին գներով տալիս եյին կեղեքիչ մեծադնորդ վաճառականներին։ Նրանք ամբողջապես կախված եյին այդ վաճառականներից։

Խորհրդայնացումից հետո տայգայի ժողովուրդների, ինչպես և տունդրայի ժողովուրդների կյանքն սկսեց արագորեն փոխվել։ Կեղեքիչ վաճառականների փոխարեն յեկան Պետական ֆակտորիաները։ Հիմնվում են հաստատուն բնակավայրեր, կուլտուրական բազաներ, դպրոցներ, կոոպերատիվներ։

Տայգայի քոչվորների և վորսորդների մի մասը դեռ մինչ հեղափոխությունն սկսեց անցնել նստակյաց կյանքի և զբաղվել յերկրագործությամբ, բայց այդպիսիների տնտեսությունը շատ աղքատ եր և նրանք հաճախ սովի եյին մատնվում։

Խորհրդային իշխանությունը վճռականորեն սկսեց վերակառուցել նրանց տնտեսությունը։

ԵՎԵՆԿՆԵՐԸ ՎՈՐՍՈՐԴՆԵՐ ԵՆ

Հենց վոր տայգան ծածկվում է ձյունով. սաստիկ սառնամանիք է, սկսվում է վորսը, եվենկների անտառային յեռուն աշխատանքը։ Մի քանի որ շաբունակ նրանք վորսում են իրենց ինչևանատեղի շրջակայքում։ Ցերը բոլոր սկյուռներին կոտորում են նրանք անցնում են տայգայի խորքը։

Տայգայի մեջ կորած մի դեպակի տիպին փռվել են եվենկների վրանները։ Ծուխը քուլա-քուլա բարձրանում է վրաններից։ Փիչ հեռու արածում են յեղջերուները։

Վրանից դուրս յեկավ վորսորդը։



Նկ. 22. Եվենկը վարս անելիս.

Գնում է նա տայգայում զետակից զետակ, զգաստ թեյց զգաստ աչքերը սրած, ականջները լարած։ Նա լավ գիտե թե վորտեղ է թագնվում սրաքիթ աղվեսը, տեսնում է թե ուր գնաց փոքրիկ խոզամանկ կնդումը, լսում է, թե վորտեղ է ցատկում անհոգ սկյուռը։ Սպիտակ ձյան վրա նա կարդում է անհասկանալի, հաղիվ յերևացող նշաններ։ Վորսորդի հետ գնում է և չունը։ Ցերբեմն չունը կանգ է առնում վորևե ծառի մոտ։ Ընդհատ-ընդհատ հաչում է և ճանկերով կեղևը ճանդառատում։

Վորսորդը նստում է, հրացանն ուղղում, կրակում և գնում առաջ։ Դուրս մի սկյուռ ևս կախվեց։

ՑԵՐԵԿՎԱ ՎՈՐՍՈՐԴՆ ԱՅՍՈՐ ԴԱՌՆՈՒՄ Է ԲԱՆՎՈՐ

Զմեռվա վերջն է։ Ժամանակն է տայգայից գնալ գետափը ձուկ վորսալու։ Մի մառախլապատ առավոտ

եվենկ Պյոտր Միրան իր վորդու հետ ուղևորվեց դեպի Ցենիսեյ գետը:

Մնացել եր անցնելու կեսորվա ճանապարհ:

Ծանոթ առուներ, ճահիճներ, ծառեր... բայց այս ի՞նչ պատահեց յեղջերուների հետ: Նրանք կանգ են առնում, այս ու այն կողմն են ընկնում, համառում են, առաջ չեն գնում: «Ցերեկի արջի բներ կան գետափին», մտածում է Միրան, քշելով վեր-վեր թռչող յեղջերուներին:

Հանկարծ յեղջերուները կանգ առան: Տայգայում լսվեց ինչ վոր սարսափելի վոռնոց՝ «ու-ղու-ղու ո՞ւ»:

Կելգան, Միրայի վորդին, հրացանը վերցրեց, շվվացրեց շանը և մտավ տայգա: «Այդ ինչ տար վոգի յե, պետք է տեսնել», մտածում եր Կելգան: Նա յեկավ այն տեղը, վորտեղ անցյալ տարի կանգ եյին առել և չճանաչեց այդ տեղը: Գետի վրա մեկը մյուսի հետևից կանգնած են փայտե լաստեր: Ցերկաթե ճանկերը բռնում են գերանը, նետում վեր և գերանները մեկը մյուսի հետևից թաղնվում են չոգենավերի ահռելի յերախներում: Մարդիկ ծառերը տապալում են, գետնին վորում, տներ շինում: Գետափին արդեն չինել են մի մեծ տուն, վորի մեջ կարող է հարյուր վրան տեղավորվել:

Կելգան հոր հետ տայգա չվերադարձավ: Նա մնաց աշխատելու գործարանում:

Ցերեկվա քոչվորը բանվոր դարձավ:

ՑԱԿՈՒՏՆԵՐՆ ԱՆԱՄՆԱՊԱՀ ՈՒ ՑԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՆ

Նայեցեք ԽՍՀՄ-ի վարչական քարտեզին. Լենա գետի միջին և ստորին հոսանքների յերկու կողմերում տարածվում է ընդարձակ յերկիր— ՑԱԿՈՒՏԻԱՆ: Այս յերկիրը կարտված է լեռնաշղթաներով (տե՛ս Ֆիզիկական քարտեզը), ծածկված է անտառներով ու ճահիճներով: Ամենացուրտ ձմեռներն ամբողջ աշխարհում լինում են այստեղ: Բնակչությունը շատ նոսր է: Այստեղ ապրում են յակուտներ և եվենկներ:

Յակուտները զբաղվում են անասնապահությամբ և մասամբ եվ յերկրագործությամբ:

Գետահովիտներում, լեռների անցանելի անտառների և ճահիճների մեջ իրարից հեռու ցրված են յակուտների փոքր բնակավայրերը: Շրջակայքում արածում են անասունները՝ կովերը, ձիերը: Կանաչք խնամում են անասուններին: Տղամարդիկ խոտ են հարում: Ամբողջ որը համարյա առանց հանգստանալու աշխատում են նրանք: Հյուսիսային ամառը կարճատև է, պետք է խոտի պաշար հավաքել յերկարատև և խիստ ձմեռվա համար:

Յակուտական փոքրիկ գյուղերում դեռ մնացել են յակուտական հին վրանները (յուրտանները). Նրանք շինվում են փայտից և դրսից ծեփվում կավով. ձըմեռն ապակու փոխարեն պատուհանի մեջ սառցի կտորներ եյին դնում, տանիքը շինվում եր ձողերից, հատակը հողից: Յուրտի մեջտեղը ոջախն է ծխնելույզով: Կրակի շուրջը շինված եյին թախտեր. նրանց վրա և աչխատում եյին և քնում:

Կոլլեկտիվ տնտեսության զարգացման հետ արագորեն լավանում է յակուտների կյանքը: Շինվում են նոր տներ, հիմնվում են դպրոցներ, հիվանդանոցներ, կոմբներ և կուլտուրական ուրիշ հիմնարկներ:

Զարգացնում են անասունների ավելի կթնատու ցեղեր: Ցերեան են գալիս խոտ հարող մեքենաներ: Կազմակերպվում են խորհրդային տնտեսություններ, վորտեղ յակուտները սովորում են թե ինչպես պետք է պատեղ յակուտները սովորում են թե ինչպես պետք է պատեղ հել և խնամել անասուններին:

Յակուտիայի հարավային մասում սկսել է ուժեղ զարգանալ յերկրագործությունը: Մինչև հեկերպով զարգանալ յերկրագործությունը: Մինչև հեկտարի հարուստներն եյին հացահատիկ ցանում: Զբավորները վոչ վարելահող ունեյին, վոչ եվ գործիքներ: Հացը յերբեք չեր բավականանում, Հացը յերբեք չեր բավականանում, Հացը յերբեք չեր բավականանում,

վում է։ Խորհրդային տնտեսություններում ստանում են ցրտին դիմացող հացահատիկների տեսակները։ Դաշտերում յերևացին տրակտորներ։ Այժմ յակուտ գյուղացին ուտում է բավականաչափ քանակությամբ հաց, իսկ բանջարեղենը դարձել է նրա սովորական ուտելիքը։

Արագորեն զարգանում է բանջարաբուծությունը։ Նույնիսկ Վերխոյանսկ քաղաքում մշակում են բանջարեղեն։

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության մեջ տայգան շատ մեծ տարածություն է բռնում։ Անտառի այսչափ մեծ տարածություն վոչ մի պետություն չունի ամբողջ աշխարհում։

Մեր անտառը միշտ գրավել է ոտարազգի վաճառականների ուշադրությունը։ Շատ փայտ ինքներս ենք գործածում, բացի այդ մեծ քանակությամբ փայտ արտահանում ենք ուրիշ յերկրներ և ստացած վոսկով այնտեղ գնում մեզ համար անհրաժեշտ մեքենաներ։

Ցարական փայտարդյունաբերող վաճառականներն անխնա կերպով վոչնչացնում եյին անտառի ընդարձակ տարածություններ։ Նրանք միայն շահույթի մասին եյին մտածում։ Նրանք բոլորովին չեյին հետաքրքրվում անտառային տնտեսության զարգացմամբ։ Անտառը կտրատում եյին այնպիսի տեղերում, վորտեղից փայտը հեշտ եր տեղափոխել, այն է՝ գետափերին, տայգայի ծայրամասերում, այսինքն հենց այն տեղերում, վորտեղ պետք եր պահպանել անտառը։

Իսպառ կտրատելով, վոչնչացնելով անտառը, նրանք բոլորովին չեյին մտածում նրա վերականգնման մասին։

Աշխատանքներն անտառում տարվում եյին ամենահասարակ ձևով։ Փայտամթերման վրա աշխատող մարդկանց մասին արդյունաբերող վաճառականները չեյին էլ մտածում։



Նկ. 23. Անտառահատում

Խորհրդային Միության մեջ անտառային տնտեսությունը կառուցվում է սոցիալիստական հիմունքներով։ Կազմակերպված են անտառային արդյունաբերական տնտեսություններ։ Նախկին «ձմեռային» վորջերի փոխարեն, վորտեղ ապրում եյին անտառահատները, այժմ փայտամթերման տեղերում շինվում են լուսավոր հանրակացարաններ, տներ։ Բանվորներն աշխատում են բրիգադներով։

Անտառային տնտեսությունն այժմ ունի իր մշտական բանվորները։ Աշխատանքը մեքենայացվում է, դուրս են բերում անտառից տրակտորներով։

Անց են կացնում նոր ճանապարհներ, շինում են առանձին սառցե ճանապարհներ, վորոնց վրայով հեշտությամբ սահում են գերանների ծանր բեռ ունեցող սահնակները, մաքրում են գետային ճանապարհները, վորոնցով լողարկում են փայտ։

Այնտեղ, վորտեղ առաջ վոչ մի մարդ չկար, և տեր

Աշխատանք. IV դ.—5



Նկ. 24. Դետով անտառամյուռ են տեղափոխում

ու տնորենն արջն եր, այժմ աճում են փայտահատների բնակավայրեր, վորտեղ հիմնվում են կոոպերատիվներ, դպրոց և հիվանդանոց։

Փայտը գործ է ածվում շենքերի համար, բացի այդ նա հում նյութ է հանդիսանում մի շարք արտադրությունների համար։ Փայտից պատրաստում են զանազան չինանյութեր, թուղթ և քիմիական նյութեր։

Այդ հումքն ավելի ձեռնտու յե վերամշակության յենթարկել տեղում, քան թե անմշակ ձևով տեղափոխել զանազան տեղեր և այդ փոխադրության վրա ծախսեր անել։

Ձեռնտու յե նույնպես ոտոր յերկրների վաճառել պատրաստի չինանյութեր և փայտամշակման ուրիշ նյութեր, քան թե հում, անմշակ փայտ։

Ցեվ ահա մութ, անանցանելի տայգայում կառուցվում են և արդեն աշխատում են սղոցարաններ, թղթի ֆաբրիկաներ և քիմիական գործարաններ։



Նկ. 25. Թղթի ֆաբրիկան տայգայում

ՄՈՐԹԵՂԵՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մորթեղենի տնտեսությունը տայգայում շատ է ընկել։ Վորսորդներն անխնա կոտորում եյին դազաններին, վոչնչացնելով տայգայի մուշտակեղենի հարստությունը. թանգարժեք դազանների քանակը հետզհետե քչանում եր։ Մուշտակեղենի հարստությունը կորստից ազատելու և մորթեղենի արդյունաբերությունը բարձրացնելու համար, Խորհրդային իշխանությունը սահմանում է մուշտակավոր դազանների արգելավայրեր։ Այդ արգելավայրերում բոլորովին արգելված է դազանի վորսը։ Դա արվում է այն նպատակով, վոր մուշտակավոր դազանները բազմանան։

Հիմնվում են նույնպես դազանաբուծական ֆերմաներ, վորտեղ պահվում են ամենահազվագյուտ դազաններ՝ սամույրները, կղաքիները, կնգումները, սեները՝ սամույրները,

գարշնագույն աղվեսները: Ընտրվում են առանձնապես արժեք ունեցող ցեղեր: Նրանց լավ խնամում են և կանոնավոր կերակրում: Նրանց վրա կատարում են գիտական դիտողություններ և փորձեր:

Կազմակերպվում են վորսորդական կոլեկտիվ տնտեսություններ:

ՏԱՅԳԱՅԻ ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տայգայի ոգտակար հանածոները մինչև վերջին որերս քիչ էին ուսումնասիրված: Վերջին տարիների հետազոտությունները ցույց տվին, վոր տայգայի ընդերքում շատ հարստություններ են թաղնված՝ վոսկի. արծաթ, կապարի և ցինկի հանքեր, քարածուխ, աղ. գրաֆիտ:

Շատ մեծ նշանակություն ունի Կուզնեցկի ավազանի քարածուխը: Կուզնեցկը գտնվում է Նովոսիբիրսկից դեպի հարավ-արևելք: Հետախուզումները ցույց տվին, վոր Կուզնեցկի ավազանում չափազանց շատ առաջնակարգ ածուխ է գտնվում:

Վերջին տարիներում մեծ չափերի յե հասել Կուզնեցկի ածխի արդյունաբերությունը: Կուզնեցկի ավազանի ածուխը բացառիկ նշանակություն ունի մեր արդյունաբերության զարգացման համար:

Առաջադրություն: ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք թե տայգայի վոր տեղերում են տարածված հետևյալ ոգտակար հանածոները՝ քարածուխ—Կուզնեցկի ավազան (Նովոսիբիրսկից դեպի հարավ-արևելք), նավթ (Պեչորայի վտակի վրա և Ուրալյան լեռների արևմտյան լանջում), վոսկի (Լենա գետի և Ալդան վտակի վրա):

ԲԵՐԵԶՆԻԿԻ

Ուրալից արևմուտք Կամայի ձախ ափին գետի տակ փռվում է զանազան աղերի խավ, վորի հաստությունը հասնում է 500 մետրի: Աղերից վոմանք գործ են ածվում կերակրի մեջ— դա մեր սովորական, կերակրի աղն է: Մյուսները հրաշալի պարարտանյութեր են վարելահողերի համար— դրանք կալիումի աղերն են:



Նկ. 26. Բերեզնիկիի քիմիական կոմբինատը

Աղերի այդ հարուստ շերտերից վոչ հեռու գտնվում են քարածխի և ֆոսֆորիտների շերտեր: Ցարական իշխանության որով այդ հսկայական հարստությունները շատ քիչ էին շահագործվում:

Ներկայումս այստեղ կառուցված է ամենամեծ քիմիական կոմբինատ ամբողջ աշխարհում՝ Բերեզնիկին: Սա բաղկացած է մի քանի խոշոր գործարաններից, վորոնք այստեղ արդյունահանող ոգտակար հանածոներից պատրաստում են զանազան պարարտանյութեր: Ցերեկները մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության կարելի յե տեսնել կոմբինատի բաղմաթիվ շենքերը, վորոնք հեղեղված են էլեկտրական լույսով:

Այստեղից պարարտանյութեր կամա գետով տեղափոխում են ԽՍՀՄ-ի զանազան տեղերը, էլեկտրիվ

և խորհրդային տնտեսությունների անծայրածիր դաշտերը:

Քարտեզի վրա ցույց տվեք Բերեզնիկին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Անտառի չահագործումը և մուշտակեղենի արդյունաբերությունը կազմում են տայգայի գոտու տնտեսության հիմնական ճյուղերը և բնակչության հիմնական զբաղմունքը:

Բայց տայգայի բնակչությունը զանազան սննդամթերքների կարիք ունի: Նրան պետք են հաց, բանջարեղեն, կաթնեղեն, միս: Այս բոլորը հեռվից բերելը դժվար է և ձեռնտու չէ: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ սննդամթերքներից ինչ որ հնարավոր է տեղն ու տեղը արտադրվի:

Տայգայի բնական պայմանները գյուղատնտեսությամբ զբաղվելու համար նպաստավոր չեն. այստեղ հողերն արգավանդ չեն, լինում են ցուրտ գարուններ և վաղահաս սառնամանիքներ: Սակայն փորձերը ցույց տվին, որ չնայելով այդ բնական դժվարություններին, տնտեսությունը կանոնավոր տանելու դեպքում, այստեղ կարող են զարգանալ և յերկրագործությունը և անասնապահությունը:

Այստեղ կարող են հասնել գյուղատնտեսական բույսերից շատերը, որոնք մինչ վերջին ժամանակները աճում ելին միայն ավելի հարավ ընկած վայրերում:

Մշակվում են այդ բույսերից այնպիսի տեսակներ, որոնք կարողանում են ցրտին դիմանալ:

Կաթնատու անասունները կարող են ավելի առատ կաթ տալ, յեթե նրանց լավ խնամեն և ընտրեն ցրտին դիմացող տեսակներ:

Խորհրդային իշխանությունը փորձել և բարձրացնել տայգայի գոտու գյուղատնտեսությունը:



Նկ. 27. Քաղաքի շինարարությունը յակուտական տայգայում

Կազմակերպվում են խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ: Խորհրդային տնտեսությունները իրենց օրինակով ցույց են տալիս թե ինչպես պետք է վարել յերկրագործությունը, բանջարաբուծությունը, ինչպես պետք է խնամել անասուններին:

Խորհրդային իշխանությունն առանձնապես մեծ ուշադրություն դարձրեց տայգայի գոտում կաթնատու անասունների բազմացման վրա:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Տայգայի միջով միայն յերեք յերկաթուղի յե անցնում:

Մի գիծն անցնում է տայգայի հարավային ծայրամասով— Լենինգրադ— Վոլոգդա— Պերմ— Նովոսիբիրսկ— Իրկուտսկ— Վլադիվոստոկ: Մյուս յերկու գիծը Բերակ—Իրկուտսկ—



Նկ. 28. Բալտիկ ծովից դեպի Սպիտակ ծով ճանապարհի սխեման

տայգան լայնությամբ են կտրում՝ 1) Լենինգրադ—Մուրմանսկ և 2) Վոլոգդա—Արխանգելսկ:

Քարտեզի վրա ցույց տվեք այդ յերկաթուղիները:

Տայգայի տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունեն գետային ճանապարհները և Հյուսիսային ծովային ճանապարհը:

Բայց միայն ջրային ճանապարհները բավական չեն: Անհրաժեշտ են նաև լավ ավտոմոբիլային ճանապարհներ հենց տայգայի մեջ:

Ցավ այժմ այդպիսի ճանապարհներ չունենք: Մի քանի տեղերում նրանք արդեն ձգվում են հարյուրավոր կիլոմետր յերկարությամբ:

Փայտ արտասահման ե փոխադրվում հեռևյալ ծովային նավահանդիստներով՝ Արխանգելսկ, Մուրմանսկ, Իզարկա:

ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՍՊԻՏԱԿ-ԲԱԼՏԻԿԾՈՎՅԱՆ ՋՐԱՆՑՔ

Մեծ հարստություններ են թաղնված տայգայի հյուսիս-արևմտյան անկյունում, Ֆինլանդիայի սահմանի մոտ: Հրաշալի անտառները տալիս են արժեքավոր փայտ և մուչտակեղեն: Ոգտակար հանածոների մեջ կան յերկաթի և պղնձի հանքեր, վոսկի, պարարտանյութեր դաշտերի համար: Առատությամբ գտնվում են այնպիսի դիմացկուն շինանյութեր, ինչպիսին գրանիտներն են: Արագահոս գետերն ու ջրվեժները կարող են շատ ելեկտրականություն տալ:



Նկ. 29. Տայգան Սպիտակ—Բալտիկծովյան ջրանցքի մոտ

Բայց ցարական ժամանակներում սա մի վայրենի, խուլ անկյուն եր:

Այստեղ վոչ յերկաթուղիներ կային, վոչ էլ հաղորդակցության համար ճանապարհներ:

Քարտեզի վրա գտեք տայգայի հյուսիս-արևմտյան անկյունը:

Դեռ 300 տարի առաջ նշում եյին, վոր կարելի յե տայգայի հյուսիս-արևմտյան մասի գետերի և լճերի միջոցով միացնել իրար հետ յերկու ծով՝ ԲԱԼՏԻԿ և ՍՊԻՏԱԿ:

Ցարական ժամանակ շատ էլին խոսում ու գրում այդ մասին, բայց ծովերն այնպես էլ մնում էլին չմիացած:

Այն, ինչ չարեց ցարական կառավարությունը, անսովոր արագությամբ իրագործեց խորհրդային իշխանությունը՝ 19 ամսվա ընթացքում չինվեց աշխարհում ամենամեծ՝ Ստալինի անվան ՍՊԻՏԱԿ–ԲԱԼՏԻԿՈՎՑԱՆ ՋՐԱՆՑՔԸ, վորի յերկարությունն է 200 կիլոմետրը:

Այդ ջրանցքը Ոնեգայի լիճը միացնում է Սպիտակ ծովի հետ: Նրանով կարելի յե 5–6 որում Լենինգրադից հասնել Սպիտակ ծով: Առաջ այդպիսի ճանապարհորդության համար 17 որ եր պետք, վորովհետև պետք եր պտտվել Ցեվրոպայի հյուսիսային ափերի շուրջը:

Սպիտակ–Բալտիկովյան ջրանցքը մեծ նշանակություն ունի ամբողջ Խորհրդային Միության համար:

Այդ ջրանցքով հյուսիսից Խորհրդային Միության դանադան տեղերը կուղարկվեն՝ փայտ, ձուկ, մորթի, պարարտանյութեր, շինանյութեր, իսկ դեպի հյուսիս կփոխադրվեն՝ հաց, նավթ, աղ, լայն գործածության դանադան ապրանքներ:

Ջրանցքի յերկարությամբ կառուցվում են ելեկտրական կայաններ, ֆաբրիկաներ և գործարաններ: Ելեկտրական պայծառ լույսը կհեղեղի նախկին «չվախեցրած թռչունների յերկիրը»: Բազմաթիվ ֆաբրիկաներում և գործարաններում կպատրաստվեն տախտակներ, ֆաներներ, թուղթ. փայտի թափթփուկներից՝ շաքար, սիրոպ, քացախ, սպիրտ: Անտառների անանցանելի թավուտներով կանցնեն խճուղիներ, կոչանան ելեկտրական գնացքներ:

Զորացած ճահիճներում հացահատիկները հասկ կբերեն, կերախոտները կանաչին կտան: Ցեվ այնտեղ, վոր տեղ դեռևս քիչ առաջ թափառում եր «անտառների գրդոտ տերը»— արջը, կառաջանան մեծ բնակավայրեր ու քաղաքներ:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ

Քարտեզի վրա գտեք Արխանգելսկ նավահանգիստը:

Ցածրադիր ճահճոտ ափերի մի՛ջև փռվել է Հյուսիսային Դվինայի լայն գետաբերանը: Ցերկնակամարը ծածկվել է մութ ամպերով, մռայլ են Դվինայի կատաղի ալիքները: Բայց այդ ափերի կյանքն ուրախացնում է մարդուն: Վոր կողմն էլ նայում ես— ամենուրեք փայտի անվերջ պահեստներ: Իրար վրա դարսված են հաստ գերաններ, սղոցած տախտակները թեթև տանիքհատ գերաններ, սղոցած տախտակները թեթև տանիքների տակ իրար վրա դարսված են բարձր կիսաված քներով:

Վերամբարձ մեքենաները ջրից դանդաղորեն հանում են, բարձրացնում վեր և ապա կանոնավոր կերպով իրար վրա դարսում ամբողջ ծառեր, վորոնք բերվել են լաստերով:

Վազում են ելեկտրոքարշի վագոնները, շաչում են սղոցարանի սուլիչները, սուլում են շոգենավերը: Հասղոցարանի սուլիչները, սուլում են շոգենավերը: Հա-



Նկ. 30. Սղոցագործարան

բյուրավոր յեկվոր բանվորներ տոպրակներն ու աղոցները մեջքներին լցվում են նավահանգիստը:

Հազարավոր ոտար շոգենավեր յեկել են Արխանգելսկ բարձելու տախտակ և գերան: Նրանց բարձր կայմերն ու գույնզգույն դրոշակները ծածկել են գետը:

Այդ շոգենավերը մեր փայտը տեղափոխում են աշխարհի բոլոր ծայրերը:

Անցնում են մեր ռուսական ձկնորսանավերը, մարդատար շոգենավերը, վորոնք բանվորներ են տեղափոխում: Բայց նրանք կորչում են փայտանյութի մասսայի մեջ. ամենուրեք փայտե տախտակներն ու գերանները բռնել են Դվինայի ափերը, փայտը բարձր կիտվածքով դարսված է ոտար նավերի վրա: Նավահանգիստներում բարձում են գերաններ և տախտակներ:

Քարտեզի վրա գտեք Արխանգելսկ քաղաքը:

ԻԳԱՐԿԱՆ— ԲԵՎԵՌԱՅԻՆ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏ

Քարտեզի վրա գտեք Իգարկա նավահանգիստը:

Յենիսեյի աջ ափին վերջին տարիներում աճեց նոր նավահանգիստ Իգարկան:

Դեռևս քիչ առաջ Իգարկայի կառուցողներն առանց խարույկների և պահապանների չեին կարողանում քնել. արջերը միշտ կարող եյին գիշերով նրանց վրա հարձակվել:

Նորածին քաղաքի առաջին բնակիչները կտրված եյին ամբողջ աշխարհից, սննդամթերքների մեծ նեղություն եյին կրում, համառորեն պայքարում եյին տայգայի և բևեռային ցրտերի դեմ:

Յերկու տարվա մեջ բևեռային շրջաններից դեպի հյուսիս առաջացավ արդյունաբերական մի նոր քաղաք և նավահանգիստ: Փայտի համար այստեղ գալիս են ոտար շոգենավեր: Բարձումը կատարվում է համարյա ամբողջ որվա 24 ժամում:

Ծխում են գործարանային ծխնելույզները: Այստեղ յերեք սղոցարան փայտ են սղոցում Յեվրոպա և Ամերիկա արտահանելու համար: Նրանց կողքին մի քանի ուրիշ գործարաններ պատրաստում են ֆաներա և փայտանյութի մասսա, վորից կարելի յե պատրաստել թուղթ և արհեստական մետաքս: Աշխատում են պահածոների գործարանները: Քաղաքի դիմաց գտնվող կղզու վրա տրակտորներով մշակում են հողը: Բանջարանոցներում աճում են կարտոֆիլ, կաղամբ, սոխ և ուրիշ բանջարեղեններ:



Նկ. 31. Իգարկա նավահանգիստը

Մարգագետիններում արածում են ազնվացեղ կաթնատու անասուններ: Քաղաքի մեջ կան շատ տներ, լայն փողոցներ, այուներ, էլեկտրական լարերով: Աշխատում է էլեկտրակայանը: Խոսում և ռադիոն: Կառուցել են կինո, բացել դպրոցներ, հիվանդանոցներ, տպարան: Ակումբում կարդում են դասախոսություններ, զեկուցումներ, կազմակերպվում են յերեկույթներ:

Վարժություն 1. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք տայգայի գոտին:

2. Գրեցեք տայգայով հոսող գետերի անունները:

3. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Վերխոյանսկ, Յակուտսկ, Բերեզնիկի, Արխանգելսկ, Մուրմանսկ, Իգարկա քաղաքները:

Աշխատանք արտադասյան ժամանակ: Կազմեցեք տլրոմ «Տայգայի գոտի» թեմայով:

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏԻ

Խառն անտառների գոտին գտնվում է տայգայից դեպի հարավ-արևմուտք: Տայգայի և խառն անտառների միջև սահմանն անցնում է մոտավորապես Լենինգրադ-Կազան գծով: Հարավում սահմանն անցնում է Կազանից մինչև Կիև:

Քարտեզի վրա գտեք խառն անտառների գոտին:



Նկ. 32. Խառն անտառների գոտի

ՍԱՎԱՌՆԱԿԻ ՎՐԱՑԻՑ

Այս հոդվածը կարդալիս հետևեցեք քարտեզին:

Սավառնակը մի կողմը թողեց Վիշնի Վոլոչեկ քաղաքը և բռնեց Մոսկվայի ուղղությունը: Ամեն ուղղությամբ տարածվում են ընդարձակ անտառներ: Նրանք հաճախ ընդհատվում են կտրված անտառատեղերով և ճահիճներով: Ցերկիրը հարթ է, բայց նրա վրա տեղ-տեղ յերևում են բլուրներ: Ներքևում նշմարվում են գետերի ոլորաթափայլ թելերը և բազմաթիվ դյուղեր՝ շրջապատված վարելահողերով և բանջարանոցներով:

Վորքան առաջ ենք գնում, այնքան ավելի հաճախ ենք հանդիպում կտրված անտառատեղերի, վարելահողերն ավելի յեն ընդարձակվում, դյուղերն ավելի շուտ-շուտ են պատահում:

Ահա յերևում է վուշի գմբուխտե մեծ դաշտը: Մեկը, մյուսը... Սրանք վուշի կոլեկտիվ տնտեսությունների ցանքերն են:

Կալինին քաղաքի մոտ ընկած է տորֆի հահիճների ընդարձակ տարածություն: Մխում են Կալինինի դործարանների և ֆաբրիկաների ծխնելույզները:

Սավառնակը կտրում է Վոլգայի գալարվող վայլուն ժապավենը և դարձյալ ներքևում անտառների ծածկոց, միայն ավելի նոր, քան հյուսիսում: Ցավ նրանք այժմ խոզի մազի պես բիզ-բիզ չեն կանգնած— նրանց ուրվագծերն ավելի քնքուշ է: Այս անտառներում սաղարթավոր ծառերն ավելի շատ են:

Դարձյալ մի հարյուր կիլոմետր ևս և սավառնակը կլինի Մոսկվայում: Մեկը մյուսի հետևից տարածվեն անցան դյուղեր, բանվորական նոր ավաններ: Ներքևացին գործարանները և ֆաբրիկաները: Անտառներն ավելի ևս նոսրացան: Միայն առանձին չկտրված անտառի մնացորդներով կարելի յե գաղափար կազմել, վոր մի ժամանակ այստեղ նույնպես անտառ է յեղել:

Բնությունը նահանջել է մարդու կամքի առաջ, շինարարության առաջ:

Ահա և Մոսկվան... Սոճու, կեչու և բարդու անտառի փոխարեն—գործարանային ծխնելույզների անտառ և քարե շենքերի զանգված:

ԻՆՉՊԵՍ Ե ՓՈԽՎԵԼ ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ

Հին ժամանակ խառն անտառների ամբողջ գոտին ծածկված եր անանցանելի մութ անտառներով:

Այս տեղերը հարմար եյին մարդկային հին բնակատեղերի համար: Անտառը պաշտպանում եր թշնամիների հանկարծակի հարձակումներից: Դեպի ամեն կողմն ցրվող գետերը հաղորդակցության լավ ճանապարհներ եյին անանցանելի անտառներում: Մարդը կացինը ձեռքին հարձակվեց անտառի վրա: Նա կտրեց ծառերը, մաքրեց բացուտը ցանքսի և բնակարանի համար:

Նկ. 33. Ֆաբրիկաներն ու գործարանները խառն անտառների գոտում

Մութ անտառները հետզհետե վոչնչանում եյին, նոսրանում: Նրանց փոխարեն յերևան եյին գալիս վարելահողեր, մարգագետիններ, առաջ եյին գալիս գյուղեր:

Անցան դարեր, և մարդկանց շատ սերունդների աշխատանքից խառն անտառների գոտին բոլորովին անճանաչելի դարձավ:

Անտառի ահագին տարածություններն անհետացան: Նա պահպանվեց միայն քիչ տեղերում:

Անհետացած անտառների փոխարեն առաջացան գյուղեր, քաղաքներ, գործարաններ և ֆաբրիկաներ, ամեն ուղղությամբ տարածվեց յերկաթուղիների ցանցը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո փոփոխեցին կոլեկտիվ, խորհրդային տնտեսություններ, աճեցին նոր գործարաններ, ֆաբրիկաներ, քաղաքներ:

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Գետակի ափին ապաստան է գտել մի փոքրիկ գյուղ:

Գյուղի շուրջը տարածվում են դաշտեր, իսկ նրանից հետո անտառներ... Ամառային շոգ օրերին անտառը հրապուրում է իր խիտ կանաչով, խոստանալով սովեր և հով: Անտառի յեղրը ծածկվել է ջահել կեչիներով: Արևի ճառագայթներն անցնում են ճյուղերի միջով և պայծառ բծեր դցում խոտի խիտ, դուլնզգույն գորգի վրա: Կապտին են տալիս զանգակիկները, կարմրին է տալիս մեխակը, առվույտը: Տեղ-տեղ հրապուրիչ հայացքով նայում են մորու հատապտուղները:

Ցեղրից հետո անտառն աստիճանաբար խտանում է, կեչիները քչանում են: Սրանց խեղդում են բարձր, մութ յեղևնիները: Նրանց մեջ աճում են լորի, բարդի ծառեր: Սպիտակին են տալիս փոնչնու խոշոր ծաղիկները: Խոտն այլևս այնպես խիտ չէ և ծաղիկներով խայտաբղետ չէ: Հատապտուղներ քիչ կան: Բայց դրանց փոխարեն պատահում են սունկեր: Հաճախ լսվում է, թե ինչպես և կոցահարն իր կտուցով ծեծում հին յեղևնու կեղևը: Ցերբեմն ծառերի ճյուղերի մեջ յերևում է սկյուռի շեկ մուշտակը: Ճոպողում են անտառային թռչունները:

Ահա մի մեծ բացուտ: Շարքերով դարսված են կտրված փայտերը, իսկ նրանց մեջ ցցված են թարմ կոճղեր: Անտառն այստեղ հենց այս ձևն են կարատել, իսկ բացուտն արդեն ծածկվել է բարձր, հյուքաթի խոտով, կոճղերի շուրջը բռնել են մոռի թփերը:

Աշխարհագր. IV դ.—6

Բացուտից հետո դարձյալ անտառ, բայց ճահճոտ։ Ամառը նրանց միջով անհնարին է անցնել։

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Խառն անտառների գոտու մակերևույթը, ինչպես քարտեզից յերևում է, դաշտավայր է։ Մեջտեղով, հյուսիսից դեպի հարավ անցնում է Միջին ռուսական բարձրությունը։

Հարթության մակերևույթը միանգամայն հարթ, ուղիղ չէ, այլ բլրոտ։

Գետերը։ Քարտեզից յերևում է, վոր խառն անտառների գոտով հոսող գետերը սկիզբն են առնում Միջին ռուսական բարձրությունից և հոսում տարբեր ուղղությամբ դեպի հետևյալ յերեք ծովերը՝ Բալտիկ, Սև և Կասպից։

Քարտեզի վրա գտեք Վոլգա, Դոն, Դնեպր, Արևմտյան Դվինա գետերը։

Ցույց տվեք նրանց ամբողջ հոսանքը, սկսած ակունքից մինչև գետաբերանը։

Խառն անտառների գոտու կլիման ավելի տաք է, քան տայգայի կլիման։ Արևմուտքից, տաք Ատլանտյան ովկիանոսի կողմից փչող քամիները բերում են տաքություն և մեղմացնում են ձմեռային սառնամանիքները։ Ձմեռն այստեղ տևում է մոտ 5 ամիս, բայց ավելի տաք է, քան թե տայգայում։ Ամառն ավելի յերկարատև է և տաք քան տայգայում։ Հաճախ անձրևներ են գալիս։ Անձրևներ բերում են Ատլանտյան ովկիանոսի կողմից փչող քամիները։

Հողերը մոխրահողային են, ինչպես տայգայում։ Բայց նրանք այստեղ ավելի արգավանդ են։

Բուսականություն և կենդանական աշխարհ։ Կլիմայի մեղմության շնորհիվ այստեղ աճում են սաղարթավոր ծառերի զանազան տեսակներ՝ կեչի, կաղնի, թխկի, հացի, լորի և այլն։ Փշատերև և սաղարթավոր ծառերն աճում են իրար հետ խառն մեջընդմեջ։ Տորֆային ճահիճները ընդարձակ տարածություն են բռնում։

Շատ առաջ այստեղ գտնվում էին մութ, անանցանելի անտառներ։ Այժմ նրանք համարյա բոլորովին կտրտված են։ Մեծ տարածությամբ անտառներ մնացել են միայն ամենաարևմտյան մասում, Պոլեսյայում։

Այնտեղ, վորտեղ անտառները պահպանվել են, ապրում են նույն անտառային գազաններն ու թռչունները, ինչ-վոր տայգայում։

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒՄ

Նայեցեք քարտեզին։ Խառն անտառների գոտում նշանակված են յերկու մեծ արդյունաբերական շրջան։ Մեկը Լենինգրադի մոտ, իսկ մյուսը՝ Մոսկվա, Կալինին, Իվանովո, Գորկի քաղաքների միջև։

Այս շրջաններում առաջ եկ շատ գործարաններ ու ֆաբրիկաներ կային։ Բայց արդյունաբերությունն այստեղ առանձնապես զարգացավ խորհրդային իշխանության որով։

Հիմնովին վերակառուցվեց Մոսկվայի և Լենինգրադի արդյունաբերությունը։ Այստեղ կառուցվեցին և սարքավորվեցին բազմաթիվ խոշոր գործարաններ։ Այս գործարաններում սկսեցին առաջին անգամ պատրաստել զանազան բարդ մեքենաներ ԽՍՀՄ-ի տարբեր տեղերում կառուցվող գործարաններն ու ելեկտրակայանները սարքավորելու համար։

Աճեց ավտոմոբիլային գործարան-գիգանտ Գորկի քաղաքում։ Ընդարձակվեցին ու վերակառուցվեցին Մոսկվայի, Կալինինի և Իվանովոյի մանվածքային գործարանները։

Խառն անտառների գոտում արդյունաբերությունը զարգանում է մեծ թափով։ Շատ վառելիք և պետք, վորպեսզի նրա բազմաթիվ գործարաններն ու ֆաբրիկաներն անընդհատ աշխատեն։

Սկսեցին արդյունահանել այն տորֆը, վորն այստեղ, անանցանելի ճահիճների մեջ դարերով ընկած եր առանց

շահագործման։ Իսկ վորպեսզի այդ տորֆի շահագործումն ավելի ձեռնտու լինի, սկսեցին էլեկտրակայաններ շինել հենց տորֆային ճահիճներում։ Արդեն կառուցված են և տորֆով աշխատում են յերկու մեծ էլեկտրակայան—Լենինի անվան Շատուրայի էլեկտրակայանը, վոր Մոսկվայից 135 կիլոմետր դեպի արևելք է գտնվում և «Կարմիր Հոկտեմբերը»—Լենինգրադի մոտ։

ԼԵՆԻՆՅԱՆ ՇԱՏՈՒՐԱ

Քարտեզի վրա գտեք Շատուրայի էլեկտրակայանը։

Այնտեղ, վորտեղ այժմ կանգնած է Շատուրայի էլեկտրակայանը, անհիշելի ժամանակներից ձգվում էին տորֆային անանցանելի ճահիճներ։

Հազարավոր հեկտար տարածությամբ փռվում էին ճահճուտներ և վտիտ ցածլիկ անտառներ։

Տեղ-տեղ ճահիճների մեջ գտնվող կղզիների վրա պատսպարված էին խղճուկ ծառեր։

Ճահիճները գյուղացիների համար աղքատություն և հիվանդություններ էին բերում։ Մինչդեռ նրանք իրեց մեջ մեծ հարստություն էին պարունակում— դա տորֆի հսկայական պաշարն էր։

Ցեկավ 1917 թ. Հոկտեմբերը։ Բանվորներն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին։ Սկսվեց արյունահեղ պատերազմ սպիտակների հետ։ Գեներալները գրավեցին այն տեղերը, վորտեղ ստացվում էր նավթ և ածուխ։ Մոսկվայի արդյունաբերական կենտրոնը մնաց առանց վառելիքի։

Գործարանների կրակարանները հանգչում էին։ Բնակարանները մնացել էին առանց տաքացնելու։ Էլեկտրական լապտերներն աղոտ լույս էին տրձակում։

Ինչ գնով էլ լինի պետք էր վառելիք ճարել։

Հիշեցին Շատուրայի ճահիճները։

Վ. Ի. Լենինը կարգադրեց անմիջապես շահագործել տորֆը։

Աշխատանքը յեռաց։ բանվորներն սկսեցին առուներ փորել և ճահճի ջուրն այդ առուներով հեռացնել, տորֆը արդյունահանել։

Այդ տորֆը յերկաթուղով փոխադրվեց Մոսկվա և արդյունաբերական այլ կենտրոններ։

Տորֆի արտահանությունը Շատուրայում հետզհետե ընդարձակվում եր։ Բայց այդ տորֆը ձեռնտու չեր յերկաթուղով տեղափոխել—դրա համար շատ վագոններ էին պետք։

Այն ժամանակ մի այսպիսի միտք ծագեց՝ ճահճի մոտ մեծ էլեկտրական կառուցել և էլեկտրական հոսանքը հաղորդիչներով ուղարկել ուր վոր պետք է։

Անցավ մի քանի տարի։ Ցեկ Շատուրայի ճահիճների վրա աճեց տորֆով աշխատող ամենամեծ էլեկտրակայանն ամբողջ աշխարհում։

15 տարի աշխատում է Շատուրայի էլեկտրակայանը։ Նրա կրակարաններում այրվում է Շատուրայի տորֆը։ Աշխատում են շոգեմեքենաները և զոլորշով շարժման մեջ դնում տուրբինները (թևերով անիվներ), իսկ դրա հետ և էլեկտրական մեքենաները։

Պտտվում են էլեկտրական մեքենաները, և հոսանքը հաղորդիչներով վազում է դեպի զանազան կողմեր, տասնյակ և հարյուրավոր կիլոմետր։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խառն անտառների գոտում շատ հին ժամանակներից սկսած զբաղվում են յերկրագործությամբ։

Այս գոտու հողերը փոքր ինչ ավելի արդավանդ են, քան տայգայում։ Կլիման ավելի մեղմ է, յերկրագործության համար ավելի հարմար։

Հին ժամանակներից սկսած այստեղ մշակում են գարի, վարսակ, հաճար, վուշ, կանեփ, կարտոֆիլ և

ուրիշ բանջարեղեն: Վերջերս շատ տեղերում սկսել են մշակել նաև ցորեն:

Բայց խառն անտառների գոտում գյուղատնտեսությունը յերբեք չի կարողացել հողալ նույնիսկ գյուղացու կարիքները: Հողը կարիք ուներ լավ մշակման և պարարտացման, իսկ ցարական կառավարության և կալվածատերերի կողմից քայքայված գյուղացիները չեյին կարողանում հողը կանոնավոր մշակել և լավ պարարտացնել: Շատերը անասուններ և անհրաժեշտ յերկրագործական գործիքներ ու մեքենաներ չունեյին, և այդ բոլորի հետ միասին գյուղացիները միշտ կախված եյին կուլակներից ու կալվածատերերից:

Մինչդեռ արդյունաբերական աճող կենտրոնների համար սննդամթերքների պահանջն ավելի ու ավելի յե մեծանում, և գյուղատնտեսությունը կարող է հոգալ այդ կարիքը:

Գյուղատնտեսությունը վճռական վերակառուցման է յենթարկվում խառն անտառների գոտում:

Կոլեկտիվ տնտեսություններն ամրապնդելու համար մղվում է պայքար կուլակության մնացորդների դեմ: Ստեղծվում են խորհրդային տնտեսություններ, մեքենա-տրակտորային կայաններ: Խոշոր արդյունաբերական կենտրոնների շուրջը զարգացնում են բանջարաբուծություն և կաթնատնտեսություն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Նայեցեք քարտեզին: Դուք տեսնում եք, որ խառն անտառների գոտով ամեն կողմից դեպի Մոսկվա յեն ուղղվում յերկաթուղիներ: Տաննևմեկ յերկաթուղի միանալով իրար հետ կազմում են Մոսկվայի յերկաթուղային հանգույցը: Նրանք Մոսկվան, իսկ դրա միջոցով նաև մոտակա արդյունաբերական կենտրոնները միացնում են Միության հեռավոր շրջանների հետ:

Խառն անտառների գոտու արդյունաբերական կենտրոններում արտադրած զանազան ապրանքների միլիոնավոր տոններ այդ ճանապարհներով հոսում են դեպի Միության տարբեր անկյունները: Այդ նույն ճանապարհներով հակառակ ուղղությամբ փոխադրվում են բազմազան հում նյութեր, ինչպես և վառելիք:

Քարտեզի միջոցով պարզեցեք թե Մոսկվայից ապրանքները յերկաթուղով ուր կարելի յե փոխադրել:

Բայց մենք դեռևս բավարար չափով յերկաթուղիներ չունենք. ճանապարհների մեջ ամենից եժանը ջրային ճանապարհն է:

Նայեցեք ԽՍՀՄ-ի քարտեզին: Խառն անտառների գոտում սկսվում է Յեվրոպայի ամենամեծ գետը: Դա Վոլգան է: Նա կազմում է ջրային մի յերկար ճանապարհ: Ավելի քան 3 $^1/_2$ հազար կիլոմետր յերկարություն ունի նա:

Զախ կողմից Վոլգայի մեջ թափվում են մեծ գետեր, կտրելով խիտ անտառները: Աջ կողմից Վոլգայի մեջ է թափվում Ոկա գետը Մոսկվա վտակով, որի վրա գտնվում է Մոսկվա քաղաքը:

Վոլգան կտրում է խառն անտառների համարյա ամբողջ գոտին, հոսում է Կալինին, Գորկի, Կազան քաղաքների մոտով և իր ջրերը տափաստանների միջով տանում է դեպի Կասպից լիճը (ծով):

Բայց Մոսկվա քաղաքը, որ խառն անտառների գոտու ամենախոշոր արդյունաբերական կենտրոնն է և ամբողջ Խորհրդային Միության մայրաքաղաքը, այդ մեծ ջրային ճանապարհի մի կողմն է մնում: Վոլգայի մեծ շոգենավերը Մոսկվա սակավաջուր գետով չեն կարողանում մոտենալ Մոսկվա քաղաքին:

Մինչդեռ Վոլգան բավականին մոտ է հոսում:

Քարտեզի վրա ցույց տվեք այն տեղը, որտեղ Վոլգան ամենից շատ է մոտենում Մոսկվային:

Խորհրդային կառավարությունը վորոշել է ջրային ճանապարհը հասցնել Մոսկվա քաղաքը, Մոսկվա գետը

նավարկելի դարձնել: Վոլգայի և Մոսկվայի միջև պետք է փորվի մի ջրանցք: Վոլգայի ջուրը կթափվի Մոսկվա գետի մեջ և սա ջրառատ կդառնա:

Ցեվ կարմիր մայրաքաղաքից կանցնեն ջրային ճանապարհները դեպի մեր ընդարձակ յերկրի տարբեր կողմերը՝ դեպի Կասպից, Բալտիկ և Սպիտակ ծովերը:



Նկ. 34. «Կրասնի Ոկտյաբր» ռեկտրակայանը

Ջրանցքում կսուլան մեծ շոգենավերը: Նրանք Մոսկվա կբերեն միլիոնավոր տոննա բեռ՝ հաց, աղ, ձուկ և նավթ, քար և փայտ:

Իսկ Մոսկվայից կտանեն ուրիշ բեռներ՝ մեքենաներ, զանազան գործվածքները և գրքեր Միության բոլոր ժողովուրդների համար:

186 եկում գետեղված քարտեզի վրա ցույց տվեք Մոսկվայից դեպի Կասպից, Բալտիկ և Սպիտակ ծովերը տանող ջրային ճանապարհը:

Վարժություն. 1. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք խառն անտառների գոտին:

2. Նշանակեցեք հետևյալ քաղաքները՝ Լենինգրադ, Կազան, Կիև, Մոսկվա, Գորկի, Կալինին, Իվանովո:

3. Նշանակեցեք այն տեղը, վորտեղ պետք է ջրանցք անցնի: Աշխատանք արտադասյան ժամանակ: Կազմեցեք ալբոմ «Խառն անտառների գոտի» թեմայով:

4. ԱՆՏԱՌԱՏԱՓԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱԶՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՈՏԻ

Անտառներից հարավ հազարավոր կիլոմետր տարածության վրա ձգվում է սևահողային տափաստանների գոտին:

Նա սկսվում է ԽՍՀՄ-ի արևմտյան սահմանի մոտ, անցնում է Միության ամբողջ յեվրոպական մասով և մտնում Ասիայի խորքերը:

Անտառները միանգամից չեն վերվում տափաստանի: Սկզբում անտառների մեջ յերևան են գալիս անտառազուրկ տեղեր— անտառները փոխվում են անտառատափաստանների: Դեպի հարավ անտառազուրկ տարածությունները հետզհետե շատանում են, իսկ անտառները քչանում: Վերջապես, անտառները բոլորովին անհետանում են և տեղի տալիս միապաղաղ տափաստաններին:

ԽՍՀՄ-ի յեվրոպական մասում սևահողային տափաստանները հասնում են մինչև Սև և Ազովի ծովերը:

Քարտեզի վրա գտեք անտառատափաստանի գոտին:

ԱՆՏԱՌՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԸ

Այս նկարագրությունը կարդալիս հետևեցեք «բնական գոտիներ» քարտեզին:

Յարոսլավլ–Մոսկվա: Գնացքը մեզ արագորեն սլացնում եր դեպի Մոսկվա: Պատուհանների մոտով անցնում եր դարավոր փշատերև անտառը: Յերևում եյին սպիտակարտուն կեչիներ:

Տեղ–տեղ հանդիպում եյինք գյուղերի, վորոնք շրջապատված եյին դաշտերով և մարգագետիններով: Հեռու դարձյալ տարածվում եյին անտառներ, վորոնք բարձր պատի պես կանգնած եյին ճանապարհի յերկու կողմերում:

Մենք գնում էինք կես որ շարունակ և ամեն տեղ մեր առաջ բացվում էր միևնույն տեսարանը: Մթնեց: Ցեսքնեցի: Լուսադեմին պատուհանից դուրս նայեցի:



Նկ. 35. Վոլգա գետը

Վայրն առաջվա պես անտառային էր: Բայց անտառը հաճախ հետ էր քաշվում և ավելի շուտ-շուտ էին յերևում գյուղեր, դաշտեր, մարգագետիններ:

Ահա նշմարվում են մերթ մեկ, մերթ մյուս կողմից գործարանային ծխնելուզներ և քարե նոր շենքերի շարքեր:

Շուտով կլինենք Մոսկվայում...

Մոսկվա-Ռոստով: Մոսկվան իր գործարանային ծխնելուզների անտառով և հազարավոր քարե շենքերով հետ մնաց: Գնում ենք առաջ:

Վայրը զգալի կերպով փոխվեց: Անտառները արդեն չեն մոտենում յերկաթուղուն, նոսրացան: Մի ժամանակ այստեղ նույնպես խիտ անտառներ էին, բայց նրանք այժմ արդեն կտրված են:

Անցնում ենք Ոկայի վրայով: Մթնեց:

Հետևյալ առավոտ մոտենում ենք Վորոնեժին:

Վայրն ավելի ևս փոխվեց:



Նկ. 36. Անտառատափաստան

Այստեղ ամեն ինչ նման չէ այն բոլորին, ինչ վոր տեսանք Ցարոսլավլից Մոսկվա գնալիս:

Այնտեղ խիտ անտառը մոտենում էր յերկաթուղուն, այստեղ փռվում են անսահման բաց տարածություններ, և միայն գետափերին և ձորերում յերևում են փոքրիկ անտառներ:

Դարձյալ մի քանի ժամվա ճանապարհ, և անտառները բոլորովին անհետանում են: Ցորենի այեկոծվող արտերը ձգվում են դեպի ամեն կողմ, անծայր և անվերջ:

Տեղ-տեղ յերևում են արևածաղկի վառ վոսկեգույն բծերը, հասնող ձմերուկներով բոստաններ:

Իսկ նրանց շուրջը դարձյալ նույն հարթ, տեղ-տեղ թեթևակի բլրոտ արտերի տարածությունները:

Մինչև Ռոստով մեր գնացքն անցնում եր հացահատիկների ծովի միջով: Ցերևում է գործարան, հացի ելևատոր, գյուղ... և դարձյալ ամեն ինչ թաղվում է անծայր արտերի մեջ:

Սևահողային տափաստանները ներկայումս համարյա ամբողջապես հերկված են և վերածված արտերի, այգիների և բանջարանոցների:

Բոլորովին ուրիշ տեսք ունեցին նրանք 200 տարի առաջ: Այն ժամանակ չկային ցորենի արտեր, չկային բոստաններ ու արևածաղկի դաշտեր, չկային նույնիսկ գյուղեր: Ընդարձակ տարածության վրա ձգվում եյին տափաստաններ, վորոնց դեռ մարդու ձեռքը չեր դիպել:

Ներկայումս խոպան, դեռևս չհերկած տափաստաններ շատ քիչ տեղերում են մնացել:

ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԳՈՒՆԸ

Մակերևույթի կազմությունը: Նայեցեք ֆիզիկական քարտեզին. այն տարածությունը, վոր ընկած է սևահողային տափաստաններով, համարյա ամբողջապես կանաչ գույն ունի:

Այդ կանաչ գույնից մենք իմանում ենք, վոր մակերևույթն այստեղ ցածրադիր է և հարթ: Սևահողային տափաստանները— ցածր հարթություններ են, այսինքն՝ դաշտավայրեր են:

Մի քանի տեղերում, որինակ, արևմտյան սահմանի մոտ, իսկ արևելքում Վոլգա գետի և Ուրալյան լեռների մոտ, կանաչ գույնը փոխվում է դեղինի: Այդ նշանակում է, վոր տափաստանների մակերևույթն այստեղ բարձրանում է:

Դեղին բիծ գտնվում է նաև Ազովյան ծովից դեպի հյուսիս: Սա սևահողային տափաստանների արևմտյան

մասի ամենաբարձր տեղն է.— Դոնեցի լեռնապարը, այստեղ գտնվում է ամբողջ աշխարհին հայտնի— Դոնբասը:

Սևահողային տափաստանի հարթությունն ամեն ուղղությամբ կտրտված է ձորերով և ձորակներով, բայց դա աշխարհագրական քարտեզի վրա չի յերևում, վորովհետև քարտեզը շատ փոքր մասշտաբ ունի:

Գետեր: Տափաստանային հարթության արևմտյան մասով դեղեցիկ գալարումներով անցնում են մեծ գետեր՝ Դնեստր, Դնեպր, Դոն· Դոնեց վտակով, Կուբան, Վոլգա, Ուրալ: Տափաստանային հարթությունն այստեղ թեքված է հարավային ծովերի կողմը և այդ պատճառով հիշած բոլոր գետերը հոսում են դեպի այդ ծովերը:

Ուրալից դեպի արևելք գտնվող տափաստաններում գետեր քիչ կան: Համարյա բոլորն էլ թափվում են Որ գետի մեջ:

Քարտեզի վրա գտեք հիշյալ գետերը: Իմացեք, թե այդ գետերից յուրաքանչյուրը վորտեղ է սկսվում և վոր ծովն է թափվում:

Կլիմա: Սևահողային տափաստանները գտնվում են ԽՍՀՄ-ի հարավային մասում: Այդ պատճառով այստեղ ավելի տաք է, քան թե Միությանշատ տեղերում: Սևահողային տափաստաններում ամառը շատ չոգ է լինում և յերկար—4-5 ամիս: Նա սկսվում է արդեն մայիսին: Ամառն ոդը չոր է լինում. անձրևները շատ հազվադեպ են: Ցերեկն փչում են չոր և տաք քամիներ:

Կարճատև աշունը հետևում է ձմեռը: Ձմեռն այստեղ յերկարատև չէ և ավելի մեղմ է, քան թե անտառային գոտում, բայց սառնամանիքները յերբեմն հասնում են մինչև 20°: Հաճախ փչում են հյուսիս-արևելյան ցուրտ քամիները ձյունի փոթորիկ առաջացնելով, վորոնք ձյունով ծածկում են գյուղեր, ճանապարհներ, գնացքները կանգնեցնում են ճանապարհին:

Գարունը շուտ գալիս է և շուտ էլ անցնում: Ձյունոտ ձմեռվանից հետո, հողի և ոդի մեջ գարնանը շատ խոնավություն է գտնվում: Արեգակը տաքացնում է ոդը և հողը: Կարճ ժամանակամիջոցում ամբողջ բնությունն արթնանում է:

Վորքան դեպի արևելք ենք գնում, սնահողային տափաստաններն այնքան ավելի շատ են հեռանում ծովերից: Քամիներն ավելի ու ավելի քիչ խոնավություն են բերում: Կլիման ավելի ու ավելի յե չորանում. Ձմեռվա և ամառվա տարբերությունն ավելի զգալի յե դառնում:

ԽՈՊԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՈՒՍԱԿԱՆ ՑԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Գարունը տարվա ամենալավ յեղանակն է տափաստանում: Ձմեռային ցուրտ բուքերից ու փոթորիկներից հետո մարտին սկսվում է յեղանակը տաքանալ: Ձյունն արագությամբ հալվում է, և խոնավությամբ հագեցած հողը ծածկվում է կանաչող խոտերի խայտարղետ գորգով: Ամենից առաջ ծաղկում են ձնծաղիկը, կակաչը: Նրանք անցյալ տարի իրենց սոխարմատների և վերարմատների մեջ հավաքել են սննդարար նյութերի պաշար: Հետո յերևում են զանազան խոտեր:

Փափուկ, խոտե գորգի մեջ խժվժում են բզեզներ, ծղրիդներ: Նրանք ատիպված չեն սնունդ վորոնել: Այդ սնունդն առատորեն գտնվում է նրանց շուրջը—դա տափաստանի բույսերն են:

Հաճախ պատահում են գետնասկյուռներ, աշջամկներ և ուրիշ կրծողներ: Սրանք նույնպես բույսերով են կերակրվում, հետևապես և նրանց համար առատ սնունդն արդեն պատրաստ է:

Հարավից այստեղ են գալիս հազարավոր տեսակ-տեսակ թռչուններ: Ամբողջ ոդը լցված է թռչունների աղմուկով: Ցեվ թռչունների այդ ամբողջ բազմությունն ապրում է տափաստանի միջատների և բույսերի հաշվին:



Նկ. 37. Տափաստանում կամբայնիներով հավաքում են հացահատիը

Բայց ահա գալիս է ամառը: Արևն անխնա այրում է, հողն սկսվում է: Հողը չորանում է: Գարնանային բույսերը ծաղկաթափ են լինում և թառամում: Նրանք արդեն կարողացան իրենց վերարմատներում և սոխարմատներում սննդի առատ պաշար հավաքել հաջորդ տարվա համար: Նրանց այժմ փոխարինում են այնպիսի բույսեր, վորոնք կարողանում են տանել չորը, չոր յեղանակը և խոնավության սակավությունը հոլում:

Տափաստանն ամառվա պես ծածկված է հրաշալի գորգով, բայց այժմ արդեն ուրիշ գորգ է, վորն այնպես վառ չէ ինչպես գարնան գորգը: Տափաստանից չվում են գարնանն այստեղ յեկած թռչունները:

փաստանում մնում են մեծ արոտները, արտույտները և տափաստանային արծիվները:

Գալիս է ամառվա յերկրորդ կեսը: Շոգերը սաստկանում են: Ոգում մի կաթիլ խոնավություն չկա: Տափաստանն անճանաչելի յե դառնում: Չորանում, վոչնչանում են այն բոլոր բույսերը, վորոնք հրաշալի ծաղկե գորգով ծածկում եյին տափաստանը:

Թառամեցին նրանց ծաղիկները, սերմերը հասունացան և նրանք ավարտեցին իրենց կյանքի շրջանը:

Մնացին միայն շոգին ու յերաշտին լավ դիմացող բույսերը—փետրախոտը, բարձվենյակը և զանազան մոլախոտեր:

Նկ. 38. Փետրախոտ

Նկ. 39. Բարձվենյակ

Այժմ տափաստանը մուգ-դեղնավուն գույն ունի:

Սա տափաստանի բուսականության վերջին հերթափոխությունն է: Թվում է թե տափաստանը մեռած է: Բայց ցերեկվա լռությունը խաբուսիկ է:

Մինչև արևածագը տափաստանում մեծ կենդանություն է տիրում: Մերթ այստեղ, մերթ այնտեղ վեր են թռչում կաքավների յերամները: Խոտերի միջից լսվում է մլջատների անվերջ յերաժշտությունը: Ամեն քայլափոխում սուլում են դեռնասկյուռները: Տափաստանի վրայով ճախրում է տափաստանային արծիվը, վորոնելով իր վորսը:



Նկ. 40. Մեծ արոտ.

Բայց ահա շոգը թուլանում է: Սկսում են փչել ցուրտ քամիներ: Գալիս է աշունը— սերմերի ցրելու ժամանակը: Քամու ուղղությամբ դլորվում է և իր սերմերը ցրում յերնջնակը: Լռում են թռչուններն ու մլջատները, պատրաստվում են ձմեռային քուն մտնել նաև մի քանի կրծողներ:

Հողը: Հաղարավոր կիլոմետր, տարածության վրա ձգվող այս ամբողջ տափաստանը ծածկված է սեահողի հաստ շերտով:

Ամբողջ աշխարհում վոչ մի յերկիր արդավանդ սեահողի այսպիսի ընդարձակ տարածություն չունի:

Նկ. 41. Գետնասկյուռ.



Նկ. 42. Ցմախ.

Դարեր շարունակ տարեց-տարի հողը ծածկվում եր տափաստանային խիտ խոտերով: Ամեն տարի աճում, թառամում ու փտում եյին այդ խոտերը: Այսպես շատ դարերի ընթացքում հողի մեջ հավաքվում է բուսահող, առաջանում է սևահողի հաստ շերտ:

Սևահողը սևահողային տափաստանների հիմնական հարստությունն է:

Եթե չկա կորստաբեր յերաշտ, ապա տափաստանը տալիս է հրաշալի խոտ, առատ հացահատիկներ, զանազան պտուղներ և բանջարեղեն:

Առաջադրություն 1. Սևահողային տափաստանների կլիման համեմատեցեք տայգայի կլիմայի հետ:

2. Համեմատեցեք սևահողային տափաստանների բուսականությունը տայգայի բուսականության հետ:

3. Պատմեցեք, թե ինչպես է տարվա ընթացքում փոփոխվում բուսականությունը սևահողային տափաստաններում. ինչո՞ւ յե նա փոխվում:

4. Սևահողային տափաստանների հողը համեմատեցեք տայգայի հողի հետ:

Ինչո՞ւ սևահողային տափաստանների հողի մեջ շատ բուսահող կա:

ԱՆՏԱՌԱՏԱՓԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Անտառատափաստանի և սևահողային տափաստանների բնակչությունը խիտ է: Այդ բնակչության մի մասը յերկրագործությամբ է զբաղվում:

Տափաստանի գյուղերը մեծ են, բայց հաճախ հեռվից չեն յերևում, վորովհետև գտնվում են ձորակներում, վորտեղ հեշտ է ջուր ստանալ, գետերի և գետակների ափերին: Կավով ծեփած սպիտակ խրճիթները ձգվում են յերկար շարքերով:

Բնակչության մյուս մասն աշխատում է գործարաններում և զանազան հիմնարկություններում:

Այստեղ, ինչպես և խառն անտառների գոտում, շատ կան մեծ քաղաքներ, գործարաններ և ֆաբրիկաներ: Ամեն ուղղությամբ անցնում են յերկաթուղիներ:

Անտառատափաստանի և սևահողային տափաստանների գոտում գլխավորապես ապրում են ուկրայինցիներ և ռուսներ:

Վատ եյին ապրում բոլոր աշխատավորները ցարական Ռուսաստանում: Բայց ռուսներից ավելի ևս վատ ապրում եյին աշխատավոր ուկրայինցիները: Նրանք իրավունք չունեյին նույնիսկ աղատորեն խոսելու իրենց մայրենի լեզվով: Հիմնարկներում բոլորը պարտավոր եյին ռուսերեն խոսելու: Ուկրայինցիների յերեխաները պարտավոր եյին սովորելու ռուսական դպրոցներում: Ուկրայինական լեզվով գրքեր համարյա բոլորովին գոյություն չունեյին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավոր ուկրայինցիների կյանքը արմատապես փոխվեց: Կազմվեց Ուկրայինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Արագորեն զարգանում է Ուկրայինայի տնտեսությունը և կուլտուրական կյանքը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Սևահողային տափաստանները ԽՍՀՄ-ի հացի շտեմարանն են: Սևահողային տափաստանները— դա տասնյակ հազարավոր հեկտար վարելահողը, բոստաններ, այգիներ և բանջարանոցներ են: Սևահողային տափաստանների գլխավոր գյուղատնտեսական կուլտուրաներն են՝ ցորենը, յեղիպտացորենը, ճակնդեղը, արևածաղիկը, ծխախոտը, բամբակը:

ԻՆՉՊԵՍ ԵՑԻՆ ՎԱՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը սևահողային տափաստանների ամենաբավ և արդավանդ հողերը խոշոր կալվածատերերին և կուլակներին էին պատկանում:

Միջակ և չքավոր գյուղացիներն ունեին փոքրիկ հողաբաժիններ, քիչ անասուն, հաճախ զուրկ էին լինում ամենակարևոր յերկրագործական գործիքներից, չունեին արոտավայրեր և անասուններ ջրելու տեղեր: Այդ պատճառով էլ նրանք միշտ ստրկական վիճակի մեջ էին գտնվում կուլակների և կալվածատերերի ձեռքին:

Մանր գյուղացիությունը տնտեսությունը վարում էր նախնական ձևերով և քայքայվում էր:

ԻՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Սևահողային տափաստանների գյուղացիական տնտեսությունները միացան և կազմեցին կոլեկտիվ տնտեսություններ: Տարվում է վճռական պայքար կոլեկտիվ տնտեսություններն ամրապնդելու և կյանքը բարելավելու համար:

Հիմնվել են և այժմ հիմնվում են հարյուրավոր հացահատիկային և ուրիշ գյուղատնտեսական խորհրդային տնտեսություններ: Խորհրդային տնտեսություններն խոշոր գյուղատնտեսական ֆաբրիկաներ են: Խորհրդային տնտեսություններում համարյա ամբողջ աշխատանքը մեքենաներով են կատարում:

Հիմնել են հարյուրավոր մեքենա-տրակտորային կայաններ: Մեքենա-տրակտորային կայանները և խորհրդային տնտեսություններն իրենց տրակտորներով և օրինակելի տնտեսությամբ ոգնում են չքավոր և միջակ գյուղացիներին կանոնավոր վարել կոլեկտիվ տնտեսությունը:

Շարունակ պայքար է տարվում յերաշտի և վնասատու կենդանիների դեմ:

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Մենք գնում ենք տափաստանով, Ոդեսայից 100 կմ. հեռու:

Ինչպես ե փոխվել տափաստանը վերջին տարիներում: Ամեն տեղ անց են կացրել նոր ճանապարհներ: Ճանապարհների յերկու կողմը, նրանց ուղղահայաց կերպով և իրարից վորոշ հեռավորության վրա ձգվում են կանաչ, նեղ հողի կտորներ: Դրանք թփերի տնկարան են: Նրանք վարելահողերը պաշտպանում են քամուց, պահում են ձյունը և խոնավությունը:

Ճանապարհին մենք շարունակ հանդիպում ենք բեռնակիր ավտոմոբիլների և տրակտորների: Տրակտորներն իրենց հետևից քաշ են տալիս գութաններ և տափաններ, տեղափոխում են բենզինով և նավթով լի ծանր ցիստերներ, սայլեր, վորոնց վրա նստած են բանվորներ: Ճանապարհի յերկարությամբ անցնում են մի քանի շարք հեռախոսալարեր:

Ահա հեռվում յերևում է մի ավան: Դա մեքենա-տրակտորային կայանն է: Շարքերով կանգնած են աղյուսից շինած յերկար շենքեր— գարաժներ: Նրանց մեջ

«ձմեռում են» հարյուրավոր տրակտորներ, կալող մեքենաներ և տրակտորին կցվող գործիքներ: Նրանցից դենը գտնվում են տներ կայանի տրակտորիստների, բանվորների և ծառայողների համար: Մեջտեղը ճաշարանը և ակումբն է: Մենք կայան չենք մտնում: Այժմ այնտեղ դատարկ է. գնում ենք հարևան կոլեկտիվ տնտեսության դաշտերը, վորտեղ ներկայումս աշխատում են կայանի տրակտորները և մեքենաները:

Արդեն հեռվից տեսնում ենք փոշու ամպեր և լսում ենք մեքենաների աղմուկ: Մոտենում ենք աշխատողներին: Դաշտում կալսում են:

Աշխատում են յերեք կալող մեքենաներ, վորոնք շարժման մեջ են դրվում տրակտորների միջոցով:

Այստեղ են կոլեկտիվ տնտեսության համարյա բոլոր հասակավոր տղամարդիկ ու կանայք: Կալող մեքենայի շուրջը մարդիկ խումբ խումբ աշխատում են: Վոմանք բարձրացել են դեզի գլուխը և խուրձերը քանդում են ու գցում մեքենայի մեջ: Մյուսները պարկերը պահում են մեքենայի տակ, վորտեղից թեթև շաչյունով թափվում են մաքուր ցորենի հատիկները: Ուրիշներն անվերջ շարքով պարկերը տեղափոխում են կալի մյուս ծայրը՝ Այստեղ հատիկները տեսակավորում են:

Կալող մեքենաների հսկայական ցնցիչ Ֆասերով անընդհատ թափվում է հարդը: Կանայք հարդը հեռացնում են մեքենայից, տղամարդիկ ճարպկորեն ընդունում են այդ հարդը և դարսում քիչ հեռու կանգնած մամուլի վրա: Մի րոպեյից հետո հարդը մամուլից դուրս է նետվում մեծ վոսկեգույն հակերի ձևով:

Ժամանակ առ ժամանակ մոտենում են բեռնակիր ավտոմոբիլները, բարձում հացահատիկով լցված պարկերը և տեղափոխում ելեվատոր:

Աշխատանքը կատարվում է այնպես, ինչպես ֆաբրիկայում: Ծանոթանալով կոլեկտիվ տնտեսության կալեու աշխատանքների հետ, մենք ուղևորվում ենք դեպի ելեվատորը:

Մինչև ելեվատոր 5 կիլոմետր է, և այս ամբողջ տա-

բածության վրա իրար հետևից ձգվում են հացահատիկով բարձած ավտոմոբիլներ և սայլեր:

ՊԱՅՔԱՐ ՑԵՐԱՇՏԻ ԴԵՄ

Ցարական Ռուսաստանի սահմանային տափաստաններում յերաշտից ամեն տարի տասնյակ հազարավոր հեկտար բերք ել փչանում:

Տափաստանների արևելյան մասում բերքը փչանում ել չոր և տաք քամիներից: Այս տեղերում հաճախ փչում ե տաք քամի, ինչպես շիկացած հնոցից: Դրանից ցորենի հատիկները թոշնում և չորանում են: Կախվում են ճմրուկների և սեխերի տերևներն ու սերմնարտադրները, կարծես յեռացող ջուր են ածել նրանց վրա. թոշնում և ծառերից դեռին են ընկնում պտուղները:

Խորհրդային իշխանությունը մեծ պայքար է մղում գյուղատնտեսության այդ մեծ չարիքի դեմ: Տարածվում են յերաշտին դիմացող կուլտուրաներ (բույսեր):

Մղվում ե պայքար հողի կանոնավոր վարի համար— այնպիսի վարի, վորը պահպանում ե խոնավությունը հողի մեջ:

Պայքար ե մղվում մոլախոտերի դեմ, վորոնք մեծ քանակությամբ խոնավություն են վերցնում հողից և այսպիսով չորացնում են հողը:

Կազմակերպվում են «ձյունարշավներ»— զանազան միջոցառումներ ձյունը դաշտում կուտակելու համար:

Ավելի չոր տեղերում կիրառում են վոռոգում—անց են կացնում ջրանցքներ, վորոնցով ջուր են բերում մոտակա գետերից կամ ուրիշ ավազաններից:

Վոլգան ջուր ե տալիս Զավոլժյեյի անջուր տափաստաններին: Անջուր են սառրին Զավոլժյեյի հողերը: Այնտեղ չկան գետեր և այլ ջրամբարներ:

Հաճախակի լինում են յերաշտներ, չոր տաք քամիներ, փոշու փոթորիկներ:

Ձկա ջուր— և հարուստ սահմանները չնչին բերք են

տալիս: Անանձրև տարիները հացի բերքը փչանում է, և արտերը մնում են խանձված, դատարկ:

Արդավանդ սևահողի միլիոնավոր հեկտարները մնում են անոգուտ: Մինչդեռ նրանք կարող էին տալ միլիոնավոր ցենտներ ցորեն: Միայն թե ջուր լինի:

«Զավոլժյեյի սևահողային տափաստանները պետք է հաց տան ԽՍՀՄ-ի աշխատավորներին»—այսպես վորոշեցին կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունը: Վոլգայի վրա Կամիշին քաղաքի մոտ պետք է կառուցվի պատվար և հզոր հիդրոէլեկտրական կայան: Պատվարը Վոլգայի մեջ ջուրը կբարձրացնի 23—24 մետր: Էլեկտրական ջրմուղ կայաններն

Նկ. 43. Ցորեն, յեգիպտացորեն, բազուկ, արևածաղիկ, ծխախոտ, բամբակ:

այդ ջուրն ավելի ևս կբարձրացնեն: Ցեվ Վոլգայի ջուրը ջրանցքներով կհոսի դեպի Զավոլժյեյի արտերը:

Ստորին Զավոլժյեյի սևահողերը ջուր կստանան և առատ բերք կտան: Կփոխվի նաև ստորին Զավոլժյեյի աշխարհագրական քարտեզը—«գետերն» ու «գետակները» կկտրեն նրան զանազան ուղղությամբ, կերևան «լճեր» և «լճակներ»:

Քարտեզի վրա գտեք Կամիշին քաղաքը:

ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ ՑԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սևահողային տափաստանները միայն արդավանդ հողերով չեն հարուստ: Նրա ընդերքում թաղնված են

կարևոր ոգտակար հանածոներ—մանավանդ շատ կարքարածուխ և յերկաթահանք:

Քարածխի հսկայական խավեր են գտնվում Դոնեցի լեռներում:

Գտեք Դոնեցի լեռները քարտեզի վրա:

Այս ամբողջ տարածությունը, վորտեղ քարածուխ է գտնվում, կոչվում է Դոնեցի քարածխային ավազան (Դոնբասս):

Դոնեցի քարածխային ավազանը— համամիութենական հնոց է:

Դոնբասից դեպի արևմուտք, Դնեպրի մյուս կողմը, Կրիվոյ Րոգ քաղաքի մոտ, ինչպես և Ղրիմի թերակղզու վրա, Կերչ քաղաքի մոտ գտնվում են յերկաթահանքի մեծ պաշարներ: Ղրիմի թերակղզու վրա ստացվում է նաև աղ:

Նկ. 44. Մակեևի գործարան.

Քարտեզի վրա գտեք յերկաթահանքի և աղի նշված տեղերը:

Դոնբասը, Կրիվոյ Րոգը և Կերչը— խոշոր արդյունաբերական շրջաններ են:

Այստեղ կան տասնյակներով ու հարյուրներով ածխահորեր, յերկաթի հանքահորեր և մետաղագործական գործարաններ:

Դոնբասը միշտ այնպիսին չի եղել, ինչպես այժմ է: Հին ժամանակ այստեղ տարածվում էին անմարդաբնակ, ամառն արևից խանձվող տափաստաններ:

Միայն վոչխարի բազմաթիվ հոտեր էին արածում այստեղ, իսկ տեղ-տեղ էլ պատահում էին հացահատիկի արտեր:

Ցեվ յերկրի ընդերքում անոգուտ ընկած էին քարածխի հսկայական պաշարներ:

Բայց ահա անցյալ դարի կեսին սկսեցին յերկաթուղիներ շինել, արդյունաբերությունն սկսեց արագորեն զարգանալ: Հարկավոր է վառելիք և յերկաթ: Կապիտալիստները շուտով իմացան Դոնբասի քարածխի և հանքային հարստությունների մասին: Սկսեցին Դոնբասում հողեր գնել ածխահորեր ու մետաղագործական գործարաններ շինել: Տափաստանը ծածկվեց ածխահորերով: Տասնյակ հազարներով աղքատացած գյուղացիներ յեկան այստեղ և դարձան հանքափորեր և մետաղագործարանների բանվորներ: Ամեցին գործարանային շենքերը: Զանազան տեղերում վառվեցին հնոցներ: Զանազան ուղղությամբ ձգվեցին յերկաթուղիներ: Նրանց վրայով սկսեցին շարժվել հանքով և ածուխով բարձած գնացքներ:

Խղճուկ խրճիթները չբավարարեցին հանքահորերն ու գործարանները: Նրանց մեջ ապրում էին բանվորները:

Որական 13 ժամ նրանք աշխատում էին խոնավ հորերում:

Ամբողջ աշխատանքը կատարում էին ձեռքով, առանց մեքենաների:

Իրենց ծանր աշխատանքի համար հանքափորերը ստանում էին կոպեկներ, իսկ կապիտալիստ տերերը նրանց աշխատանքով հարստանում էին:

Այժմ հին Դոնբասը չի կարելի ճանաչել:

Նրա նախկին կապիտալիստ-տերերից հետք անգամ չի մնացել:

Դոնբասի բնական հարստությունները, հանքահորերն ու գործարանները դարձել են Խորհրդային սոցիալիստական հանրապետության սեփականությունը:

Շինվել են տասնյակներով նոր ածխահորեր, վերակառուցվել, ընդարձակվել և կառուցվել են մետաղագործական նոր գործարաններ:

Բոլորովին նոր հիմքերի վրա յե դրվում աշխատանքը հանքահորերում:

Նկ. 45. Աշխատանքն ածխահանքում ցարիզմի ժամանակ.

Հանքահորերի մեջ իջեցվել են մեծ քանակությամբ հատող մեքենաներ: Այժմ համարյա ամբողջ աշխատանքը մեքենաների միջոցով է կատարվում: Հանքափորերը սկսել են աշխատել, վոչ թե ցրված, ջոկ-ջոկ, այլ կազմակերպված, բրիգադներով:

Փոխվել է և Դոնբասի բանվորների կյանքը:

Նրանց համար կառուցվել են լուսավոր, առողջ տներ: Ամեն տեղ ճաշարաններ, ֆաբրիկա-խոհանոցներ, մանկապարտեզներ, մսուրներ: Տները շրջապատված են ծառերով և այգիներով: Անց են կացվում ջրմուղներ, կոյուղի, շինվում են բաղանիքներ:

ԴՆԵՊՐԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԸ (ԴՆԵՊՐՈԳԵՍԸ)

Քարտեզի վրա ցույց տվեք Դնեպրոգեսը:

Հսկայական քանակությամբ ենթադրիա յե պետք Դոնբասի և Կրիվորոժյեյի հանքահորերում և գործարաններում հազարավոր մեքենաներ շարժելու համար:



Նկ. 46. Աշխատանքն ածխահանքում այժմ.

Ավելի ևս մեծ էներգիա պետք կլինի այն ժամանակ, երբ գործի մեջ կդրվեն նոր գործարաններ և հանքահորեր, որոնք ներկայումս կառուցվում են և որոշված է կառուցել: Այդքան էներգիան ո՞ր տեղից պետք է վերցնել:

Պարզվեց, որ շատ մոտ, հենց բնության մեջ բոլորովին ձրի էներգիայի ահագին պաշարներ են գտնվում: Դա Դնեպրի հոսող ջրերի էներգիան է: Այստեղ գոռում գոչումով, անհիշելի ժամանակներից քարերի միջով հոսում է Դնեպրը:

Մեծ աշխատանք կարող էին կատարել նրա ջրերը, եթե հնարավոր լիներ, այդ ջրերը մեծ բարձրությունից թափել մի տեղ:

Կառավարության հանձնարարությամբ ինժեներները մի քանի տարի զբաղված էին այն հարցով, թե ինչպես կարելի է ոգտագործել Դնեպրի ջրերը, և վերջը յեկան այն յեզրակացության, որ պետք է Դնեպրի վրա կառուցել բարձր պատվար և հիդրո-ելեկտրական:

Հինգ տարի հաղարավոր բանվորներ և ինժեներներ համառ կռիվ եյին մղում Դնեպրի դեմ:

Մեծ դժվարություններ հաղթահարվեցին պատվարը շինելիս: Ստիպված եյին մաս-մաս դետի առաջն առնել փայտե պատնեշներով, նրանց միջի ջուրը դուրս քաշել և աշխատել այսպիսի պատնեշների մեջ, չարունակ յերկյուղ կրելով, որ ջրի հեղեղները ներս կխուժեն և կվոչնչացնեն թե՛ ամբողջ աշխատանքը և թե՛ աշխատողներին:

Դնեպրի առաջն առան մեծ պատվարով և այդ պատվարի մոտ կառուցեցին հիդրո-ելեկտրական կայան:

Դնեպրը դեմ առավ պատվարին և անցավ յերկաթե լայն խողովակների մեջ, որտեղ դրված եյին ելեկտրական կայանի տուրբինները:



Նկ. 47. Դնեպրոգես.

Ջուրն ահռելի ուժով ներս խուժեց յերկաթե խողովակների մեջ, գարկեց տուրբինի թիակներին և պտտեց նրանց. ելեկտրական մեքենաներն սկսեցին աշխատել և ելեկտրական հոսանքը ելեկտրականից հաղորդիչների միջով գնաց դեպի ամեն կողմ:

Դնեպրոդեսի էլեկտրական հոսանքը կաշխատի 18 միլիոն հասակավոր մարդու փոխարեն: Դնեպրը չի սահմանափակվի միայն նրանով, վոր շարժման մեջ կդնի Դոնբասի և Կրիվորոժյեյի հանքահորերի և գործարանների մեքենաները: Դնեպրի մոտ աճում են նոր գործարաններ՝ թուջաձուլական, պողպատաձուլական, ալյումինի, մեքենաշինարարական, քիմիական: Նրանք նույնպես Դնեպրոդեսի միջոցով են աշխատելու:

Չրի տակ թաղնվեցին Դնեպրի ահավոր քարակույտերը: Դնեպրն իր ամբողջ յերկարությամբ նավարկելի դարձավ:

Դնեպրից կլիորեն ջրանցքներ դեպի Դնեպրի ափերի անջուր և արևակեղ տափաստանները: Այդ ջրանցքներով բաց կթողնեն ջուր և մեռած տափաստանները կկենդանանան ու կտան մեծ բերք:

Կաշխատի Դնեպրոդեսը—լրիվ հոսանքը կսնցնի խոր հերդային և կոլեկտիվ տնտեսությունները և կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների դաշտերում կաշխատեն էլեկտրական դուրթաններ:

Վարժություններ: Կոնտուրային քարտեզի վրա սեահողային տափաստանների դոտին շրջագծեք:

Կոնտուրային քարտեզի վրա գրեցեք այն գետերի անունները, վորոնք կտրում են սեահողային տափաստանները:

Քարտեզի վրա նշանակեցեք Դոնբասը, Կրիվոյ Բոգ և Կերչ քաղաքները:

Քարտեզի վրա նշանակեցեք Դնեպրոդեսը, Կամիշինի պատվարը:

5. ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՈՏԻ

Կասպից ծովից դեպի հյուսիս Վոլգայի ստորին հոսանքի յերկու կողմերով և ապա դեպի արևելք մինչև Չինաստանի սահմանը տարածվում է չոր տափաստանների գոտին:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա գտեք չոր տափաստանները:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

(Ճանապարհորդի նամակից)

Յերկու ամիս մնացի չոր տափաստաններում: Իմ շուրջը, վորքան աչքս կտրում եր, ձգվում եր անսահման, միապաղաղ հարթություն: Տափաստանը յերկար չմնաց իր գարնանային դույնզգույն զարդարանքի մեջ: Թառամեցին նրա վառ ծաղիկները, առաջին խակ շոգ օրերը չորացրին կանաչ խոտերը: Միայն բարձվենյակն ու մոլախոտերը կարողացան դիմանալ արևի կիզող ճառագայթների տակ: Տափաստանն ստացել եր դեղին-գորշ գույն և ծածկվել եր փոշով: Ուժեղ քամիներից փոշու ամբողջ սյուներ բարձրանում եյին դեպի վեր և շարժվում այս ու այն կողմ:

Կենդանիները թաղնվել են շոգից: Միայն մողեսներն եյին նշմարվում բարձվենյակի ցողունների մեջ:

Յերբեմն ամպերը կուտակվում եյին, կայծակը փայլատակում եր, ամպը գոռում եր, նույնիսկ սկսում եյին թափվել անձրևի առաջին խոշոր կաթիլները: Բայց քամին ցրում եր ամպերը և տափաստանն առաջվա պես մնում եր չոր, փոշոտ:

Այստեղ-այնտեղ յերևում եյին աղուտների սպիտակ բծեր: Աղը բարակ կեղևով ծածկում եր գետինը և թվում եր թե ձյուն է յեկել: Տեղ-տեղ արևի տակ փայլփլում եյին լճերը: Տափաստանն ամայի յեր և անմատչելի: Յերբեմն-յերբեմն հեռվում յերևում եյին կազակների վրաններ, իսկ նրանց շուրջը ձիերի յերամակներ և վոչխարների հոտեր: Մեկ մեկ ել յերևում եյին հետախուզողների սպիտակ վրաններ և գորշ վիշկաներ:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթի կազմությունը: (Այս հատվածը կարդալիս հետևեցեք ԽՍՀՄ-ի Ֆիզիկական քարտեզին):

Չոր տափաստանների արևմտյան կեսը ցածրադիր

հարթություն է, վորը ցածրանում է դեպի Կասպից ծովը. արևելյան կեսը՝ բարձրադիր հարթություն է, վորի վրա բարձրանում են այնքան էլ վոչ բարձր լեռներ:

Զոր տափաստանների հարթությունները մի ժամանակ ծովի հատակ էին. այդ մասին վկայում են բազմաթիվ աղի լճերը, աղուտները, գետնի մեջ պատահող խեցիները:

Նկ. 48. Զոր տափաստանում.

Կլիմա: Զոր տափաստաններում ամառն ավելի տաք է և չոր, քան թե սևահողային տափաստաններում: Ատլանտյան ովկիանոսի տաք և խոնավ քամիները համարյա չեն կարողանում հասնել այստեղ, և այդ պատճառով ամառները համարյա թե անձրև չի գալիս: Հաճախ փչում են չոր և տաք քամիներ: Շոգից գետինը չորանում է և ճաքճքում:

Ձմեռն այստեղ կարճատև է, ինչպես սևահողային տափաստաններում, բայց ավելի խիստ է: Ձմեռը հաճախ լինում է ձյունի փոթորիկ: Ձմեռվա վերջը յերբեմն գետինը ծածկվում է սառցե բարակ շերտով:

Գետեր: Զոր տափաստաններում գետեր քիչ կան: Նրանցից ամենախոշորներն են՝ Վոլգայի ստորին հոսանքը, Ուրալը և Եմբան: Ամառը գետերը սատկիկ բարակում են: Ամառվա վերջը, նույնիսկ այնպիսի մեծ գետում, ինչպիսին Ուրալն է, նավարկությունը բավական դժվարանում է, իսկ մանր գետերը բոլորովին ցամաքում են: Զոր տափաստանների գետերի մեծ մասը ծով չի հասնում, նրանք կորչում են ավազների մեջ կամ թափվում են փոքրիկ աղի լճերի մեջ:

Քարտեզի վրա գտեք հիշած գետերը:

Բուսականություն: Զոր տափաստանների բուսականությունը, ինչպես սևահողային տափաստաններում, գարնանը, ամռան և աշնանը փոխվում է:

Բայց ստեղ գլխավորապես այնպիսի բույսեր են աճում, վորոնք յերաշտից չեն վախենում:



Նկ. 49. Բարձվենյակ.

Նկ. 50. Աղաբույս.

Վաղ գարնանը, հենց վոր ձյունը հալվում է և հողը ծծում է խոնավություն, արագորեն աճում են սոխարմատ և վերարմատ ունեցող բույսերը՝ կարմիր ու դեղին կակաչները, ձնծաղիկները և ուրիշները: Կարճ ժամանակում չոր տափաստանները ծածկվում են նաև կանաչ խոտերով:

Բայց շուտով անցնում է գարունը և գալիս չոր ու տաք ամառը: Կակաչները թառամում են, խոտերը չորանում: Նրանց փոխարինում են չորասեր բույսեր՝ ալևոր հոտավետ բարձվենյակները: Նրանք ծածկված են մազմզուկներով և այդ պատճառով քիչ խոնավություն են գոլորշացնում: Բազմանում են նաև ուղտի փուշ-փշոտ խոտը և զանազան մոլախոտեր, վորոնք նույնպես չեն վախենում յերաշտից:

Չոր տափաստանների բույսերն ունեն յերկար արմատներ, վորոնք խորանում են գետնի մեջ և այնտեղից ծծում խոնավություն:

Նրանք գտնվում են իրարից հեռու: Նրանց արանքում յերևում է խանձված, չոդից ճաքճքված գետինը:

Այնտեղ, վորտեղ հողի մեջ շատ աղ կա, պատահում են առանձին բույսեր—աղաբույսեր:

Հողեր: Ցերկարատև, շատ չոգ և չոր ամառվա և նոսր բուսականության շնորհիվ, հողի մեջ չի կարող այնքան շատ բուսահող գոյանալ, ինչպես սնահողային տափաստաններում: Չոր տափաստաններում հողերը մեծ մասամբ լինում են գորշ և փոքր քանակությամբ բուսահող են պարունակում: Պատահում են նաև աղուտային հողեր: Սրանց մեջ մեծ քանակությամբ ծծված աղեր են լինում:

Կենդանական աշխարհ: Չոր տափաստաններում խոշոր կենդանիներ քիչ կան: Պատահում են ուրդավազ այդաներ: Ջուր և սնունդ վորոնելիս նրանք մեծ տարածություններ են անցնում. միայն արագ վազքն է փրկում նրանց գայլերից:

Չոր տափաստաններում պատահում են և այնպիսի կենդանիներ, վորոնք ապրում են հողի տակ:

Այստեղ շատ կան մողեսներ, ոձեր, իսկ միջատներից ծղրիդներ, մորեխներ:

Չոր տափաստանների կենդանիների մեծ մասն ունի



Նկ. 51. Սայգակ.

խանձված տափաստանի գույնը և այդ պատճառով նրանք տափաստանի վրա հազիվ են նկատվում:

Առաջադրություն: Չոր տափաստանների կլիման համեմատեցեք սնահողային տափաստանների կլիմայի հետ:

Պատմեցեք ինչպես և փոխվում չոր տափաստանների բուսականությունը գարնանից մինչև աշուն:

Չոր տափաստանների հողերը համեմատեցեք սնահողային տափաստանների հողերի հետ: Ինչո՞ւ չոր տափաստաններում քիչ բուսահող կա:

Պատմեցեք, ի՞նչ առանձնահատկություններ ունեն չոր տափաստանների բույսերն ու կենդանիները:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Լայնարձակ չոր տափաստաններում հին ժամանակներից սկսած ապրում են կազակներ և դաշտամշներ. Նրանք զբաղվում են, գլխավորապես անասնապահությամբ— պահում են վոչխարների, ձիերի և ուղտերի մեծ հոտեր: Չոր տափաստանների բուսականությունն աղքատ է, բայց նա կարող է կերակրել այնպիսի սակաղ

վայելեն կենդանիների մեծ հոտեր, ինչպիսին են վոչխարը և ուղտը:

Ցեվ քոչում են ամառը կազակներն ու դարմուխները մի արոտատեղից մի ուրիշը: Ընտրում են վորևե հարմար տեղ անասուններն արածացնելու համար, կանգնեցնում են թաղիքե վրանները և ամառային առուլը (բնակավայրը) պատրաստ է:

Զմեռում են մշտական բնակարաններում: Այդ բնակարանները նրանք չինում են կավից, վորի հետ դոմաղբ են խառնում:

ԿԱԶԱԿՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Քոչը: Անասունները կերան և վոռնատակ արին առուլի շուրջն յեղած խոտը: Պետք է ուրիշ տեղ քոչել:

Առավոտից առուլում կենդանություն է: Կանայք քանդում են վրանը, հավաքում են գորգերը, անկողինը և ամանները: Տղամարդիկ բարձում են սայլը, ուղտերը:

Ամեն ինչ պատրաստ է: Ճանապարհ են ընկնում:

Ցեղան սայլերին նստած գնում են կանայք ու յերեխաները:

Նրանց հետևից վեհ քայլածքով գնում են ուղտերը: Նրանց սապատներին բարձած են վրանների մասերը: Ուղտերի հետևից գնում են ձիերը և կովերը: Իսկ ամենից վերջը վոչխարների և այծերի հոտերը: Ճռճռում են սայլերը: Մայում են վոչխարները, գոռում են ուղտերը, բառաչում են կովերը, խրխնջում են ձիերը: Լսվում են յերեխաների զիլ ձայները:

Ամբողջ քարվանի առջևից ձիուն նստած գնում է տերը: Մնացած տղամարդիկ նույնպես ձիերին նստած փակում են յերթը:

Բայց ահա արևը թեքվում է դեպի արևմուտք: Ամպերը դառնում են վոսկեգույն-վարդագույն: Շուտով կմթնի: Քոչի տերը տալիս է ազդանշան, և քարվանը կանգ է առնում գիշերելու:

Առավոտը, արևածագին քարվանը կրկին ճանապարհ է ընկնում, իսկ իրիկնադեմին կրկին կանգ է առնում հանգստանալու համար:

Այսպես չորս որ շարժվում է քարվանը դեպի այն կողմը, վորտեղ խոտն ավելի հյութալի յե, վորտեղ կա անուշահամ ջուր և վորտեղ անասուններին ավելի լավ կարելի յե կերակրել:

Վերջապես, հինգերորդ որը հեռվում փայլփլում է լիճը: Ջրի համը տեսան—լավ է, համեղ: Ցեվ շրջակայքի խոտն ել խիտ է, կանաչ: Վորոշում են այստեղ կանգ առնել:

Կանգնեցնում են վրանները և առուլը պատրաստ է:

Ցեվ ահա առուլի շուրջը ամեն ուղղությամբ ցրվում են ձիերը, կովերը, այծերն ու վոչխարները: Տափաստանը նրանցից դառնում է խայտաբղետ:

Մի յերկու տասնյակ մեծ, կատաղի գամփռներ պահպանում են հոտը:

Վրանների առաջ վառվում են խարույկները և նրանց վրա ինչ-վոր բան է յեփվում:

Առուլից մարդու յերեսին խփում են ծուխը և թթու կումիսի հոտը:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ՁՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ձոր տափաստանների հսկայական տարածությունները կարող են կերակրել հարյուրավոր միլիոն անասուններ:

Բայց յեղանակն այստեղ հաճախ անբարենպաստ է: Ցերաչից խոտը չորանում է: Սակավաձյուն ձմեռներին լինում է սառուկ: Գետինը ծածկվում է սառցի հաստ շերտով, վորը չեն կարող կոտրել նույնիսկ ձիու սմբակները: Այն ժամանակ սկսվում է «ջուտը», անդի պակասությունից անասունների մասսայական կոտորվելը: Բացի այդ, հաճախ անասունները հիվանդանում են

խլնախտով, սիբիրախտով և ուրիշ հիվանդություններով:

Խավար, հետամնաց քոչվորներն ամբողջապես կախված էին բնությունից: Նրանք վոչ մի միջոց չէին գործադրում անասունների մասսայական կոտորածի առաջն առնելու համար—այն սոսկալի աղետի, վոր ընկնում եր նրանց գլխին:

Անասունները հիվանդանալու ժամանակ նրանք դիմում են կախարդին, վորի բժշկությունն ավելի ևս տարածում եր հիվանդությունը և անասունների կոտորածը:

Ցարական կառավարությունը բոլորովին հոգ չէր տանում տափաստանի քոչվորների տնտեսության մասին:

Զոր տափաստանում դժվար և ջուր ճարել: Պետք և խոր ջրհորներ փորել: Տափաստանի ամենալավ ջրհորները պատկանում էին բայերին (հարուստներին):

Բայերն ոգտվում էին չքավորների տգիտությունից: Կերի պակասությունը, անասունների կոտորածը նրանց նոր հարստություններ էին բերում— ավելի շատ չքավորներ էին դառնում նրանց բատրակները:

Այս տափաստանների բնակչությանը քայքայում եր և ինքը ցարական կառավարությունը: Նա խլում եր տափաստանային քոչվորներից արոտատեղերն ու վարելահողերը և տալիս ռուս գաղթականներին:

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՔՈՉՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԲԱՐՎՈՔԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խորհրդային իշխանությունը վճռականորեն վերակառուցում է քոչվորների տնտեսությունը և կյանքը: Նա ամենից առաջ պայքար է տանում անասունների քանակը մեծացնելու համար, վորովհետև դրանից է կախված քոչվորի ամբողջ բարեկեցությունը:

Խորհրդային իշխանությունն աշխատում է քոչվորներին նստակյաց դարձնել: Նա ամեն կերպ ոգնություն և հասցնում քոչվորներին:

Կազմվում են ընկերություններ խոտը միասին հարելու, խոտ ցանելու համար, կառուցվում են ընդհանուր դոմեր, շինում են ջրհորներ, ջրամբարներ: Հիմնում են անասնաբուժական կետեր:

Քոչվորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար հիմնում են «կարմիր վրաններ», դպրոցներ: Կառուցում են հիվանդանոցներ:

Զոր տափաստանները յերկրագործության համար անհարմար են, բայց դրա փոխարեն նրանք կարող են կերակրել հարյուրավոր միլիոն գլուխ անասուն:

Տափաստանային անասնապահական տնտեսությունը լավ վարելու դեպքում հսկայական քանակությամբ միս կարող են տալ այս տափաստանները:

Ցեվ ահա չոր տափաստաններում ծավալվում է խորհրդային տնտեսությունը, կառուցվում են անասնաբուծական խորհրդային տնտեսություններ:

Այժմ արդեն մոտ 200 անասնաբուծական խորհրդային տնտեսություններ կան այնտեղ:

ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ՅԵՎ ՄՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեծ քանակությամբ հանածո հարստություն մինչև վերջին ժամանակներս անոգուտ ընկած եր չոր տափաստանների ընդերքում:

Զոր տափաստանները կենդանություն առան այնտեղ, վորտեղ սոցիալիստական հանրապետություն կառուցողների համառ աշխատանքի շնորհիվ բացվեցին տափաստանների ընդերքը:

Կարագանդայի հանքահորից անընդհատ հեղեղով յերկրի մակերևույթի վրա թափվում է սև, պսպղուն ածուխը: Կասպից ծովի յեղերքին, նավթահորերից դիզեր-ցերեկ խողովակների միջով հոսում է Եմբայի նավթը: Բալխաշ լճի ափին կառուցվում է պղնձաձուլական

գործարան, վոր իր մեծությամբ առաջինն է լինելու ամբողջ աշխարհում:

Քարտեզի վրա գտեք Կարագանդան, Եմբայի նավթահանքերը և Բալխաշ լճի ափի պղնձահանքերի տեղը:

Նկ. 52. Չոր տափաստանում գործարան է կառուցվում.

Բայց դա միայն սկիզբն է: Պղնձի, ցինկի, կապարի հանքերի և ուրիշ արժեքավոր հանածոների ահագին պաշարներ են գտնված չոր տափաստանների ընդերքում:

Նրանք շուտով դառնալու են գունավոր մետաղների արտադրության գլխավոր բազան:

Այսպես աստիճանաբար փոխվում են չոր տափաստանները, դրա հետ փոխվում է և կազակների կյանքը: Թոչվոր կազակները դառնում են կառուցողներ, հանքափորներ, նավթահանքային բանվորներ, հեռանում են քոչից և սկսում ապրել արդյունաբերական բանվորների կուլտուրական կյանքով:

Նավթ ծովի հատակից: Կասպից ծովի ձկնորսները վաղուց նկատել էին, վոր Եմբայի գետաբերանից վոչ հեռու ջուրը շողշողում է ծիածանի բոլոր գույներով:

Սկսեցին հետազոտել ծովի ափերն ու հատակը: Պարզվեց, վոր բավական խոր, ծովի հատակի տակ գտնվում են նավթով հարուստ հողաշերտեր:

Նկ. 53.

Ցեվ խորհրդային իշխանությունը վորոշեց—ծովից խլել այդ նավթը:

Ծովի մեջ կանգնեցրին մի հատ քարե պատ—դամբա: Այդ պատով անջատեցին ծովի մի մասը: Ամբողջ յերկու տարի դիշեր ցերեկ աշխատում էին ջրհան մեքենաները: Վերջապես հատակը բացվեց:

Ցամաքացրած ծովի հատակի վրա կառուցեցին տասնյակներով նավթային վիշկաներ և սկսեցին նավթ հանել: Շուտով այստեղ նավթի ուժեղ շատրվան խփեց: Շատրվանը փակեցին խողովակներով և նավթն սկսեց հոսել ուղղակի նավթային բակի մեջ:

Բանվորները և ինժեներները մեծ քանակությամբ նավթ խլեցին բնությունից սոցիալիստական տնտեսության համար:



Նկ. 54. Թուրքեստան-Սիբիր յերկաթուղու քարտեզը.

Նավթի վիշկանների անտառն այժմ կանգնած է այնտեղ, վորտեղ մի քանի տարի առաջ ծովի հատակ եր:

ՁԿՆՈՐՍԱՐԱՆՆԵՐ

Ձոր տափաստանների զոտու արևմտյան մասը դարձվում է կասպից ծովի ափերին, Վոլգա գետի ստորին հոսանքի յերկարությամբ և Եմբա գետի ավազանում, Այստեղ ձկան մեծ հարստություններ կան:

Վոլգայի գետաբերանում գտնվում է Աստրախան քաղաքը (քարտեզի վրա ցույց տվեք այդ քաղաքը):

Դա ձկնորսության ամենակարևոր կենտրոնն է: Ծովափի մոտ կանգնած են հարյուրավոր ձկնորսական առագաստավոր նավեր: Ձկնորսական սեզոնում գիշեր ցերեկ նավերից դատարկում են ձուկը:

Մինչ հեղափոխությունն Աստրախանում ձկնորսների աշխատանքով հարստանում եյին խոշոր վաճառականները:

Նոր Աստրախանում տասնյակ հազարներով ձկնորս-կոլտնտեսականներ կան: Նրանցից շատերը նախկին քոչվոր-ղալմուխներն են:



Նկ. 55. Անապատում.

Ներկայումս այստեղ կառուցված են պահածոնելի մեծ գործարաններ, սառցարաններ, գործարաններ, վորտեղ շինվում են ձկնորսական նավեր:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն մեկ յերկաթուղի յեր կտրում չոր տափաստանները:

Նա Որենբուրգ քաղաքից գնում եր դեպի հարավ-արևելք Տաշկենտ քաղաքի ուղղությամբ:

Քարտեզի վրա ցույց տվեք այդ յերկաթուղին:

Չոր տափաստանների ընդարձակ տարածության մեծ մասը բոլորովին կտրված եր ԽՍՀՄ-ի կուլտուրական կենտրոններից:

Ուղտը տեղափոխության միակ միջոցն եր այդ տափաստաններում:

Վերջին տարիներում խորհրդային իշխանությունը կառուցեց մի յերկար յերկաթուղի, վոր կտրում է չոր տափաստանների արևելյան մասը — դա Թուրքեստան-Սիբիրական (Թուրքսիբ) ճանապարհն է: Այս ճանապարհի շնորհիվ արագորեն զարգանում է յերկրի տնտեսությունը:

Նկ. 56. Սաքսաուլ.

Վարժություններ: Կոնտուրային քարտեզի վրա չոր տափաստանների գոտու շուրջը գիծ քաշեցեք:

Նշանակեցեք գլխավոր ոգտակար հանածոների հանման տեղերը:

Նշանակեցեք այն տեղերը, վորտեղ ապրում են կազակները և զալմուխները:

Նշանակեցեք Կարագանդա, Ատրախան քաղաքները: Թուրքեստան-Սիբիրական յերկաթուղին ընդգծեցեք և վրան դրեք անունը:

Աշխատանք արտադասյան ժամանակ: Կազմեցեք ալբոմ «Չոր տափաստանների գոտի» թեմայով:

6. ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏԻ

Կասպից ծովից արևելք, չոր տափաստանների գոտուց հարավ գտնվում է անապատների գոտին:

Հարավային և հարավ-արևելյան անապատների գոտին շրջապատված է լեռներով:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա գտեք անապատների գոտին:

ԱՆԱՊԱՏՈՎ

(Ճանապարհորդի պատմվածք)

Փխրուն ավազի դեղնավուն բլուրները տարածվում էին դեպի ամեն կողմ: Ցերբեմն թվում եր, թե շուրջը տարածվում է անծայրածիր ծով քարացած ալիքներով:

Տեղ-տեղ ավազաթմբերը ծածկված էին լինչ-վորմանր ծառերով և թփերով, վորոնց վրա տերև չկար: Նոսր աճում էին կոշտ և փշոտ խոտեր:

Արևը ծագելուն պես շոգն սկսվում եր. կեսորին ավազն այնքան եր տաքանում, վոր բոբիկ վոտքերով անհնարին եր քայլել: Նույնիսկ տափաստանի շոգին սովոր ձիերը հրաժարվեցին կերից և թմրել, կանգնել էին խեղդիչ, այրող շոգից ուժասպառ լինելով: Ըստ յերևույթին միայն ուղտերն էին, վոր շոգից չէին տառապում:

Առավոտյան ժամը 10-ին մոտ բարձրանում եր չոր, այրող քամի: Նա քշում եր տաք ավազի ամբողջ ամպեր:

Ավազե վարագույրով ծածկվում եր արևի յերեսը: Հեռվում վոչինչ չեր յերևում:

Տաք ավազն անխնա ծեծում եր մեր յերեսներն ու ձեռքերը, լցվում եր աչքերի, ականջների մեջ և կաշվի մեջ քոր առաջացնում: Ատամներիս տակ ավազը կրճտում եր:

Ցերեկոյան դեմ արևը, վորպես ծանր չիկացած գունդ թաղնվեց հորիզոնի տակ կարմիր լույսով անապատը հեղեղելով:

Քարվանը վեց որ եր, ինչ ճանապարհ եր գնում: Ծանր ճանապարհից և սննդի պակասությունից նույնիսկ ուղտերը հոգնեցին: Նրանք գնում էին տխուր, ուժասպառ, հաղիվ փոխելով վոտքերը:

Ճանապարհին հանդիպեցին ջրհորի: Բայց նրա մեջ այնքան քիչ ջուր կար, վոր նույնիսկ խմելու չբավականացավ:

Քարվանին վտանգ եր սպառնում:

Քարվանն ուղեկցող թուրքմեններից մեկը ցանկություն հայտնեց գնալ առաջ և գտնել ճանապարհը: Ցերեկոյան վերադարձավ նա և հետը բերեց թարմ յուղեղի մի ճյուղ:

Բոլորն զգացին, վոր շուտով նրանց տանջանքները կվերջանան:

Հետևյալ որը քարվանը հասավ Ամու-Դարյա գետը:

Դա մի լայն, ջրառատ գետ եր: Նրա ափերը ծածկված էին ճոխ, կանաչ բուսականությամբ:

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթի կազմությունը (հետևեցեք քարտեզով): Անապատների գոտին գտնվում է Թուրանի ընդարձակ դաշտավայրում: Մի ժամանակ Թուրանի դաշտավայրը ներկայացնում եր ծովի հատակ: Դեպի հարավ և հարավ-արևելք նա աստիճանաբար բարձրանում է, և հարավ-արևելյան ծայրամասերում վերջանում բարձր լեռներով: Այստեղ գտնվում է Պամիր լեռնաշխարհը: Պամիրից դեպի հյուսիս-արևելք ձգվում են ԽՍՀՄ-ի ամենաբարձր լեռները՝ Տյան-Շանը:

Կլիմա: ԽՍՀՄ-ի հեռավոր խորքերն է անցել անապատների գոտին: Խոնավ քամիներն այստեղ չեն հասնում:

Անապատների գոտում ավելի չոր է և տաք, քան թե չոր տափաստաններում: Պատահում են և այնպիսի տեղեր, վորտեղ ամառվա ընթացքում մի կաթիլ անձրև չի գալիս: Ցերբեմն անձրև գալիս է, բայց չիկացած ավազներին չդիպած, գոլորշիանում է: Ցերեկը ստվերի մեջ շոգը հասնում է մինչև 50°: Ավազը, քարերը, մեռած առարկաներն այնքան են տաքանում, վոր այրում են մարդու ձեռքերը:

Ցերկինքն այստեղ մեծ մասամբ անամպ է լինում: Այդ պատճառով էլ առարկաներն ամառային ցերեկները սաստիկ տաքանում են, իսկ գիշերներն արագ սառչում: Անապատում ցերեկը լինում է շոգ, իսկ գիշերը զով:

Ամառը տևում է հինգ-վեց ամիս: Ձմեռն, ընդհակառակը, կարճ է և ցուրտ: Լինում են 20°-ի և նույնիսկ ավելի սաստիկ սառնամանիքներ:

Գետեր: Ճրջապատող լեռներից քիչ գետեր չեն թափվում Թուրանի դաշտավայրի մեջ: Բայց նրանց մեծ մասը կորչում է ավազների մեջ կամ ցամաքում է, ինչպես չոր տափաստաններում: Միայն յերկու մեծ գետ են կարողանում հասնել Կարա-Կում և Կզըլ-Կում անապատները և հասնել մինչև Արալյան լիճը (ծովը): Դրանք են Ամու-Դարյա և Սիր-Դարյա գետերը: Ցերկուսն էլ սկսվում են բարձր լեռների սառույցների տակից: Ամու-Դարյան սկիզբ է առնում Պամիրի լեռներում, իսկ Սիր-Դարյան՝ Տյան-Շանի լեռներում:

Քաղաքների վրա գտնվող հիշած գետերն ու անապատները:

Ամենաշոգ ժամանակ, յերբ չոր տափաստանի գետերը բարակում կամ ցամաքում են, Ամու-Դարյան և Սիր-Դարյան վարարում են: Դա նրանից է, վոր այդ ժամանակ ամառային արեգակի ճառագայթներից բարձր լեռների սառույցը հալվում է:

Անապատներում պատահում են նաև լճեր, բայց հաճախ առանց ջրի: Նրանց մի մասի ջուրը գոլորշիացել և փոսերի մեջ մնացել է աղի չլացնող սպիտակ չերտը: Հեռվից այդ չերտը նոր յեկած ձյունի յե նմանվում:

Բուսականություն: Ավազոտ անապատներում էլ կան բույսեր. բայց նրանք այստեղ աճում են ավելի նոսր, քան թե չոր տափաստաններում: Նրանք նույնպես կարողանում են դիմանալ չոգին և խոնավության բացակայությանը:

Ավազները շարունակ վտանգ են սպառնում անապատի բույսերին: Բայց նրանցից շատերի սերմերն այնքան թեթև են, վոր քամու ժամանակ նրանք ավազից առաջ են թռչում և ավազները չեն կարող նրանց ծածկել հաստ շերտով: Շատ թփեր բոլորովին տերև չունեն. նրանց ճյուղերն ուղիղ են և բարակ, այդ պատճառով ավազը կարողանում նրանց միջով ազատորեն անցնել և թփերի մոտ չի կուտակվում:

Ավազոտ անապատներում պատահում են նաև ծառեր— սաքսաուլներ: Նրանք հասնում են 6—8 մետր բարձրության և մի քանի տեղերում կազմում են պուրակներ:

Տարորինակ տեսք ունեն այդ ծառերը: Նրանց բները ծուռ ու մուռ են, ծածկված բազմաթիվ ճեղքվածքներով և ակոսներով: Տերևներն ունեն մանր թեփուկների ձև, իսկ ջահել կանաչ ճյուղերը սաքսաուլի համար տերևների դեր են կատարում:

Սաքսաուլն աճում է չոր ավազներում: Ջրելուց նա վնասվում է:

Մեծ գետերի ափերին բոլորովին ուրիշ բուսականություն է: Ավազներն այստեղ վտանգ չեն սպառնում, բավականաչափ էլ խոնավություն կա: Ափերի յերկարությամբ ձգվում են յեղեգնի և խիտ, հյութալի սաղարթ ունեցող ծառերի մացառուտներ:

Հողեր: Ավազոտ անապատներում հող չկա. տերևազուրկ նոսր բուսականությունը բուսահող համարյա չի տալիս: Միայն ցածրադիր տեղերում պատահում են աղուտային հողեր:

Գետահովիտներում, ընդհակառակը շատ արգավանդ հողեր են պատահում: Նրանք առաջացել են այն



Նկ. 57

տիղմից, վոր գետն ամեն տարի թողնում է վարարման ժամանակ:

Կենդանական աշխարհ: Առաջին հայացքից անապատում կենդանիներ չկան: Բայց ուշադրությամբ դիտելիս ավազը: Ահա մի քանի քարեր կենդանություն ունեն և անդադար առաջ են շարժվում: Բայց սրանք խոռան և անդադար առաջ են շարժվում: Բայց սրանք կապես քարեր չեն, այլ ավազի մեջ թաղված մողեսների գլուխներ:

Անապատներում, ինչպես և չոր տափաստաններում մողեսներ և ոձեր շատ կան: Վտանգի ժամանակ նրանք թաղվում են ավազի մեջ: Մողեսների մեջ պատահում են և այնպիսի հսկաներ, վորոնց յերկարությունը լինում է մեկ մետրից մինչև յերկու մետր: Անապատներում ապրում են նաև թռչուններ: Խոշոր կենդանիներից անապատի ծայրամասերում պատահում են ռոտիլոպներ— վորոնք ղղուլչ և շատ յերկչոտ կենդանիներ են: Մի փոքրիկ վտանգի դեպքում նրանք անհետանում են քամու արագությամբ:

Անապատի համարյա բոլոր կենդանիներն ունեն դեղնավուն գույն և այդ պատճառով անապատի ավազների մեջ հազիվ են յերևում:

Մեծ գետերի ափերին, վորտեղ մացառուտներ կան, պտտահում են վարազներ և վագրեր:

Անապատն արժեքավոր ընտանի կենդանու— ուղտի հայրենիքն է: Իր լայն, կոշտուկներ ունեցող թաթերի շնորհիվ նա հեշտությամբ քայլում է ավազների մեջ, մինչդեռ ձիու վոտքերը խրվում են:

Ուղտը կարող է կերակրվել չոր, կոշտ և փշոտ խոտերով: Բայց նա կարող է առանց սննդի և ջրի մի քանի որ դիմանալ: Այդ ժամանակամիջոցում նա կարող է մի քանի հարյուր կիլոմետր տեղափոխել և ճանապարհորդին և բեռը:

Առաջադրություն 1. Անապատի կլիման համեմատեցեք չոր տափաստանների կլիմայի հետ:

2. Պատմեցեք, ինչ առանձնահատկություններ ունեն անապատների կենդանիներն ու բույսերը:

3. Անապատային գոտու ինչպիսի տեղերում են գտնվում արդավանդ հողեր:

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Անապատների գոտում ապրում են, գլխավորապես, ուզբեկներ, թուրքմեններ և կազակներ:

Ավազոտ անապատների բնությունն աղքատ է և խղճուկ: Բայց այնտեղ ևս բնակչություն կա: Նա զբաղվում է անասնապահությամբ և չոր տափաստանների բնակչության նման, քոչում է տեղից տեղ, գտնելով արոտատեղեր և ջուր: Անապատում խրարից հեռացրված են քոչվորների առվները:

Գետերի հովիտներում ջուրն առատ է, հողն արդավանդ և բուսականությունը հարուստ: Այդ պատճառով հին ժամանակներից սկսած մարդիկ բնակություն են հաստատել այդ տեղերում: Գետահովիտների բնակչությունը խիտ է: Նա նստակյաց է և զբաղվում է գյուղատնտեսությամբ— տնկում են այգիներ, ցանում են մեծ քանակությամբ բամբակ: Բամբակի ցանքսերը հետզհետե ընդարձակվում են:

Անջուր հողերը վոռոգելու համար հին ժամանակներից սկսած գետերից անց են կացնում ջրանցքներ (առուներ):



Նկ. 58

ՔՈՉՎՈՐ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՄՈՏ

Մեր քարվանը գնում եր Կարա-Կում անապատով:

Քարտեզի վրա գտեք Կարա-Կումը:

Մեր շուրջը ձգվում եյին անվերջ մի թապպտող ավազներ: Նրանք ծածկված եյին խոնձված բուսակլուբներ: Նրանք ծածկված եյին խոնձված բուսականության մնացորդներով: Տեղ-տեղ պատահում եյին սաքսաուլի մացառուտներ:

Հանկարծ մի ավազե բլրի հետևը բացվեց մեկ և կես կիլոմետր յերկարություն և լայնություն ունեցող հարթ տարածություն: Նրա վրա շարքով կանգնած եյին 26

Թուրքմենական վրան: Փիչ հեռու ջրհորների մոտ ջուր էին տալիս ուղտի ճագերին և գառներին:

Սա մի թուրքմենական առվ էր:

Մենք կանգ առանք հանգստանալու և յերկու օր անցկացրինք այստեղ: Սմառ էր, անապատի բնակիչների համար տարվա ամենածանր յեղանակը: Անտանելի չոգը հանգիստ չեր տալիս մեզ վոչ ցերեկը, վոչ էլ գիշերը: Վրաններում կյանքը համարյա մեռած էր: Շրջակայքի ամբողջ բուսականությունը խանձվել էր և հովիվներն հոտերի հետ քաշվել էին հեռավոր արոտատեղեր, ուրիչ ջրհորների մոտ:

Ցերկու որից հետո մեր քարվանը հասավ հեռացող Սոտին: Անցնելով ավազաթմբի շուրջը, մենք հանկարծ հեռվից նկատեցինք ինչ-վոր շարժում: Դա վոչխարների հուն էր: Գնում էին վոչխարները, իրենց կճղակներով քանդելով կարակումյան փոշիանման ավազը: Նրանց հազարից ավել էին: Աղոտ յերևում էին նրանց յեղջյուրները: Արևի տակ փայլում էին նրանց սև, մոխրագույն և դարչնագույն կարակուլյան մորթիները:

Հոտի կողքերով և հետևից վազում էին մեծ պա-



Նկ. 59

հապան շները: Իսկ առջևից գնում էր նիհար ծերունի հովիվը սև թուրքմենական վարտիքը գլխին, յերկար, ծայրը կեռ գավազանը ձեռքին, հրացանն ուսին:

Ծանր է և պատասխանատու թուրքմենական հովվի աշխատանքը: Ամբողջ որը քայլում է նա անապատում արևի կիզող ճառագայթների տակ: Աղքատ է անապատի բուսականությունը, և նա ամեն որ ստիպված է ահռելի տարածություն անցնել, վորպեսզի հոտը կերակրի: Ցերեմն փչում է այրող բուք ու բորանը, և հոտը ծածկում է ավազով: Լավ է, յեթե դա յերկար չի տևում: Բայց պատահում են և այնպիսի դեպքեր, յերբ բորանից հարյուրավոր վոչխարներ են սատկում:

Թուրքմեններն ամեն տարի միլիոններով թանգարժեք կարակուլյան մորթիներ են պատրաստում:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀՈՎՏՈՒՄ

Մերկ անապատում յերկար ճանապարհորդելուց հետ-

Նկ. 60. Ֆերգանի հովտում

տո մենք ավտոմոբիլով մտանք Ֆերղանի հովիտը:

Քարտեզի վրա գտեմ այդ հովիտը:

Նա գտնվում է Տաշկենտ քաղաքից դեպի հարավ-արևելք, Սիր-Դարյա գետի հոսանքի յերկարությամբ:

Վայրը միանգամից փոխվեց: Անցնում եյինք պտղատու խիտ այգիների, կանաչ արտերի մոտով: Հաճախ պատահում եյինք եշով կամ վոտքով գնացող մարդկանց:

Սակայն անապատի մոտիկությունն իրեն զգալ եր տալիս: Մերթ աջ, մերթ ձախ կողմում յերևում եյին մերկ տեղեր: Տեղ-տեղ դաշտերը ծածկված եյին ավազներով, վոր քամին բերել եր անապատից:

Բայց շուտով անապատի վերջին հետքերը կորան: Ավտոմոբիլը սլացավ այգիների և արտերի խիտ կանաչի միջով:



Նկ. 61. Բամբակի չանաքը մեքենայով

Ամեն քայլափոխում մենք ստիպված եյինք լինում անցնել վոռոգման ջրանցքների վրայով:

Ամենուրեք ցրված եյին ուզբեկների գյուղեր: Սպիտակին եյին տալիս նրանց կավե փոքրիկ տներն իրենց տափակ տանիքներով: Բակերը ջրապատված եյին կավե բարձր պատերով: Տների մոտ կանաչին եյին տալիս պտղատու այգիները, հոտավետ սեխերի բախչաները և խաղողի այգիները: Յերբեմն նկատվում եյին կապույտ տափաստի, յերբեմն էլ բրնձի ցանքեր: Յեվ այս բոլորը թաղված եր բամբակի ընդարձակ դաշտերի մեջ:

Ֆերղանի հովտում առատ արև, ջերմություն և լույս կա, հողն էլ լավ վոռոգված է բազմաթիվ ջրանցքների միջոցով: Բամբակն այստեղ մեծ բերք է տալիս:

Ֆերղանի հովիտը բամբակի մշակության ամենադյուրավոր վայրերից մեկն է Խորհրդային Միության մեջ: Ուզբեկական կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները Խորհրդային հանրապետության ամեն տարի միլիոնավոր կիլոգրամ բարձր վորակի բամբակ են տալիս:



Նկ. 62.

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական կառավարությունը զենքի ուժով գրավեց անապատների գոտում գտնվող հողերը:

Ցեվ անապատային գոտու ժողովուրդները մոտ 70 տարի ապրեցին ցարական գեներալների իշխանության տակ:

Ցարական չինովնիկները անապատների ժողովուրդներից խլում էին լավագույն հողերը, չնչին գներով հավաքում էին բամբակ և անասուններ, ստիպում էին մեծամեծ հարկեր վճարել:

Ամեն տեղ կանգնած էին ռուսական զորքեր:

Անապատների գոտու աշխատավորներն ապրում էին թե ցարական գեներալների, թե սեփական խանների (թագավորների), բայերի (հարուստների) և թե մոլլաների (տերտերների) լծի տակ:

Ջուրն անապատների գոտու բնակչության կյանքի համար մի՛շտ մեծ նշանակություն է ունեցել:

Բայց այդ ջուրը պատկանում էր խաներին և բայերին: Վորքան շատ էր ջուրը, այնքան մեծ էր և իշխանությունը:

Ջրի համար, ինչպես իշխանության համար, խաները շարունակ պատերազմում էին իրար հետ: Այս պատերազմի ժամանակ վոչնչանում էին ամբողջ ծաղկած քաղաքներ և ծածկվում անապատի ավազներով

Ջրանցքներ շինելու համար քշում բերում էին տասնյակ հազարներով աշխատավորներ:

Անապատների գոտու ժողովուրդները մութ և սնահավատ էին: Գյուղատնտեսությունը վարում էին նախնական ձևերով:

ԻՆՉՊԵՍ Է ԶԱՐԳԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ:

Անապատային գոտում շատ արդավանդ հողեր զուր կորչում են ջրի պակասության պատճառով: Այդ պատճառով էլ խորհրդային իշխանությունն ամենից առաջ ուշադրություն դարձրեց վոռոդման վրա:

Սկսեցին նորոդել քայքայված ջրանցքները և պատվարները· դիմացկուն նյութերից՝ ցեմենտից և յերկաթից կառուցեցին բաղմաթիվ նոր ջրանցքներ: Սկսեցին ջուր մղել վոչ թե շերեփներ ունեցող հին ձևի անիվների, այլ նոր մեքենաների միջոցով:

Բայերից խլեցին հողերը: Ջուրը դադարեց մասնավոր սեփականություն համարվել: Այժմ բոլորն էլ առանց վորևե վճարի ոգտվում են ջրից: Նա հավասարապես բաշխվում է վարելահողերի և այգիների մեջ:

Վոռոդման ջրանցքների ցանցն ավելի ու ավելի մեծանում է: Անապատն ավելի ու ավելի յե քաշվում, հեռանում, ազատելով նոր աշդավանդ հողեր ցանքսերի համար:

Գյուղատնտեսությունը վերակառուցվում է:

Այնտեղ, վորտեղ գյուղացիները ջոկ-ջոկ իրենց նախնական գործիքներով փորփրում էին գետինը, այժմ հազարավոր տրակտորներ մշակում են կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների բամբակի դաշտերը:

Կոլլեկտիվ տնտեսություններ կազմում են նաև քոչվոր վոչխարաբուծները, ստեղծվում են վոչխարաբուծական մեծ խորհրդային տնտեսություններ:

Անապատի ընդարձակ հողամասերում ցանում են կերի խոտեր, և քոչվորները սկսում են նստակյաց կյանքի անցնել: Անապատային գոտում առաջին անգամ կառուցվեցին գործարաններ և ֆաբրիկաներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունն անապատային գոտում ապրող ժողովուրդների համար բացեց լայն ճանապարհ դեպի կուլտուրական շինարարություն:

Անապատների դոտում կազմվեցին ինքնուրույն ազգային հանրապետություններ—Թուրքմենստան՝ Աշխարհ մայրաքաղաքով և Ուզբեկստան՝ Տաշկենտ մայրաքաղաքով:

Հազարավոր դպրոցներում սովորում են Թուրքմենների և ուզբեկների յերեխաներ իրենց մայրենի լեզվով: Տասնյակներով բարձրագույն դպրոցներ այդ Ղոբ միութենական հանրապետություններին տալիս են սեփական դիտնականներ և ինժեներներ: Կառուցվում են ակումբներ, գրադարաններ, կինո, թատրոններ: Յարական ճնշումից ազատված Թուրքմեններն ու ուզբեկները մասնակից են դառնում սոցիալիստական կուլտուրային:

ԻՆՉՊԵՍ Ե ՁԱՐԳԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԴՈՏՈՒՄ

Արագորեն զարգանում է Թուրանի դաշտավայրի արդյունաբերությունը: Կառուցվել են բամբակագործիչ, մետաքսի, մանածագործական ֆաբրիկաներ, գյուղատնտեսական մեքենաների գործարաններ, ելեկտրակայաններ:

Կասպից ծովի ափին զարգանում է ձկնորսական արդյունաբերությունը: Հենց այստեղ էլ գտնված է նավթ:

Լեռներում գտնված են գունավոր մետաղների մեծաքանակ հանքեր:

Մեծ հարստություններ յերևան բերվեցին Կասպից ծովի Կարաբուղազ ծոցի մոտ: Այստեղ ստացվում են դանազան աղեր, զարգանում է արդյունաբերությունը:

Աճում է քաղաքը: Յերեկվա քոչվորները դառնում են բանվոր:

Կարա-Կում անապատի կենտրոնում գտնված են ծծմբի մեծ պաշարներ և հիմնված է ծծմբի գործարան:

Վարժություն: Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք՝ Արալյան ծովը, Արալյան ծովը թափվող գետերը, Կարաբուղազ

ծոցը, Կարակում անապատը, ինչպես և Տաշկենտ, Աշխարհաբաղաքները:

Արտադասյան աշխատանք: Կազմեցեք տրված «Անապատների դոտի» թեմայով:

7. ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՈՏԻ

Խորհրդային Միության մեջ կան և այնպիսի տեղեր, վորտեղ ձմեռը ձյունը չի նստում և սառուցիկ սառնամանիքներ չեն լինում:

Դա ԽՍՀՄ-ի մերձարևադարձային գոտին է:

Թեպետ այդ գոտին մեծ տարածություն չի բռնում, բայց շատ արժեքավոր է մեր Միության համար:

Մերձարևադարձային գոտուն են պատկանում Ղրիմի հարավային ծովափը և Կովկասի Սևծովյան յեզերքը: Յերկուսն էլ գտնվում են տաք, չսառչող Սև ծովի ափերին:

ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԸ

Քարտեզի վրա գտեք Ղրիմ թերակղզին: Գտեք Ղրիմի հարավային ծովափը:

Ձեր առաջ Ղրիմի հարավային ծովափի մի անկյունն է:

Ծով, լեռներ և ժայռեր: Լեռնալանջին կպել է գյուղը:

Գյուղի առաջ տարածվում է պարկը: Այնտեղ բացոթյա աճում են մեր սենյակային բույսերը՝ հեռավոր դափնին, վարդագույն ծաղիկներով զարդարված ոլոռաանդրը, աճում են մուգ կանաչ մագնոլիաները իրենց խոշոր, սպիտակ ծաղիկներով: Ծաղկաթմբերը ծածկված են դանազան վառ ծաղիկներով:

Պարկի ծառերի մեջ աչքի յեն ընկնում վայելչակազմ, մուգ-կանաչ կիպարիսները, իրենց սրածայր գագաթներով: Պարկին կից այգիներում աճում են հարավային պտուղներ՝ դեղձ և ծիրան:

Անապատների դոտում կազմվեցին ինքնուրույն ազգային հանրապետություններ—Թուրքմենստան՝ Աշխարհագրագրական մայրաքաղաքով և Ուզբեկստան՝ Տաշկենտ մայրաքաղաքով:

Հազարավոր դպրոցներում սովորում են Թուրքմենների և ուզբեկների յերեխաներ իրենց մայրենի լեզվով: Տասնյակներով բարձրագույն դպրոցներ այդ նոր միութենական հանրապետություններին տալիս են սեփական գիտնականներ և ինժեներներ: Կառուցվում են ակումբներ, գրադարաններ, կինո, թատրոններ: Յարական ճնշումից ազատված Թուրքմեններն ու ուզբեկները մասնակից են դառնում սոցիալիստական կուլտուրային:

ԻՆՉՊԵՍ Ե ՁԱՐԳԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԴՈՏՈՒՄ

Արագորեն զարգանում է Թուրանի դաշտավայրի արդյունաբերությունը: Կառուցվել են բամբակագործ, մետաքսի, մանածագործական ֆաբրիկաներ, գյուղատնտեսական մեքենաների գործարաններ, էլեկտրակայաններ:

Կասպից ծովի ափին զարգանում է ձկնորսական արդյունաբերությունը: Հենց այստեղ էլ գտնված է նավթ:

Լեռներում գտնված են գունավոր մետաղների մեծաքանակ հանքեր:

Մեծ հարստություններ յերևան բերվեցին Կասպից ծովի Կարաբուղազ ծոցի մոտ: Այստեղ ստացվում են գանազան աղեր, զարգանում է արդյունաբերությունը:

Աճում է քաղաքը: Ցերեկվա քաշվորները դառնում են բանվոր:

Կարա-Կում անապատի կենտրոնում գտնված են ծծմբի մեծ պաշարներ և հիմնված է ծծմբի գործարան:

Վարժություն: Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք՝ Արալյան ծովը, Արալյան ծովը թափվող գետերը, Կարաբուղազ

ծոցը, Կարակում անապատը, ինչպես և Տաշկենտ, Աշխարհագրագրական քաղաքները:

Արտադասյան աշխատանք: Կազմեցեք այրում «Անապատների դոտի» թեմայով:

7. ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՈՏԻ

Խորհրդային Միության մեջ կան և այնպիսի տեղեր, վորտեղ ձմեռը ձյունը չի նստում և սաստիկ սառնամանիքներ չեն լինում:

Դա ԽՍՀՄ-ի մերձարևադարձային գոտին է:

Թեպետ այդ գոտին մեծ տարածություն չի բռնում, բայց շատ արժեքավոր է մեր Միության համար:

Մերձարևադարձային գոտուն են պատկանում Ղրիմի հարավային ծովափը և Կովկասի Սևծովյան յեզերքը: Յերկուսն էլ գտնվում են տաք, չսառչող Սև ծովի ափերին:

ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԸ

Քարտեզի վրա գտեք Ղրիմ թերակղզին: Գտեք Ղրիմի հարավային ծովափը:

Ձեր առաջ Ղրիմի հարավային ծովափի մի անկյունն է:

Ծով, լեռներ և ժայռեր: Լեռնալանջին կպել է գյուղը:

Գյուղի առաջ տարածվում է պարկը: Այնտեղ բացթյա աճում են մեր սենյակային բույսերը՝ հեռավոր դափնին, վարդագույն ծաղիկներով զարդարված ռիթանդրը, աճում են մուգ կանաչ մագնոլիաները իրենց խոշոր, սպիտակ ծաղիկներով: Ծաղկաթմբերը ծածկված են գանազան վառ ծաղիկներով:

Պարկի ծառերի մեջ աչքի յեն ընկնում վայելչակազմ, մուգ-կանաչ կիպարիսները, իրենց սրածայր գագաթներով: Պարկին կից այգիներում աճում են հարավային պտուղներ՝ դեղձ և ծիրան:

Նկ. 63. Պատատուկ

Ամառային որ է։ Փայլում է վառ արևը և նրա ճառագայթների տակ ծովը խաղում է կանաչ, կապույտ և մուգ կապույտ գույներով։ Ծովի ալիքները հարձակվում են ծովեզերքի վրա և աղմուկով զարկվում ժայռերին ու ցրիվ գալիս։

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Կլիմա. Ղրիմի հարավային ծովափը Ղրիմի լեռներով պաշտպանվում է հյուսիսային ցուրտքամիներից։

Ամառը ծովափին լինում է շոգ և չոր։ Նա տևում է մոտ հինգ ամիս։ Անձրևներն այստեղ այնքան քիչ են գալիս, որ ամառներն արհեստական վոռոգման կարիք է զգացվում։ Ձմեռը կարճատև է և մեղմ։ Ձմեռը յերբեմն մառախուղներ են լինում։ Հաճախ անձրևներ են գալիս։ Ծովը կատաղի փոթորիկներից այեկոծվում է։ Մեկ-մեկ ծովափին ձյուն է գալիս, բայց արագորեն հալվում է։

Գարունը կարճատև է և շուտ է գալիս, արդեն մարտին ծաղկում են այգու բույսերը։ Ղրիմի հարավային ծովափում ամենալավ ժամանակը ոգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներն են։ Այս ամիսներին արևն այնպես խիստ չի այրում, ինչպես ամառը։ Լինում է պարզ և տաք յեղանակ։

Բարձրության հետ կլիման փոխվում է։ Նույնիսկ ամառը լեռներում զով է։ Այնտեղ հաճախ անձրևներ գալիս են այն ժամանակ, յերբ ծովափին լինում է շոգ և չոր։

Գետերը։ Ղրիմի հարավային ծովափին քիչ գետեր կան։ Նրանք սկսվում են լեռներում կամ առաջանում են

աղբյուրներից։ Գարնանը, ձյունը հալվելու ժամանակ, իսկ ամառը, սարերում առաջացող հեղեղներից հետո,— գետերը կատաղում են և ափերից դուրս գալիս։ Նրանց մեծ մասը ամառը ցամաքում է։

Բուսականությունը։ Ղրիմի հարավային ծովափում մշտադալար բույսեր շատ կան։ Նրանց տերևները կոշտ են և ծածկված հաստ թաղանթով։ Այսպիսի բույսերը վոչ ամառային շոգից են վախենում, վոչ էլ ձմեռային ցրտերից։ Նրանք ամբողջ տարին պահպանում են իրենց գեղարդը։ Այդպիսի բույսերից է բաղեղը, որ փաթաթվում է ծառերին։ Նա իր ճանկերի միջոցով բարձրանում է ծառերի գագաթները և իր կոշտ, մութ-կանաչ տերևներով ծածկում նրանց։

Բայց Ղրիմի հարավային ծովափին վայրենի բուսականություն քիչ կա։ Բույսերի մեծ մասն ահեցրել են մարդիկ։ Այստեղ հաջողությամբ աճում են մանավանդ մի քանի մշտադալար բույսեր, վորոնք բերվել են ուրիշ մերձարևադարձային շրջաններից, դրանցից աչքի յեն ընկնում դափնին (ունի հոտավետ և կոշտ տերևներ, վորոնք գործ են ածվում կերակրի մեջ, վորպես համեմունք), ձիթենու ծառը, վորի պտուղներից ընտիր յուղ է ստացվում, կիպարիսը (փչատերև ծառեր են) տնկում են պարկերում զարդարանքի համար։ Այդիներում հաճախ տնկում են ալեանդրներ և մագնոլիաներ։

Խոտաբույսերը ծովափին փոխվում են տարվա յեղանակների համեմատ։ Վաղ գարնանը, արևից տաքացող լանջերին ծաղկում են ձնծաղիկներ և մանուշակներ։

Այնուհետև վառ կանաչով ու ծաղիկներով ծածկվում է ամբողջ ծովափը։ Ամառվա շոգերին կանաչ խոտերը դեղնում, չորանում են։ Նրանց փոխարինում են լինոսը, կոշտ խոտերը, վորոնք ծածկված են լինում փշերով։ Այժմ սուր կերպով աչքի յեն ընկնում մերկացած հողամասեր, քարակույտեր և խիճ։

Միայն այնտեղ, վորտեղ գետակ է հոսում կամ առույե քչքչում, ամբողջ տարին լինում են խոտեր, վառ ծաղիկներ։

Նկ. 63. Պատատուկ

Ամառային որ է։ Փայլում է վառ արևը և նրա ճառագայթների տակ ծովը խաղում է կանաչ, կապույտ և մուգ կապույտ գույներով։ Ծովի ալիքները հարձակվում են ծովեզերքի վրա և աղմուկով զարկվում ժայռերին ու ցրիվ գալիս։

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Կլիմա. Ղրիմի հարավային ծովափը Ղրիմի լեռներով պաշտպանվում է հյուսիսային ցուրտ քամիներից։

Ամառը ծովափին լինում է շոգ և չոր։ Նա տևում է մոտ հինգ ամիս։ Անձրևներն այստեղ այնքան քիչ են գալիս, որ ամառներն արհեստական վոռոգման կարիք է զգացվում։ Ձմեռը կարճատև է և մեղմ։ Ձմեռը յերբեմն մառախուղներ են լինում։ Հաճախ անձրևներ են գալիս։ Ծովը կատաղի փոթորիկներից այեկոծվում է։ Մեկ-մեկ ծովափին ձյուն է գալիս, բայց արագորեն հալվում է։

Գարունը կարճատև է և շուտ է գալիս, արդեն մարտին ծաղկում են այգու բույսերը։ Ղրիմի հարավային ծովափում ամենալավ ժամանակը ոգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներն են։ Այս ամիսներին արևն այնպես խիստ չի այրում, ինչպես ամառը։ Լինում է պարզ և տաք յեղանակ։

Բարձրության հետ կլիման փոխվում է։ Նուշնիկի ամառը լեռներում զով է։ Այնտեղ հաճախ անձրևներ գալիս են այն ժամանակ, յերբ ծովափին լինում է շոգ և չոր։

Գետերը։ Ղրիմի հարավային ծովափին քիչ գետեր կան։ Նրանք սկսվում են լեռներում կամ առաջանում են

աղբյուրներից։ Գարնանը, ձյունը հալվելու ժամանակ, իսկ ամառը, սարերում առաջացող հեղեղներից հետո,— գետերը կատաղում են և ափերից դուրս գալիս։ Նրանց մեծ մասը ամառը ցամաքում է։

Բուսականությունը։ Ղրիմի հարավային ծովափում մշտադալար բույսեր շատ կան։ Նրանց տերևները կոշտ են և ծածկված հաստ թաղանթով։ Այսպիսի բույսերը վոչ ամառային շոգից են վախենում, վոչ ել ձմեռային ցրտերից։ Նրանք ամբողջ տարին պահպանում են իրենց սաղարթը։ Այդպիսի բույսերից է բաղեղը, որը փաթաթվում է ծառերին։ Նա իր ճանկերի միջոցով բարձրանում է ծառերի գագաթները և իր կոշտ, մուգ-կանաչ տերևներով ծածկում նրանց։

Բայց Ղրիմի հարավային ծովափին վայրենի բուսականություն քիչ կա։ Բույսերի մեծ մասն ատեցրել են մարդիկ։ Այստեղ հաջողությամբ աճում են մանավանդ մի քանի մշտադալար բույսեր, վորոնք բերվել են ուրիշ մերձարևադարձային շրջաններից, դրանցից աչքի յեն ընկնում դափնին (ունի հոտավետ և կոշտ տերևներ, վորոնք դորձ են ածվում կերակրի մեջ, վորպես համեմունք), ձիթենու ծառը, վորի պտուղներից բնտիր յուղ է ստացվում, կիպարիսը (փչատերև ծառեր են) տնկում են պարկերում զարդարանքի համար։ Այդիներում հաճախ տնկում են ալեանդրներ և մագնոլիաներ։

Խոտաբույսերը ծովափին փոխվում են տարվա յեղանակների համեմատ։ Վաղ գարնանը, արևից տաքացող լանջերին ծաղկում են ձնծաղիկներ և մանուշակներ։

Այնուհետև վառ կանաչով ու ծաղիկներով ծածկվում է ամբողջ ծովափը։ Ամառվա շոգերին կանաչ խոտերը դեղնում, չորանում են։ Նրանց փոխարինում են լինոսը, կոշտ խոտերը, վորոնք ծածկված են լինում փշերով։ Այժմ սուր կերպով աչքի յեն ընկնում մերկացած հողամասեր, քարակույտեր և խիճ։

Միայն այնտեղ, վորտեղ գետակ է հոսում կամ առուն քչքչում, ամբողջ տարին լինում են խոտեր, վառ ծաղիկներ։

Նկ. 64. Թաթարական գյուղ

Բարձրանալով լեռները մենք տեսնում ենք, որ յեղանակը հետզհետե զովանում է և նույնիսկ անձրևներ են գալիս։ Դրա հետ փոխվում է և բուսականությունը։ Լեռնալանջերում դեռ յերևում են կենտ-կենտ Ղրիմի սոճիներ, այնուհետև սոճու ամբողջ անտառներ։

Ավելի բարձր, որտեղ շատ անձրևներ են գալիս, յերևում են նաև սաղարթավոր ծառեր՝ կաղնի, հացի, հաճարի և շատ թփուտներ։

Ղրիմի լեռների մի քանի տեղերում դեռ պահպանվել են յերկու հարյուրամյա կաղնու անտառներ։

Ղրիմի լեռների գագաթները տափակ են. նրանք ծածկված են լեռնային մարգագետինների կանաչ գորգով։

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը Ղրիմի անտառներն անխնա վոչնչացվում եյին։ Դրա շնորհիվ հողի մեջ խոնավությունը պակասեց, մի քանի գետեր ցամաքեցին։

Անտառները լեռնալանջերում պահում են անձրևի ջրերը, պաշտպանում են գետերն ու առուները ցամաքելուց. անտառները շատ ջուր են գոլորշացնում և դրանով մեծացնում են ամպամածությունը։ Այդ պատճառով անտառների պահպանումը կարևոր նշանակություն ունի Ղրիմի ծովափի չոր կլիմայի համար։

Այժմ Ղրիմում պահպանվում են անտառները. մի քանի անտառամասեր դարձված են արգելավայրեր։ Այստեղ արգելված է ծառ կտրել, ծաղիկ պոկել, կրակ վառել, վորսորդություն անել, նույնիսկ քարերը տեղահան անել և կոլեկցիաներ հավաքել։

Կենդանական աշխարհ։ Ղրիմի կենդանական աշխարհն աղքատ է, նա սաստիկ վոչնչացման է յենթարկվել մարդու կողմից։

Այստեղ շատ մողեսներ ու ոձեր կան, բայց նրանց հեշտ չի նկատել։ Նրանց գույնը նման է շրջապատող այն ժայռերի և քարերի գույնին, վորոնց վրա նրանք ապրում են։ Մարդու մոտենալու ժամանակ մողեսները վայրկենապես թաղնվում են ճեղքերում։

Տաք արևոտ օրերին ողը լցված է լինում խոշոր մի-ջատների դիլ ճթճթոցով։ Ամբողջ ողը լավում են այդ ճայները ծառերից. թվում է թե հնչում է ամեն մի ճյուղ, ամեն մի տերև։

Սարերի վրա պատահում են և ուրիշ կենդանիներ։ Յերբեմն պատահում են յեղջերուներ և վայրի այծեր։ Անմատչելի ժայռերում բուն են դրել արծիվները։

ՂՐԻՄԻ ԾՈՎԱՓԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմի հիմնական բնակչությունը թաթարներն են։ Թաթարական գյուղերը ցրված են գետահովիտներում և Ղրիմի լեռների լանջերին։

Այստեղ ամեն ինչ քարից է՝ տները, դռները, փողոցները, բակի պատերը։

Թաթարական գյուղում փոքրիկ տները —«սակլյանն

ը» դասավորված են ատաղձաններով: Տան հետևի պատը յերբեմն հենց ինքը ժայռն է կազմում: Մնացած պատերը շինված են լինում քարից և կավից: Կտուրները լինում են տափակ հողե: Տանիքների վրա քնում են և մրգեղ չորացնում: Կտուրը բակի և փողոցի դեր է կատարում քիչ բարձր գտնվող տան համար: Գյուղի ծայրը դուրս գալու համար պետք է մի կտուրից մյուսն անցնել քարե նեղ սանդուխքներով:



Նկ. 65. Խաղողաքաղ

ԻՆՉՊԵՍ Է ԶԱՐԳԱՆՈՒՄ ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ, ԾՈՎԱՓԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՑԱՆԲԸ

Արևոտերի շատությունը հնարավորություն է տալիս ծովափին աճեցնելու արժեքավոր կուլտուրական բույսեր:

Այգիներում հասնում են դեղձ, ծիրան, նուշ, ձիթապտուղ, ընկույզ: Ընդարձակ տարածություններ բռնված են խաղողի այգիներով և թանկարժեք տեխնիկական բույսերով:

Վորպեսզի այդ բույսերը չոգ ժամանակ չչորանան,

ջուր է հարկավոր ջրելու համար: Այնտեղ, վորտեղ ծովափին ջուր կա, իրար հետևից շարվում են պտղատու և խաղողի այգիներ, պարկեր: Վորտեղ ջուր չկա, այնտեղ չոգ ժամանակ ամեն ինչ թառամում և վոչնչանում է:

Ջուրը ծովափում մեծ հարստություն է:

Զքավոր թաթարները խորհրդայնացումից առաջ շատ վատ եյին ապրում: Ղրիմի հարավային ծովափի ամենալավ հողերը պատկանում եյին կալվածատերերին և թագավորի պալատականներին: Այստեղ կալվածք ուներ և ինքը թագավորը:

Զքավորներին եժան չեր նստում նաև ջուրը: Նրանք շարունակ կարիքի մեջ եյին և կախված եյին հարուստներից:

Զքավոր թաթարները համարյա բացառապես անգրագետ եյին:

Ղրիմի ծովափի աշխատավորներն այժմ նոր կյանքով են ապրում: Հողերը, խաղողի և մրգի այգիները դարձել



Նկ. 66.

են սոցիալիստական սեփականություն: Անհատական տնտեսության փոխարեն ամեն տեղ կազմակերպված են կոլեկտիվ տնտեսություն, որոնք պայքարում են տնտեսության բարձրացման և կոլտնտեսական կյանքի բարելավման համար:

Բացված են տասնյակներով դպրոցներ, որտեղ դասավանդումը տարվում է թաթարական լեզվով: Բացված են նաև շատ դրադարաններ, դասընթացներ հասակավորների համար:

ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԻ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԸ

Խաղողը ծովափի կարևոր բույսերից մեկն է:

Շատ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ զբաղվում են գլխավորապես խաղողի մշակությամբ:

Նկարի վրա ցույց է տրված խաղողի քաղը խորհրդային տնտեսություններից մեկում: Խաղողի այգին փռվել է լեռան հարավային լանջին. այստեղ շատ արև կա և խաղողի քաղցր տեսակները շուտ են հասնում: Խաղողի քաղը գնում է հաջող: Հասած վողկուդները պետք է ժամանակին կտրել: Տասնյակներով բանվորներ զբաղված են խաղողի քաղով: Խաղողով լցված կողովները դարսում են բեռնակիր ավտոմոբիլի վրա: Լավ խճուղու վրայով խաղողը տեղափոխում են խորհրդային տնտեսության պահեստը: Այստեղից խաղողի մի մասը կուղարկեն սանատորիաներ հիվանդների և հանգստացողների համար. մի մասը կտեղափոխեն Հյուսիս, հեռավոր պրոլետարական քաղաքները. մի մասից էլ գինի կպատրաստեն:

ՂՐԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԿԵՆՍԱՐԱՆՆ Է

Զոր և տաք կլիման, ծովային մաքուր ոդը, խաղողը և մրգերը շատ հիվանդների՝ յեն գրավում դեպի Ղրիմի հարավային ծովափը: Ղրիմն ոգտակար է մանավանդ թոքախտավորների համար:

Բայց մինչ հեղափոխությունը Ղրիմի հարավային ծովափի բնության առողջարար ուժերն աշխատավորների համար մատչելի չեյին: Ցարի և պալատականների պալատներն ու հարուստների ամառանոցներն այժմ դարձել են աշխատավորների համար հանգստի տներ և սանատորիաներ: Ցարական ամենալավ պալատում շինել են կոլտնտեսականների համար սանատորիա:

ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵԶԵՐԲԸ

Կովկասի Սևծովյան յեզերքը գտնվում է Ղրիմի ծովափից դեպի արևելք:

Քարտեզի վրա ցույց տվեք Կովկասի Սևծովյան յեզերքը: Ծովեզերքի ընդհանուր տեսքը:

Նկար 66-ի վրա ցույց է տված Կովկասի Սևծովյան յեզերքը նոյեմբեր ամսին (աշնանը):

Նկ. 67. Գոմեշները ծանրություն են փոխադրում

Ծովափը հեղեղված է արևով: Ոդն այնքան տաք է, որ նոյեմբերին մարդիկ ման են գալիս թեթև հագուստով, իսկ վոմանք լողանում են ծովում: Ծովափնյա լանջին տնկած են մանդարինի և նարնջի ծառերի այգիներ:

Վոսկեզույն նարինջներն ու մանդարիններն արդեն հասել են և պարզ յերևում են տերևների մութ կանաչի մեջ: Շուտով կակավի բերքահավաքը և ստացած բերքը կուղարկվի ԽՍՀՄ-ի զանազան քաղաքները:

Այդու կողքով անցնում ե մի հրաշալի խճուղի: Սլանում ե ավտոմոբիլը, վորի մեջ նստած են հիվանդներ: Նրանք գնում են սարի լանջին տեղավորված սանատորիան: Սանատորիայի առաջ գցված ե պարկ.

Սանատորիայից յերևում ե գետի հովիտը և կամուրջը: Այստեղ աճում են թանդարժեք կուլտուրական բույսեր: Մշակված հողամասերը շրջապատված են անտառներով: Խիտ և դժվարանցանելի անտառները ծածկում են ծովեզերքը և լեռնալանջերը:

Ծովեզերքը գեղեցիկ թեքված քներով անցնում ե հեռուները:

Ափերի մոտ ծփում ե տաք, յերբեք չսառչող ծովը: Ծովեզերքի վրա բարձրանում են լեռներ, վորոնք պաշտպանում են այդ ծովեզերքը հյուսիսային դուրս քամիներից: Նրանց առանձին գագաթները ծածկված են ձյունով:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթի կազմությունը: Կովկասի Սևծովյան ափերն ամեն տեղ նույն լայնությունը չունեն (հետևեցեք քարտեզի միջոցով):

Հյուսիս-արևմտյան մասում Կովկասյան լեռները հասնում են համարյա մինչև ծովեզերքը: Դեպի հարավ-արևելք լեռները հեռանում են ծովից և այստեղ, գետահովտի յերկարությամբ ստացվում ե մի ցածրադիր հարթություն, վոր կոչվում ե Կոլխիդյան դաշտավայր:

Ամբողջ ծովեզերքը դարձած ե դեպի տաք Ծովի կողմը: Նրա վրա բարձրանում են Կովկասյան լեռները, վորոնք 2—3 անգամ բարձր են Ղրիմի լեռներից: Շատ գագաթներ ծածկված են հավերժական ձյունով և սառույցներով:

Կլիմա: Ծովեզերքի կլիման խոնավ ե. մերձարևադարձային:

Ծովի կողմից փչող արևմտյան քամիները դեպի ծովափն են բերում մեծ քանակությամբ խոնավություն: Այս խոնավությունն առատորեն թափվում ե լեռնալանջերում:

Կովկասյան ծովեզերքին ձմեռը նույնպես ցուրտ չի լինում, ինչպես Ղրիմի հարավային ծովափերին: Ամառը նույնպես յերկարատև ե և շոգ: Բայց տեղումներն այստեղ ավելի առատ են: Անձրևները գալիս են ամբողջ տարին: Շատ անձրևներ լինում են մանավանդ ամառը: Յերբեմն մեկ որվա մեջ այստեղ այնքան անձրև ե գալիս, վորքան ԽՍՀՄ-ի ուրիշ տեղերում մի տարվա մեջ: Բաթումի շրջակայքը ԽՍՀՄ-ի ամենախոնավ տեղն ե:

Գետերը: Կովկասյան լեռներից շատ գետեր են հոսում դեպի ծովափը: Նրանց մեծ մասը հոսում ե լեռների ձյունի սառույցների տակից: Նրանք կատաղությունով ցած են հոսում լեռներից, իրենց հետ տեղափոխելով մեծ քանակությամբ քարեր, ավազ և տիղմ: Հարթության վրա նրանց հոսանքը դանդաղում ե, և ջրերը թողնում են այստեղ սարերից բերած քարերը, ավազը և տիղմը: Ամառը լեռներում յեկող կատաղի անձրևներից գետերը վարարում են և ափերից դուրս գալով ծածկում ցածրադիր տեղերը:

Բուսականություն: ԽՍՀՄ-ի մեջ վոչ մի տեղ այնպիսի փարթամ բուսականություն չկա, ինչպես մեր յերկրի այս տաք և խոնավ անկյունում: Թե ծովափը և թե լեռնալանջերը ծածկված են անտառների ամբողջական կանաչ զանգվածներով: Ծովափնյա բնակչությունը շարունակ պայքարում ե այս կատաղի բուսականության դեմ: 1—2 տարվա մեջ աչքաթող արած վարելահողը ծածկվում ե յերկու մետր բարձրություն ունեցող ճաբխոտով կամ հինգ-վեց մետր բարձրություն ունեցող անտառով:

Ծովափնյա անտառները բաղկացած են բազմազան ծառերից. նրանց մեջ պատահում են նաև պտղատու ծառեր՝ տանձենի, սալորենի, խաղողի վորթ: Փիչ չեն նաև

մշտադալար բույսերը՝ դափնին, դափնակեռասենին, ծառերը վաթաթված են պատատուկներով: Նրանցից վոմանք ունեն սուր-սուր փշեր: Այսպիսի խճճված անտառների միջով առանց կացնի կամ լավ խանչալի շարժվել չի կարելի, ամեն մի շարժում անելիս փշերը բռնում են մարդու շորը և խրվում մարմնի մեջ:

Խիտ ու դժվարանցանելի յեն մանավանդ Կոլխիդայի դաշտավայրի կիսահեղեղված անտառները: Մի քանի տեղերում միայն անտառը հետ է քաշվում, վորպեսզի տեղ տա ճահճուտներին, վորտեղ մարդ կարող է խեղդվել կամ հիվանդանալ կովկասյան մաշող տենդով:

Դեպի վեր, լեռնալանջերում կլիման փոխվում է, փոխվում է և բուսականությունը: Անտառներում անհետանում են մշտադալար բույսերը և լիանները (պատատուկները): Ցերևում են ծառերի դուրիչ տեսակներ: Ավելի բարձր գալիս են լեռնային մարգագետինները, իսկ հետո հավերժական ձյունը և սառույցը:

Հողեր: Անդրկովկասի Սևծովյան յեղերքին պատահում են առանձին տեսակի կարմիր հողեր «կարմրահողեր»: Դրանք ամենալավ հողերն են այնպիսի թանգարժեք բույսերի համար, ինչպիսին են թեյը, կիտրոնը, նարինջը, մանդարինը:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը նույպես փոխվում է բարձրության և բուսական աշխարհի հետ: Սևծովյան յեղերքի մոտ լեռներում պահպանվել են բազմաթիվ խոշոր կենդանիներ, վորոնք յերկրագնդի ուրիշ տեղերում հազվադյուտ են: Առաջ թագավորը և իր մերձավորները գալիս եյին այստեղ վորսի: Իսկ այժմ կենդործիքների վորոշման համաձայն այստեղ սահմանված է մի արգելավայր 350 հազար հեկտար տարածությամբ: Այս արգելավայրի նպատակն է պահպանել կովկասյան բնությունն իր բուսական և կենդանական աշխարհներով:

Այստեղ ապրում են յեղջերուներ, ընձառյուծներ, եռվազներ: Բարձր լեռներում պատահում են լեռնային



Նկ. 68. Թեյի տնկարանում.

վոչխարները: Ժայռերի և անմատչելի ծերպերում բուն են դրել արծիվները:

Սևծովյան յեղերքի տաք կլիման ոգտագործվել է կապիկներ բազմացնելու համար, վորոնք պետք են գիտական նպատակների համար: Ծովափին հիմնել են կապիկների բուծարան:

Վորպես աշխատավոր անասուններ ծովափին պահում են գոմեշներ: Սրանք ուժեղ կենդանիներ են, վորոնք կարողանում են ծանր բեռներ փոխադրել նույնիսկ լեռներում: Գոմեշները կարող են ապրել միայն տաք կլիմա ունեցող յերկրներում: Նրանք ծածկված են հաստ, համարյա բրդից զուրկ կաշվով:

Առաջադրություն 1. Ղրիմի հարավային ծովափի կլիման համեմատեցեք Կովկասի Սևծովյան ափերի հետ:

2. Ինչո՞ւ Կովկասի Սևծովյան յեղերքն ավելի խոնավ է:

3. Ինչո՞ւ Կովկասյան ծովեղերքի բուսականությունն ավելի հարուստ է Ղրիմի բուսականությունից:

ԾՈՎԵԶԵՐԲԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Կովկասի Սևծովյան յեղերքին ապրում են կովկասյան ժողովուրդներ՝ աբխազներ, աճարացիներ և վրացիներ:

Ծովեզերքի մեծ մասը բռնել են աբխազները և աճարացիները:

Աբխազների գլխավոր զբաղմունքը յերկրագործությունն է: Նրանք ցանում են յեգիպտացորեն, մշակում են նաև խաղող: Բայց խաղողի մշակությունը լավ հիմքերի վրա չի դրված. խաղողի վորթը սովորաբար աճում է ազատ, փաթաթվելով ծառերին: Աբխազների գյուղերը ցրված են առանձին-առանձին տների ձևով. յուրաքանչյուր տուն շրջապատված է խաղողի և մրգի այգիներով և յեգիպտացորենի արտերով: Տները հյուսված են ճիպոտներից կամ շինված են տախտակներից, շրջապատված են պատշգամբներով և դրված են սյուների վրա:

Այստեղ կարելի յե ապրել և առանց տաք տների: Աճարացիք ապրում են ծովեզերքի հարավային և հարավ-արևելյան մասում, ընդհանուր առմամբ ունեն նույն կենցաղը, ինչ-վոր աբխազցիք:

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵԶԵՐԲԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ՆՐԱ ԿՑԱՆՔԸ

Ծանր եր Կովկասի և Սևծովյան յեզերքի ժողովուրդների կյանքը ցարական Ռուսաստանում:

Ցարական կառավարությունը զենքի ուժով տիրեց Կովկասյան ժողովուրդներին և գրավեց ամենալավ հողերը:

Աբխազներն ավելի համառ դիմադրություն ցույց տվին Կովկասին տիրապետելու ժամանակ: Տասնյակ

տարիներ նրանք կռվում եյին ցարական կառավարության դեմ:

Վերջապես, շրջապատվելով ցարական մեծ բանակների յերկաթե ողակով, աբխազներն ստիպված յեղան անձնատուր լինել: Շատերը նրանցից մեռան, զենքը ձեռքներին, իսկ մի քանի հազար մարդ եկ գաղթեց Թուրքիա:

Ավերված հողերը ցարական կառավարության կողմից առատորեն բաժանվում եյին սպաներին և չինովնիկներին:

Բնակչության դաժան շահագործման միջոցով այստեղ սկսեցին մշակել ծխախոտ, թեյ, կիտրոն և մանդարին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կովկասի Սևծովյան յեզերքի բնակչության կյանքը նոր թափ ստացավ:

Ամբողջ ծովեզերքին ցրված են կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ, վորտեղ մշակում են թանկարժեք կուլտուրական բույսեր՝ թեյ, կիտրոններ, նարինջ, մանդարին, զանազան տեխնիկական և դեղատու բույսեր:

Գետերի հովիտներում կառուցում են գործարաններ: Անց են կացնում նոր խճուղիներ և յերկաթուղիներ դեպի ծովեզերքի խորքերը:

Ամենահեռավոր գյուղերում պայքարում են անգրագիտության դեմ, կառուցում են հիվանդանոցներ, դպրոցներ, վորտեղ դաստիարակությունը տարվում է աղքատ բնակչության մայրենի լեզվով:

Ծովեզերքի պալատներն ու ամառանոցները դարձրել են սանատորիաներ և հանգստի տներ: Կառուցվում են նոր սանատորիաներ և հիվանդանոցներ:

Կովկասյան ծովեզերքը, Նովոռոսսիյսկից մինչև Բաթում, ԽՍՀՄ-ի ծաղկած անկյունն է:

Քարտեզի վրա գտեք Նովոռոսսիյսկը և Բաթումը:

Ամբողջ ծովեզերքով անցնում է խճուղի: Գեղեցիկ գալարումներով նա մերթ իջնում է դեպի ծովը, մերթ բարձրանում լեռները, կամ կամուրջներով անցնում է բազմաթիվ լեռնային գետերի վրայով: Ամբողջ ճանապարհի յերկարությամբ ձգվում են մրգի և խաղողի այգիներ, ծխախոտի պլանտացիաներ, արմավենիների և կիպարիսների պարկեր, գեղեցիկ սանատորիաներ և հանգստի տներ:

Կուսակցությունը վորոշել է Կոլխիդի դաշտավայրն իր ճահիճներով, տենդով և անանցանելի անտառներով դարձնել ծաղկած այգի:

ԿՈԼԽԻԴԻ ՃԱՀԻՃՆԵՐԸ ԾԱՂԿԱԾ ԱՅԳԻ ԿԴԱՌՆԱՆ

Քարտեզի վրա գտեք Կոլխիդի դաշտավայրը: Նա գտնվում է Բաթում քաղաքից դեպի հյուսիս-արևելք: Դեռևս քիչ առաջ Կոլխիդի դաշտավայրը ծածկված էր ճահճուտներով և անանցանելի անտառներով, վոչ ճանապարհներ կային, վոչ հարմար արահետներ: Մարդիկ իրար հետ հաղորդակցություն էին պահպանում գետերի միջոցով: Նոսր բնակչությունը բնակություն էր հաստատել ավելի բարձր տեղերում: Փոքրիկ հողամասերը բռնված էին յեգիպտացորենով և խաղողով: Բնակիչները հիվանդանում էին տենդով: Նրանք չարունակ պայքար էին մղում անտառների դեմ, վորոնք առաջ էին շարժվում դեպի վարելահողերը, և գետերի դեմ, վորոնք վարարման ժամանակ սպառնում էին վոչնչացնել ցանքսերը:

Այժմ Կոլխիդան արագորեն փոխվում է: Անանցանելի ճահիճները չորացվում են առուների խիտ ցանցի ոգնությամբ: Անց են կացնում նոր ճանապարհներ: Կարատում են քիչ արժեք ունեցող անանցանելի անտառները:

Այժմ արդեն ճահիճներից խլված է մի քանի հազար հեկտար հող: Ցեվ այնտեղ, վորտեղ քիչ առաջ ճահճուտներ էին, այժմ աճում են արմավենիներ. մշակում են թանգարժեք բույսեր, յերևան են գալիս նարնջի, կիտրոնի և մանդարինի ծառերի այգիներ, ավելի ու ավելի յեն ընդարձակվում թեյի տնկարանների տարածությունները: Յերևան են գալիս թանգարժեք տեխնիկական բույսերի տնկարաններ:

Չինական յեղինների կամ բամբի տնկարանները տալիս են բարձր վորակի մետաքսանման թելիկներ:

Նկ. 69.

Տունգայի ծառի տնկարանները տալիս են ձեթ լավ տեսակի լաք պատրաստելու համար:

Կաուչուկաբեր բույսերի տնկարաններ. որանց հյութից պատրաստվում է ռետին:

ԹԵՅԻ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

Գնացքն արագորեն սլանում էր ազմկոտ Բաթումից: Մեր մոտով մեկը մյուսի հետևից անցնում էին ծաղիկների մեջ թաղված տներ, թփերի և բարձր ծառերի խիտ մացառուտներ, փաթաթված փշոտ պատատուկներով:

Ծառերի կոշտ, մութ կանաչ տերևները փայլում էին անձրևի տակ:

Աննկատելի կերպով անցանք 13 կիլոմետր հյուսիս-արևելյան ուղղությամբ: Գնացքը կանգ առավ Զակվայում: Դուրս յեկանք վագոնից: Արմավենիների ծառուղին տանում է դեպի բամբուկի, մանդարինի և թեյի տնկարանները:

Մենք ուղևորվեցինք դեպի թեյի տնկարանը: Վայրը բլրոտ էր: Բլուրների լանջերին կանոնավոր շարքերով տնկած էին թեյի թփերը: Նրանք իրենց մութ կանաչով սուր կերպով ջոկվում էին կարմիր հողի վրա: Մի քանի հարյուր մարդ պոկոտում են թեյի վերին տերևները և դարսում կողովների մեջ:

Թեյի տերևներով լի կողովները բեռնակիր ավտոմոբիլներով տեղափոխում են թեյի ֆաբրիկան:

Ֆաբրիկայում թեյի կանաչ տերևներից ստանում են այն թեյը, վոր մենք դցում ենք թեյամանի մեջ գույն ստանալու համար:

Թեյի տնկարանները Կովկասյան ծովափին ներկայումս տասնյակ հազար հեկտար տարածություն են բռնում: Մեծ քանակությամբ թեյ արտադրում են կոլեկտիվ տնտեսությունները, վորոնք միացրել են տասնյակ հազար գյուղացիական տնտեսությունները, և խորհրդային տնտեսությունները: Կոլեկտիվ տնտեսություններին ոգնություն հասցնելու համար հիմնվել են հատուկ թեյի մեքենա-տրակտորային կայաններ: Խորհրդային տնտեսություններում գործադրվում են բազմապիսի մեքենաներ:

ԲԱԹՈՒՄ

Կովկասի Սևծովյան ափին գտնվում է համամիութենական նշանակություն ունեցող նավահանգիստ՝ Բաթումը: Այստեղից արտասահման են փոխադրվում



Նկ· 70· Կիրճ·

նավթ, միրգ, մետաքս: Բաթումը արդյունաբերական և թանգարժեք մերձարևադարձային բույսերի՝ թեյի, նարնջի, մանդարինի, կիտրոնի և ուրիշ տեխնիկական բույսերի կենտրոն է:

Վարժություն: Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Բաթում և Նովոռոսսիյսկ քաղաքները:

Աշխատանք արտադասյան ժամանակ: Կազմեցեք Ալրոմ «ԽՍՀՄ-ի մերձարևադարձային գոտի» թեմայով:

8· ԼԵՌՆԵՐ

Մեր Միությունն, ինչպես գիտեք, հսկայական հարթությունների յերկիր է: Լեռները գտնվում են միայն ծայրամասերում:

ԽՍՀՄ–ի ֆիզիկական քարտեզի վրա գտեք՝ Խիբինյան, Ուրալյան, Կովկասյան, Ղրիմի, Ալտայան, Տյան-Շան լեռները և Պամիր լեռնաշխարհը:

Լեռները գտնվում են տարբեր գոտիներում: Ուրալյան լեռներն սկսվում են հեռավոր հյուսիսում՝ տունդրայի գոտում, տայգայի և սևահողային տափաստաններով ձգվում են դեպի հարավ և վերջանում չոր տափաստաններում:

Կովկասյան և Ղրիմի լեռները գտնվում են մերձարևադարձային և տափաստանների գոտիների միջև:

Տյան–Շանի լեռները և Պամիր լեռնաշխարհը գտնվում են անապատների գոտու ծայրամասում:

Վոր գոտում էլ գտնվելիս լինեն այդ լեռները, նրանց բնությունն, ինչպես դիտեք, բարձրության հետ փոխվում է, վորքան ավելի բարձր են լեռները, ձմեռն այնքան ավելի ցուրտ է լինում. բարձր լեռների գագաթները ծածկված են հավերժական ձյունով և սառույցով:

Կլիմայի փոխվելու հետ փոխվում է և բուսականությունը և կենդանական աշխարհը:

ԽՍՀՄ–ի լեռները տարբեր բարձրություն ունեն: Նրանցից ամենաբարձրը Տյան–Շանի լեռներն են. Պամիրում գտնվում է ԽՍՀՄ–ի ամենաբարձր գագաթը՝ Ստալինի գագաթը, վորի բարձրությունն է 7 $^1/_2$ կիլոմետր:

Քարտեզի վրա գտեք Ստալինի գագաթը:

ԽՍՀՄ–ի ֆիզիկական քարտեզին կցած աղյուսակի և ցուցակի միջոցով իմացեք՝ 1) ինչպես են կոչվում հիշված լեռների ամենաբարձր գագաթները, 2) նրանք վո՞ր տեղ են գտնվում:

Լեռները ձգվում են մեկը մյուսի հետևից և կազմում են լեռնաշղթաներ: Բարձր լեռների գագաթները բարձրանում են ամպերից էլ վեր: Արևի ճառագայթների տակ շլացնող փայլով պսպղում է հավերժական ձյունը: Այսպիսի բարձրության վրա վոչ վոք չի ապրում: Միայն արծիվներն են թռչում լեռնագագաթների մոտով:



Նկ. 71. Գյուղ Սվանեթիայում.

Ձյունի զանգվածների ճնշման տակ ձյունապատ գագաթներից դանդաղորեն հոսում են սառույցները: Հեռավից նրանք սառցագետերի յեն նմանվում: Դրանք սառցաշաղաչտերն են: Հսկայական ուժով նրանք հղկում են ժայռերը, պոկում են քարեր և ժայռերի կտորներ ու իրենց հետ ցած տանում:

Գահավիժվելով ժայռերից, նրանք կոտրվում են, փշրվում և կազմում սառցակոշտեր, սառցաբեկորներ, սառցաժայռեր:

Սառցադաշտը դանդաղորեն ավելի ու ավելի յի ցածրանում: Բոլորովին վերջում նրա տակից բղխում է տեռնային գետակը և հոսում դեպի ցած: Աղմուկով և դղրդոցով գլորում է քարակույտեր: Այսպիսի հեղեղները ժայռերի մեջ փորում են սեպաձև լանջերով խոր գիրքեր:

Այդպիսի կիրճերի միջով հաճախ կատաղի հեղեղներ

են հոսում: Ամեն մի սառցադաշտից մի այդպիսի հեղեղ է առաջ գալիս: Ցեվ այդ բոլոր հեղեղները փահավիժվում են դեպի ցած, դեպի հովիտները:

Թվում է թե լեռնաշղթաներն անմատչելի են, բայց մարդիկ այստեղ նույնպես բնակություն են հաստատել:

Լեռնցիների գյուղերը ցրված են լեռնալանջերում և հովիտներում: Նրանք բարձր լեռներով բաժանվում են իրարից:

Լեռների գագաթների միջև պատահում են ցածր տեղեր, վորտեղով լեռնցիներն անցնում են լեռնաշղթան: Այդպիսի տեղերը կոչվում են լեռնանցքներ: Լեռնանցքների վրայով անցնում են ճանապարհները, վորով գյուղերը կապվում են իրար հետ:

ԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լեռների ստորոտներում: Մի խումբ ճանապարհորդներ վորոշեցին բարձրանալ Կովկասի ամենամեծ սառցադաշտերից մեկը: Նրանք հավաքվեցին Նալչիկում, վորը գտնվում է Կովկասյան լեռների ստորոտում:

Ամառային մի շոգ որ եր: Վարդը ծաղկում եր, դաշտում լցվում եյին յեգիպտացորենի հատիկները, բոստաններում հասնում եյին սեխն ու ձմերուկը: Այգիներից կողովներով չուկա եյին դուրս բերում խաղող, ծիրան, խնձոր, տանձ:

Լեռնալանջերը ծածկված եյին հաճարի խիտ անտառներով: Հաճարի անտառներից բարձր սեին եյին տալիս փշատերև անտառները: Ավելի բարձր կանաչին եյին տալիս ալպյան մարգագետինները, և սուր կերպով բարձրանում եյին անմատչելի ժայռերի պատերը: Իսկ բարձունքներում կապույտ յերկնակամարի վրա նկարվում եյին լեռների ձյունապատ գագաթները: Տարորինակ եր թվում, վոր տարվա այս շոգ յեղանակին լեռները ծածկված են ձյունով:

1. Լեռնային կիրճով: Ցերկու որվա ճանապարհից հետո մենք մտանք յեղևնու անտառները. գնում ենք խոր կիրճով: Լեռնային արահետը, վորով մենք առաջ եյինք

գնում, սաստիկ աղողված եր: Ցածում, մեր տակը աղմկում եր անտեսանելի հեղեղը: Մեր գլխավերևը դեպի վեր եյին ձգվում ահռելի ժայռեր: Նույնպիսի սեպաձև ժայռեր գտնվում եյին նաև հեղեղի մյուս ափին: Տեղտեղ արահետը ջրից ողողվել ու քանդվել եր: Մեր ձիերը, բարձած շորերով, վրաններով և ուտելիքով, հազիվ եյին քաշ տալիս իրենց վոտքերը և շուտ-շուտ սայթաքում եյին: Մեր առաջնորդները շարունակ բռնում եյին նրանց, վոր նրանք անդունդը չգլորվեն:

Նեղ արահետով գլխապտուտային բարձրության վրա յերկար վերելքը մեզ սաստիկ հոգնեցրեց:

2. Արոտավայրերում: Կիրճը վերջացավ: Մենք մտանք մի վառ կանաչ հովիտ, վորի մեջ հոսում եր կատաղի, պղտոր հեղեղը: Հարմար արահետը գալարվում եր խիտ խոտով ծածկված մարգագետինների միջով: Վոտքներիս տակ թաց եր, առուները քչքչում եյին: Դա խոտհարքերի արհեստական վոռոգումն եր: Արհեստական վոռոգման շնորհիվ է միայն, վոր այստեղ աճում են վառ, խոշոր, հոտավետ ծաղիկներ ունեցող հյութալի խոտեր: Ահա և վերջին ծառերը—ցածլիկ սոճիները և կեչիները:

Նրանցից հետո սկսվում են լեռնային մարգագետինները: Բաց լանջերում անասելի այրում եր արևը: Գետնի տակը ծածկված եր ցածլիկ, բայց հյութալի խոտով: Խոտերի միջից նայում եյին համարյա ցողուններից զուրկ, մեծ և վառ ծաղիկներ:

Հանկարծ մեր առաջ, կարծես գետնի տակից, դուրս յեկավ հովիվ-պապը: Շուտով լավեց մայուն և վոչյեկավ հովիվ-պապը: Ծեխարները հետաքրքրությամբ շրջապատեցին մեզ: Ծերունին մեզ տարավ իր բնակարանը: Լեռներից ընկած հսկայական քարը դեմ առնելով ուրիշ քարերի ստաջացրել եր բնակարանի պատեր և առաստաղ: Այս այրի ներսը փռված եյին վոչխարի մորթիներ, փայտե դույլերը լիքն եյին մածնով և պանրով: Այստեղ պապն ամբողջ որերով սպասում է արածող հոտի վերադառնալուն դառնարածների հետ և մեծ վարպետությամբ փայտե

Ուսխարհագրություն IV դ.—11

գդալներ և չինում: Մենք այստեղ դիշերեցինք, վորպեսզի նոր ուժով շարունակենք մեր վերելքը:

Սառցադաշտ: Դեռ լույսը չբացված զարթնեցինք: Մառախուղը նոսրացավ և մեր աչքի առաջ բացվեց սառցադաշտը: Սառցադաշտի ծայրի սառցե այրի միջից դուրս եր վազում կատաղի գետ:

Սառցադաշտի վրա անցնելու համար մենք դեռ պետք և անցնեյինք այն հեղեղը, վոր դուրս եր գալիս կողքի սառցադաշտի տակից: Հեղեղը քարերն իրար զարկելով աղմկում եր, կարծես պատրաստվում եր գլորել ու տանել այն մարդուն, վոր կհանդգներ ջրի մեջ մտնել: Մեր ուղեկիցները եշերին քշեցին ջրի մեջ: Ջուրը մինչև բեռներն եր հասնում: Խեղճ կենդանիները դողում եյին, հաղիվ վոտքի վրա պահելով իրենց. նրանց մեկն ընկավ և հոսանքը կտաներ նրան, յեթե ուղեկիցը նրան պարանով չպահեր: Մենք ձեռք-ձեռքի տված հետևում եյինք քարվանին: Մեր վոտքերը նույնիսկ կոշիկների, բրդե հաստ գուլպաների մեջ սառչում եյին, ամեն քայլափոխում մեր վոտքի տակից դուրս եյին պրծնում վողորկ քարեր: Վոռնոցը և գղրդոցը խլացրել եյին մեզ: Ցերը մենք մյուս ափը դուրս յեկանք, մեր վոտքերը լարվածությունից և կրակ անհանգստությունից դողում եյին. բավական եր, վոր մեզնից վորևե մեկը սայթաքեր ու ընկներ, ջուրն անմիջապես նրան կգլորեր ու նախքան ոգնության հասնելը կգարկեր քարերին ու կսպաներ: Կեսորից հետո մենք հասանք մի կանաչ տափարակի, վորտեղ կարելի յեր վրան զարկել: Գետինը ծածկված եր կանաչ խոտով, քարի տակով հոսում եր պարզ ու սառնորակ առուն, իսկ շրջակայքում իշխում եր ձյունապատ գագաթներից կախկխված սառցադաշտերի սառցե լռությունը: Հետևյալ առավոտը պարզ եր, և մենք վորոշեցինք գնալ դեպի սառցադաշտի սկիզբը:

Սառցադաշտի մակերևույթի վրա ցրված եյին մեծ ու փոքր քարեր. քրքչալով հոսում եյին բազմաթիվ առուներ, վորոնք աղմկելով թափվում եյին սառցադաշտի մեջ գտնվող խոր ճեղքերի կամ սառցե ջրհորների մեջ:

Ցուրտ քամին հարկադրեց տաք հագնվել: Սառույցը և շրջապատող ձյունապատ գագաթները փայլում եյին այնքան վառ, մեր շուրջը հեղեղված եր լույսի և կայծերի այնպիսի ծովով, վոր մենք ստիպված յեղանք մութ ակնոցներ կրել, վորպեսզի չկուրանանք:

Ցերեք ժամ հետո մենք գտնվում եյինք ձյունի պատի մոտ և հիացած կանգ առանք: Ճանապարհի բոլոր դժվարությունները մոռացանք: Սառցով և ձյունով շղթայված անմատչելի քարե պատից անդադար ղըղըրդում եյին սառցե և ձյան կույտեր:

Իսկ վոտքերիս տակ փռվում եր հսկայական սառցադաշտը: Ամբողջ սառցադաշտը կտրտված եր անհաշիվ ճեղքերով ու փոսերով. այստեղ-այնտեղ կանգնած եյին կապույտ սյուներ, վորոնք սառցադաշտի շարժումից յերբեմն ընկնում եյին և փշրվում:

Ամպերի մեջ: Հիացած մեր առաջ բացվող պատկերի գեղեցկությամբ, մենք դեռ յերկար կմնայինք այստեղ, բայց ցածից դեպի մեզ եր գալիս և մի քանի րոպեյից հետո մեզ ամբողջապես շրջապատեց սպիտակ մառախուղը. միանգամից ցրտեց: Մենք հաղիվ եյինք իրար տեսնում սառցադաշտի մակերեսի վրա:

Մնալը վտանգավոր եր: Կարելի յեր ճեղքերի մեջ գլորվել:

Մենք սկսեցինք խարխափելով սառցադաշտից ցած իջնել: Հանկարծ ամպերը նոսրացան, պատռվեցին, և մենք ուղղակի, բարձր ափին, մեզնից ցած տեսանք վրաններ և մեր ուղեկիցներին: Վառվում եր կրակը, յեփվում եր վոչխարի միսը:

Լեռնային գյուղ Կովկասում: Իրիկնամուտ եր: Լեռնային արոտատեղերից իջնում եյին տղամարդիկ և կանայք: Նրանք իրենց ուսերի վրա տանում եյին տակեր, լցված մածնով, այրանով:

Արահետից բացվեց գյուղի տեսարանը: Ամբը նստած եր քարակույտերի, վորոնք շրջապատող

ժայռերի պես նույնպես գորշ-դեղնավուն էին։ Ասլի մեջտեղ բարձրանում էր կիսավեր հին աշտարակը։

Ավելի հաճախ էինք հանդիպում դարու փոքրիկ արտերի։ Ամեն տեղ, վորտեղ քարերի արանքում պատահում էին թեկուզ հողի բարակ շերտով ծածկված փոքրիկ տարածություններ, փորփրված և ցանված էր։ Ահա և առլը։ Փողոցներն այնքան նեղ են, վոր յերկու բարձած եշ դժվարությամբ կարող են իրար ճանապարհ տալ։ Ցածրիկ սակլյանները շինված էին տարբեր մեծություն ունեցող քարերից։ Պատերի միջից դեպի փողոց էին նայում փոքրիկ, առանց ապակի պատուհանները։ Տափակ կտուրների վրա քամուց որորվում էր խոտը։ Այստեղ մորթի փափախ գլխներին ծայրատիկ նստում են լեռնականները։ Կանայք մեծ թաշկինակները գլխներին ըստից թել են մանում. խլիկներն անդադար պտտվում էր նրանց մատների արանքում։ Մի տան մոտ կանայք լմում էին թաղիք և յափնջի, վորից լեռնականները յերբեք չեն բաժանվում։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԼԵՌՆՑԻՔ

Կովկասյան զանազան ժողովուրդների գյուղերը ցրված են լեռնալանջերում և գետահովիտներում։ Ինանցանելի ձյունները և անմատչելի ժայռերը բաժանում են մի ժողովուրդ մի ուրիշից։ Ցուրաքանչյուր փոքրիկ ժողովուրդ շատ դարերի ընթացքում ապրել է իր առանձին կյանքով։ Հենց հեղափոխությունից առաջ նրանց կյանքը նույնն էր, ինչ վոր մի քանի դար առաջ։

Հեղափոխությունը ամենահետամնաց կովկասյան ժողովուրդներին արթնացրեց կյանքի համար։

ՍՎԱՆԵԹԻԱՅՈՒՄ

Լեռների խորքում ընկած է մի փոքրիկ յերկիր— Սվանեթիան։ Նա ամբողջ աշխարհից կտրված է անմատչելի լեռներով։ Միայն մի նեղ վտանգավոր արահետ է անցնում սեպաձև ժայռի վրայով կատաղի Ինգուր գետից բարձր։ Այս արահետով սվանները ամառ-

ները կարողանում են կապվել մնացած աշխարհի հետ, իսկ ձմեռը հաղորդակցությունը բոլորովին կտրվում է։

Այս փոքրիկ ժողովուրդը, վոր բաղկացած է ընդամենը 11 հազար մարդուց, մինչև հեղափոխությունը պահպանում էր իր հին կենցաղը և նախնական տնտեսությունը։

Սվանները մեծ ջանասիրությամբ մշակում են իրենց փոքրիկ հողամասերը։ Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը դեռևս մնում էին նախնական գործիքներ, գութանի փոխարեն մի փայտի կտոր դեպի ցած ծռված արմատով, վորին հագցրած էր խոփ. տափանի փոխարեն— մի գերան, վորի վրա ցցված էին ճյուղեր. կալրեն— մի գերան, վորի վրա ցցված էին ճյուղեր. կալոց մեքենայի փոխարեն— կամ (տախտակ, վրան քարեր), վոր յեղները խուրձերի վրայով քաշ էին տալիս։ Սվանեթիան չգիտեր թե անիվն ինչ բան է. խուրձը և խոտը սահնակներով էին կրում, իսկ մարդիկ լեռներն անց էին կացնում լեռներով վոտքով կամ ձիով։ Բացի ձիու և վորսորդական արահետներից Սվանեթիայում ուրիշ ճանապարհ չկար։



Նկ. 72.

Սվանները սնոտիապաշտ էին: Սրբազան պուրակները, սրբազան ծառերը և աղբյուրները, սրբազան կենդանիները, չար և բարի վոգիները, լուսնին պաշտելը, աշխատանքից առաջ զոհ բերելը—այս բոլոր հընության մնացորդները մեծ վնաս էին հասցնում սվանների տնտեսությանը: Բայց ամենավատը դա արյան վրեժն է, վոր դեռևս այստեղ-այնտեղ մնացել է: Վիրավորանքի կամ սպանության համար բոլոր ազգականները վրեժ են լուծում վիրավորողի ազգականներից շատ սերունդների ընթացքում: Նրանք կարող էին մահից ազատվել միայն այն դեպքում, յեթե թողնեին իրենց Հայրենիքը:

Այդպես էին ապրում ամբողջ աշխարհից կտրված սվանները մինչ հեղափոխությունը:

Այժմ բուռն շինարարությունը յուրաքանչյուր տարի, յուրաքանչյուր ամիս փոխում է Սվանեթիայի կյանքը: Սվանեթիան ազատվելով իշխաններից, հարճակումներից և ավերումներից, այժմ շտապում է հասնել կուլտուրական ժողովուրդներին:

Աշտարակների և ծխուված, առանց լույսի, առանց ողի, հին տների կողքին բարձրանում են վառարաններով և պատուհաններով նոր լուսավոր տներ: Սվանեթիայի կենտրոնում վառվեցին ելեկտրական ,ապտերները, շինված է մեծ բաղանիք: Բացված են կոոպերատիվ, հասարակական ճաշարան:

Ամբողջ յերկիրը ծածկվել է դպրոցների, հիվանդանոցների, անասնաբուժական կետերի ցանցով: Ցեվ քիչ սվաններ չեն սովորում մեր տեխնիկումներում և համալսարաններում:

Ինգուր գետի յերկարությամբ Սևծովյան յեղերքից սկսած կառուցվում է խճուղի, վորով կերթևեկեն ավտոմոբիլներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Սվանեթիայի որինակից յերևում է, թե ինչպես է կառուցվում նոր սոցիալիստական կյանքը Կովկասում:

Ամբողջ Կովկասում ծավալվել է շինարարությունը: Անց են կացվում ճանապարհներ: Այժմ նույնիսկ ամենախուլ առվները կապված են Միության դանազան գյուղերի և քաղաքների հետ:

Ստեղծվում է նոր տնտեսություն:

Լեռնային կատաղի գետերը, վոր առաջ քշում, տանում էին կամուրջները, քանդում էին ափերը և գյուղերը, այժմ սկսում են աշխատել մարդկանց ոգտին: Արդեն կառուցվում են բազմաթիվ հիդրոկայաններ:

Այս կայանների կառուցումը տնտեսական մեծ նշանակություն ունի: Հիդրոկայանները եներգիա յեն տալիս ամբողջ շրջանի արդյունաբերությանը: Առաջանում են նոր արտադրություններ: Զքավոր լեռնցիք դառնում են արդյունաբերական բանվորներ: Զարգանում է տնայնագործությունը: Ելեկտրական լույսը տարածվում է լեռնային առվներում: Շինարարության շրջանում բանջարանոցներ ու բոստաններ են դցում այնպիսի հողերում, վորոնք առաջ անպտուղ էին համարվում:

ԼԵՌՆԵՐԻ ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռների ծոցում շատ հարստություններ են թաղնված: Այնտեղ գտնվում են դանազան հանքեր, քարածուխ, թանկագին քարեր և վերջապես, նավթ:

Դարերով ընկած են այս հարստությունները, հեռու մարդկանց աչքից: Պետք էր հետախուզական մեծ աշխատանք թափել և ուսումնասիրել լեռների կազմությունը, վորպեսզի այդ հարստությունները յերևան բերվեն:

Ցեկավ սոցիալիստական մեծ շինարարության ժամանակը: Լեռները կենդանացան: Խուլ, անմատչելի կիրճերում, ձյան սահմանում և սառցադաշտերի մոտ, ամբողջ Կովկասում աշխատում են ինժեներների և գիտնականների հետախուզական խմբերը: Նրանք ծակում են քարը, փորում հորեր և հանում լեռնային տեսակների

նմուշներ: Ցերը գտնվում է ոգտակար հանածոների հարուստ վորևէ խավ, անմիջապես կառուցում են հորեր և գործարաններ:

Շատ հանքեր են գտնվել Կովկասում, Ալտայում և Պամիրում: Բայց դեռ քիչ են ուսումնասիրված լեռները: Նրանց ծոցում դեռ շատ հարստություններ են թաղնված:

ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԵՐ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսից դեպի հարավ 2500 կիլոմետր տարածության վրա ձգվում է վոչ բարձր Ուրալյան լեռնաշղթան: Ուրալյան լեռները կապում են յերկու աշխարհամասերի՝ Յեվրոպայի և Սիբիրի սահմանները (քարտեզի վրա դտնք Ուրալյան լեռները):



Նկ. 73.

ՑԵՐԿԱԹՈՒՂՈՎ ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ՎՐԱՅՈՎ

Ուֆա կայարանում փոքր ինչ կանգ առնելուց հետո, գնացքն սկսում է դանդաղորեն բարձրանալ լեռները: Հովտում աղմկում է լեռնային գետը: Նրա վրա կախվել են սեպաձև ժայռերը: Լեռնալանջերը ծածկված են անտառներով: Պարզ ու վորոշ աչքի յեն ընկնում



Նկ. 74. Նոր գործարան Ուրալում.

յեղևնիների սուր կատարները: Տեղ-տեղ պատահում են բացատները, վորոնք ծածկված են լեռների գագաթներից թափված քարերով:

Ուրալյան լեռները սաստիկ քայքայվել են: Սառնամանիքներից, ջրից ու քամուց նրանց գագաթները ճաքճքվել են և փշրվել, թափվել: Ուրալյան լեռներում չկան վոչ բարձր գագաթներ, վոչ խոր կիրճեր. բայց նրանք շատ գեղեցիկ են:

Ամբողջ որը չես ուզում պատուհանից հեռանալ:

Ահա լեռան յետևը յերևում է գործարան: Գնացքը դանդաղեցրեց իր ընթացքը, ձգվում է թեք լանջի յերկարությամբ, գծում կիսաշրջան: Մենք բանձրանում ենք լեռնացքը:

Ներքևում յերևում են գործարանի և մեր նոր թողած կայարանի կրակները: Շոգեքարշը աղմուկով դուրս է չպրտում գոլորշու քուլաներ: Անտառը լուսավորվում է շոգեքարշի բոցով: Արդեն գիշեր է, բայց ուղեվորները դեռ չեն քնել: Մենք լեռնանցքում ենք գտնվում, Յեվրոպայի և Ասիայի սահմանում:

Մի քանի րոպե ևս և գնացքը սկսում է արագորեն ցած իջնել: Գնացքը հետզհետե արագացնում է իր ընթացքը, անցնելով ժայռերի, անտառոտ լանջերի մոտով, իր հետևը թողնելով Ուրալյան լեռների վոչ բարձր գագաթները: Մեր առաջ այժմ բացվում են տափաստաններ, արտեր: Ուրալն արդեն հետ է մնացել:

Ուրալյան լեռներն իրենց հարստությունքով վաղուց արդեն հայտնի յեն: Ուրալի ընդերքում գտնվում են մեծ քանակությամբ վոսկի, պղինձ և յերկաթի հանքեր:



Նկ. 75. Մագնիտոգորսկի գործարանի դոմնաները



Նկ. 76. Ստալինսկ քաղաքը.

ՄԱԳՆԻՏՈԳՈՐՍԿ

Ուրալյան լեռների հարավային մասում, Ուրալ գետի վերին հոսանքի մոտ գտնվում է Մագնիտնայա լեռը: Նա համարյա ամբողջապես բաղկացած է ամենաուր: Նա համարյա ամբողջապես բաղկացած է ամենաուր: Հարուստ յերկաթահանքից: Հանքն այստեղ գտնվում է ուղղակի յերկրի մակերևույթի վրա:

Հեղափոխությունից առաջ Մագնիտնայա լեռան հանքերը ձեռքով եյին մշակում, և միայն լեռան մակերևույթից հանքը ձիերով եյին տեղափոխում: Մագնիտնայա լեռան մերկ լանջերը ծածկված եյին բարձվենյակով:

Այժմ Մագնիտնայա լեռան մոտ, յերկու տարվա ընթացքում աճեց մի նոր քաղաք— Մագնիտոգորսկը: Կառուցվեց գիգանտ մետաղագործարան: Կառուցվել են աշխարհում ամենամեծ դոմնաները: Լեռան լանջին մշակում են յերկաթահանքը:

Լսվում են խլացնող պայթյուններ և տասնյակ հազարավոր տոննն հանքը խլվում է յերկրի ընդերքից: Հր-

զոր եկսկավատորները բարձրացնում են հանքը և լցնում գնացքը գործարան ուղարկելու համար: Այստեղ աշխատում են հազարավոր բանվորներ:

Գործարանում ամեն ինչ մեքենայացված է. այստեղ աշխատում են արդեն ամենալավ մեքենաները և էլեկտրականության ոգնությամբ:

Գործարանի կողքին կառուցված են յերկաթ ելեկտրական: Նրանց եներգիայով շարժվում են պոմպերը, հորերի ներհատիչ մեքենաները, կախովի ճանապարհը, հազարավոր մանր և խոշոր մեքենաներ: Մեկ կիլոմետր յերկարություն ունեցող ամբարտակը կտրել և Ուրալ գետի առաջը և պահում է գետի վերցրած ջուրը: Յերկաթ ելեկտրոկայանների մոտ ծփում են նոր, մեծ լճի ալիքները: Մագնիտոգորսկի շրջակայքում զարգանում է նոր գյուղատնտեսությունը:

Բլուրների մերկ լանջերը կանաչել են բանջարանոցային կուլտուրաներով:

Մագնիտոգորսկի գիգանտի արտադրողականությունը շատ ավելի մեծ է Յեվրոպայի ամենախոշոր գործարաններից: Մագնիտոգորսկի գիգանտը քարածուխ չունի, այդ պատճառով էլ նա կապված է Կուզնեցկի ավազանի (Կուզբասսի) հետ:

Կուզնեցկի ավազանը գտնվում է Սիբիրում, Ալտայան լեռների մոտ: Նա ունի քարածուխի հսկայական պաշարներ, բայց հանքը քիչ է:

Կուզբասսը Մագնիտոգորսկին տալիս է քարածուխ, իսկ Մագնիտոգորսկի հանքը փոխադրվում է Կուզբասսի արդյունաբերական կենտրոնը— Ստալինսկ:

Այսպես Ուրալում ստեղծվում է մետաղագործական հզոր բազա— Ուրալ–Կուզնեցկի կոմբինատ:

Վարժություններ: Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք ԽՍՀՄ–ի գլխավոր լեռնաշղթաները:

Նշանակեցեք Մագնիտոգորսկի և Ստալինսկի ոգտակար հանածոների հանույթի գլխավոր տեղերը:

ՆԱՎԹԻ ՀԱՆՈՒՅԹԸ

Կասպից ծովի արևմտյան ափին մի փոքրիկ թերակղզի կա: Նա ընկած է Կովկասյան լեռների ստորոտում: Ամառներն արևն անխնա վողողում է կուրացնող լույսով: Թերակղզու վրա սաստիկ շոգ է լինում: Շուրջը ամեն ինչ մերկ է: Յերբեմն միայն պատահում են տեղեր, ծածկված չոր և փոշոտ բարձվենյակով: Կասպից ծովի պղտոր ջրերը հաճույք չեն պատճառում. ծովը նույն պես տրտում է, ինչպես և ամայի Ծովափը: Բայց ի՞նչն է պատճառը, վոր այս ամայի թերակղզու վրա փռվել է հսկայական Բաքու քաղաքը, գցվել են բազմաթիվ յերկաթուղիներ, շարան–շարան ձգվում են ապրանքատար գնացքներ, շարժվում են մոտորները, սլանում են ելեկտրական գնացքները: Ի՞նչու այստեղ այդպիսի կենդանություն է տիրում:

Դրա պատասխանը տալիս է այն վիշկաների անտառը, վորոնք մեկը մյուսի հետևից բարձրանում են թերակղզու ափին: Դա նավթային վիշկաներն են: Այստեղ նավթ է ստացվում:

Ելեկտրական գնացքը կանգ առավ մի նոր ավանի մոտ: Դեռևս այստեղ քիչ առաջ մերկ տափաստան երևում այժմ այստեղ գեղեցիկ շենքերում ապրում են հազարավոր նավթարդյունաբերական բանվորներ:

Գիշերը քաղաքում աղմուկը դադարում է, բայց մի քանի կիլոմետր քաղաքից հեռու ճռնչում են մտնող բուրդունները նոր վիշկաների մեջ: Պողպատե դուրը խրվում է գետնի մեջ, նավթատար խավ վորոնելու համար:

Ահա փորեցին մի նոր անցք: Ամեն մի բոպե նրա միջից կարող է նավթի շատրվան խփել: Բայց դա չի կարելի թույլ տալ: Պետք է ժամանակին անցքը փակել, վորպեսզի թանկարժեք նավթը չվատանա:

Ամենից շատ նավթ ստացվում է Բաքվի, Գրոզնու շրջակայքում և Մայկոպում:

Քարտեզի վրա ցույց տվեք այդ քաղաքները:

Բաղվից նավթը խողովակներով փոխադրվում է Batum նավահանգիստը: Մի ուրիշ նման նավթատար խողովակ միացնում է Գրոզնի քաղաքը Տուապսեյի հետ:

Քարտեզի վրա ցույց տվեք Բաքուն և Տուապսե քաղաքները:

Ստացված նավթը գործ է ածվում վոչ միայն Միության մեջ:

Խորհրդային նավթն արտահանվում է ուրիշ յերկրներ: Տուապսեն և Բաքուն Սև ծովյան այն կարևոր նավահանգիստներն են, վորոնց վրայով մեր նավթն արտահանվում է:

Բաթումում նավահանգստի մոտ գտնվում է ճանապարհների մի ամբողջ ցանց: Սրան մոտենում են զանազան պետությունների դրոշակի տակ բազմաթիվ նավթի նավեր: Նրանք լցվում են խորհրդային նավթով և Սև ծովի վրայով այդ նավթը հասցնում Իտալիա, Ֆրանսիա և ուրիշ պետություններ:

Առաջադրություն 1. «Աշխարհի պետական բաժանումը» քարտեզի միջոցով ցույց տվեք, թե նավթը Բաթումից ինչ ճանապարհներով է հասնում Իտալիա և Ֆրանսիա:

2. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Բաղու, Գրոզնի և Տուապսե քաղաքները:

Աշխատանք արտադասյան ժամանակ: Կազմեցեք ալբոմ «ԽՍՀՄ-ի լեռները» թեմայով:

III. ԽՍՀՄ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ծանոթացանք ԽՍՀՄ-ի բնական գոտիների, յուրաքանչյուր գոտու հսկայական հարստությունների և սոցիալիստական շինարարության ամենախոշոր պատկերների հետ:

Այժմ կրկնենք անցած նյութը, վորպեսզի մեր Միությունը ամբողջությամբ ընդգրկենք:

1. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-Ի ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

Բացեք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը, նայեցեք պայմանական նշանների միջոցով նրա վրա ինչպես են նշանակված՝

1. Ծովի մակերևույթից ցածր գտնվող դաշտավայրերը.
2. Ծովի մակերևույթից բարձր գտնվող դաշտավայրերը.
3. Բարձրությունները.
4. Միջին բարձրություն ունեցող լեռները.
5. Մշտական ձյունով և սառույցներով ծածկված բարձր լեռները:

Քարտեզից յերևում է, վոր ԽՍՀՄ-ն հարթ յերկիր է: Հարթությունների մեծ մասը դաշտավայր են:

Քարտեզի վրա ցույց տվեք՝ 1. Արևելյան-Յևրոպական դաշտավայրը: Նա մինչև վոր ծովերն է հասնում հյուսիսում, հարավում: Ի՞նչ լեռներ են գտնվում արևելքում: Հարավում նա ի՞նչ լեռներով է սահմանափակվում: Ամենացածր տեղերը վո՞ր ծովի մոտ են գտնվում:

2. Արևմտյան–սիբիրական դաշտավայրը: Նա մինչև վո՞ր ծովն է հասնում հյուսիսում: Արևմուտքում նա ի՞նչ լեռներով է սահմանափակվում: Ի՞նչ բարձրությամբ— արևելքում: Ի՞նչ լեռներով հարավ–արևելքում:

3. Թուրանի դաշտավայրը: Արևմուտքում նրա սահմանը վո՞ր ծովն է կազմում: Նրա հարավ–արևելյան սահմանում ի՞նչ լեռներ են բարձրանում:

Դաշտավայրերի մեջ այստեղ— այնտեղ բարձրանում են զանազան բարձրություններ: Քարտեզի վրա ցույց տվեք՝ Միջինռուսական, Մերձվոլգյան և Արևելյան–սիբիրական բարձրությունները:

Այդ բարձրություններից ամենաբարձրը վո՞րն է:

ԽՍՀՄ–ի լեռները գտնվում են հարթությունների ծայրամասերում:

Քարտեզի վրա ցույց տվեք՝ Ուրալյան, Կովկասյան, Ղրիմի, Խիբինյան, Ալտայան, Տյան–Շան լեռները և Պամիր լեռնաշխարհը:

Այդ լեռների մեջ ամենաբարձրերը վո՞ր–ո՞նք են: Վո՞ր լեռների գագաթները ծածկված են հավերժական ձյունով: Լեռների մեջ ամենացածրերը վո՞ր–ո՞նք են:

Քարտեզի վրա ցույց տվեք ԽՍՀՄ–ի այն ամենաբարձր գագաթները, վորոնք կան քարտեզի տղյուսակի և նկարների մեջ:

ԽՍՀՄ–Ի ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՍՀՄ–ն ոգտակար հանածոներով շատ հարուստ է: Նրանք անհրաժեշտ են մեր սոցիալիստական տնտեսության զարգացման համար:

Ամեն տարի գտնվում են նոր ոգտակար հանածոներ: Խորհրդային հետախուզողները թափանցում են Միության ամենահեռավոր անկյունները: Նրանք և հեռավոր տունդրայում, և՛ տայգայի խորքերում, և տոթ անապատում վորոնում են նոր հարստություններ:

ԽՍՀՄ–ն իր նավթային հարստությամբ առաջին տեղն է բռնում բոլոր պետությունների մեջ:

Նավթը Կովկասում վաղուց է հայտնի. այնտեղ, Կասպից ծովի յեզերքին, Բաքվի մոտ և Հյուսիսային Կովկասի տափաստաններում, Գրոզնի քաղաքի մոտ վաղուց ի վեր նավթ է ստացվում: Վերջին տարիներում նավթի մեծ պաշարներ գտնվեցին նաև ուրիշ գոտիներում— տափաստաններում՝ Հարավային Ուրալի մոտ և տայգայում, Ուրալյան լեռներից դեպի արևմուտք:

ԽՍՀՄ–ն իր քարածխի պաշարով յերկրորդ տեղն է բռնում ամբողջ աշխարհում: Քարածխային ավազանները նույնպես ցրված են տարբեր գոտիներում՝ Դոնբասը գտնվում է Ուկրաինայի սևահողային տափաստաններում:

Կուզբասը— տայգայում, Արևմտյան–սիբիրական դաշտավայրի հարավում:

Կարագանդան— չոր տափաստանների գոտում:

Յերկաթահանքի պաշարով, ինչպես և նավթով մեր Յերկրությունը նույնպես առաջին տեղն է բռնում: Յերկաթահանքի գլխավոր հանքատեղերը կազմում են Կրիվոյ Ռոգը— Ուկրաինական տափաստաններում, Կերչը— Ղրիմում և Ուրալյան լեռնաշղթան:

Առաջադրություն 1. ԽՍՀՄ–ի քարտեզի վրա գտեք նավթի, քարածխի, յերկաթահանքերի և պղնձահանքերի կարևոր հանքատեղերը:

2. Գտեք ապատիտի (Կիրովսկ քաղաք), կալիումական աղերի (Բերեզնիկի) հանքատեղերը:

3. Կոնտուրային քարտեզի վրա հանածոների գլխավոր հանքատեղերը նշանակեցեք այնպիսի նշաններով, ինչպիսի նշաններով նրանք նշանակված են ԽՍՀՄ–ի քարտեզի վրա:

ԽՍՀՄ–Ի ԳԵՏԵՐԸ

Քարտեզի վրա գտեք՝ 1. Դնեպրը, Դոնը և Վոլգան. այդ գետերը վո՞ր բարձրությունից են սկիզբ առնում.

նրանցից յուրաքանչյուրը վո՞ր ծովն է թափվում։ Ցույց տալ, թե Դնեպրի վոր տեղում է կառուցված մեր ամենախոշոր էլեկտրոկայանը։

2. Պեչորան և Ուրալը վո՞ր լեռներից են սկսվում և վո՞ր ծովերն են թափվում։

3. Նեվան. վո՞ր լճից է նա սկիզբ առնում. վո՞ր ծոցն է թափվում։

4. Հյուսիսային Դվինան. գտնել այն տեղը, վորտեղ միանում են յերկու գետ և կազմում Հյուսիսային Դվինան։ Նա վո՞ր ծովն է թափվում։

5. Սիր-Դարիան և Ամու-Դարիան. նրանցից յուրաքանչյուրը վո՞ր լեռներից է սկիզբ առնում։ Այդ գետերն ո՞ւր են թափվում։

6. Ոբը, Յենիսեյը և Լենան. վո՞րտեղ են նրանք սկիզբ առնում և վո՞ր ծովերն են թափվում։

7. Ամուր. գտեք այն տեղը, վորտեղ միանում են յերկու գետ և կազմում Ամուրը։ Նա վո՞ր ծովն է թափվում։ ԽՍՀՄ-ն Ամուր գետով վո՞ր պետությունից է բաժանվում։

ԽՍՀՄ-Ի ԿԼԻՄԱՆ

Բնական գոտիներն ուսումնասիրելիս մենք տեսանք, վոր ԽՍՀՄ-ի ընդարձակ տարածության վրա կլիման ամեն տեղ նույնը չէ։

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք հյուսիսային բևեռային շրջանը։

Ցույց տվեք ԽՍՀՄ-ի այն մասը, վոր գտնվում է ցուրտ գոտում։

Ի՞նչպիսի կլիմա ունեն բևեռային և տունդրային գոտիները։ Ձմեռն այդ գոտիներում քա՞նի ամիս է տևում. ի՞նչպես է լուսավորում արևն այնտեղ ամառը և ձմեռը։

ԽՍՀՄ-ի մեծ մասը գտնվում է բևեռային շրջանից հարավ, բարեխառն գոտում։

Բնական ի՞նչ գոտիներ են գտնվում այստեղ։ Ի՞նչպես է փոխվում բարեխառն գոտու կլիման բևեռային շրջանից դեպի հարավ։

ԽՍՀՄ-ի համարյա ամբողջ տարածության վրա ձմեռվա ջերմաստիճանը սուր կերպով տարբերվում է ամառվա ջերմաստիճանից։

ԽՍՀՄ-ի արևմտյան մասում ավելի հաճախ փչում են արևմտյան և հարավ-արևմտյան քամիները։ Այս տաք և խոնավ քամիները փչում են Ատլանտյան ովկիանոսի կողմից, վորտեղ հոսում է Գոլֆշտրոմ տաք հոսանքը։

Քարտեզի վրա ցույց տվեք, թե ինչ ուղղությամբ են փչում այդ քամիները։

Ատլանտյան ովկիանոսի ազդեցության շնորհիվ ԽՍՀՄ-ի արևմուտքում ձմեռն ավելի տաք է, ցեղմ և ամառն ավելի զով է։ Այստեղից դեպի արևելք, տեղումները քչանում են և ձմեռը դառնում է ավելի խիստ, իսկ ամառն ավելի չոր և շոգ։

Առանձնապես խիստ ձմեռ և շոգ ամառ ունի Արևելյան-Սիբիրական բարձրությունը։ Այստեղ, Վերխոյանսկ քաղաքի մոտ գտնվում է յերկրագնդի ամենացուրտ տեղը (ցրտության բևեռը)։ Ատլանտյան ովկիանոսի խոնավ քամին այստեղ չի հասնում. Սիբիրի հյուսիսային ափերը վողողվում են Սառուցյալ ովկիանոսով, վորտեղ ամառը ևս լողում են սառույցներ։

Ցերկինքը ձմեռը և ամառը հաճախ անամպ է լինում. ձմեռը սաստիկ սառնամանիքների ժամանակ (մինչև—70°) կանգնած են լինում խաղաղ, անհողմ օրեր։ Ամառն այստեղ շոգ է լինում։

Թուրանի դաշտավայրի կլիման աչքի յե ընկնում իր չորությամբ։ Այստեղ չեն հասնում Ատլանտյան ովկիանոսի խոնավ քամիները, և շարունակ փչում են չոր քամիներ։ Այստեղ են գտնվում մեր անապատները։

Հեռավոր-Արևելքում, Կամչատկայի հարավ-արևմտյան մասում և Ճապոնական ծովի ափերին ամառները շատ տեղումներ են թափվում. սրանց բերում են

այն քամիները, որոնք փչում են Խաղաղ օվկիանոսի կողմից։ Այդ պատճառով ամառները սաստիկ անձրևներից դեռևս վարարում են և հեղեղում շրջակայքը։

Ղրիմի հարավային ծովափը և Կովկասի Սևծովյան ափը հյուսիսային կողմից բարձր լեռներով պաշտպանվում են ցուրտ քամիներից և ունեն տաք, մերձարևադարձային կլիմա։ Այնտեղ ձմեռը սառնամանիքներ չեն լինում։ Դեկտեմբերին, յերբ մեզ մոտ ցրտեր են լինում, Կովկասյան ծովափին լինում են տաք արևոտ օրեր, ծաղկում են մանուշակն ու վարդը, հասնում են նարինջն ու մանդարինը։

Ղրիմի հարավային ծովափն ունի չոր կլիմա, իսկ Կովկասի Սևծովյան յեզերքը Խորհրդային Միության ամենախոնավ տեղն է։ արևմտյան քամիները Սև ծովից բերում են խոնավություն, վորի առաջն առնում են բարձր լեռները և վորը նրանց լանջերին թափվում է առատ անձրևների ձևով։

ԽՍՀՄ–Ի ԲՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Բնական գոտիների տեսությունների մեջ մենք ուսումնասիրեցինք յուրաքանչյուր գոտու հողերը, բուսականությունը և կենդանական աշխարհը։

Հիշեցեք, թե ինչ հողեր են պատահում տունդրայում, անտառային գոտում, տափաստաններում։ Վո՞ր հողն է ամենաարգավանդը։ Ի՞նչպես է նա առաջացել։ Ինչո՞ւ չոր տափաստանների հողն աղքատ է բուսահողով։

Նայեցեք, թե ինչպես է փոխվում բուսականությունն ըստ գոտիների։ Ինչո՞ւ տունդրայում անտառ չկա։ Ինչո՞ւ խառն անտառներում բանում են այլ ծառեր, քան տայգայում։ Չոր տափաստանների բուսականությունն ինչո՞վ է տարբերվում սևահողային տափաստանների բուսականությունից։ Ինչո՞ւ անապատը բուսականությամբ աղքատ է։

Հիշեցեք, թե ինչ կենդանիներ են պատահում տունդրայում, անտառային գոտում, տափաստաններում և անապատներում։ Ինչո՞ւ թանկարժեք մուշտակավոր կենդանիները պատահում են տունդրայում և տայգայում։ Տունդրայի և անապատների կենդանիներն իրենց գույնով ի՞նչպես են տարբերվում։ Այդ կենդանիների համար նրանց գույնն ի՞նչ նշանակություն ունի։

Հողերի, բուսականության և կենդանական աշխարհի բազմազանությունը բացատրվում է նրանով, վոր ԽՍՀՄ–ի հսկայական տարածության վրա կլիման բազմազան է։

Տարբեր բույսեր իրենց կյանքի համար տարբեր քանակությամբ խոնավություն և ջերմություն են պահանջում։ Բույսերից վոմանք աճում են տունդրայում, վորտեղ մի փոքր խորության մեջ գտնվում է հավերժական սառածություն, ցուրտ հյուսիսում, վոմանք՝ տաք հարավում։ բույսերից վոմանք հարմարվել են խոնավ շրջանների կյանքին, իսկ վոմանք՝ չոր։

Տարբեր կլիմայից ու տարբեր բուսականությունից տարբեր հող է առաջանում։ Տաք գոտու հարավային մասում, տափաստաններում բուսական մնացորդները փտելուց գոյանում է սևահող։ Ցուրտ տունդրայում, հավերժական սառածության մեջ փտումը դանդաղ է կատարվում և բուսական մնացորդները մնում են հողի մեջ առանց փտելու։

Անտառային խոնավ հողի մեջ, խոնավությունը ծծվելով հողի մեջ, իր հետ այդ հողից հեռացնում է այն բոլոր լուծվող նյութերը, վորոնք պետք են բույսերին սնվելու համար։ Ընդհակառակը, չոր տափաստանների և անապատների հողը չափազանց մեծ քանակության մեջ աղեր են պարունակում (աղուտներ)։

Բույսերն ել իրենց հերթին կախված են հողից։ Ճահճոտ տունդրայում լավ աճում են մամուռներ, ճախնաները, լոռամրգին, բայց չի աճում փետրախոտը (սրմոր, լոռամրգին, բայց չի աճում փետրախոտը (սրմոր բուլը), վորին տափաստանային հող է պետք։ Չոր

տափաստանների աղուտների մեջ աճում են աղաբույսեր, բայց այնտեղ չեն կարող աճել ուրիշ բույսեր:

Նույնը կարելի է ասել նաև կենդանիների մասին: Կենդանիներից վոմանք ապրում են հեռավոր հյուսիսում, վոմանք տաք հարավում: Հյուսիսային կենդանիներն ունեն տաք մուշտակներ, այդպիսի մուշտակներից զուրկ են հարավային կենդանիները:

Այսպիսով ԽՍՀՄ-ի կլիման հյուսիսից դեպի հարավ աստիճանաբար փոխվում է. դրա հետ փոխվում են նաև հողը, բուսական և կենդանական աշխարհները:

2. ԽՍՀՄ-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր Միության մեջ արդյունաբերություն սաստիկ զարգացավ միայն վերջին տարիների ընթացքում: Ցարական Ռուսաստանում միայն մի քանի շրջաններ ունեին զարգացած արդյունաբերություն, իսկ մնացած ամբողջ յերկիրը համարյա վոչ մի ֆաբրիկա և գործարան չուներ: Գյուղատնտեսական Ռուսաստանում վորպես առանձին խոշոր արդյունաբերական կենտրոններ աչքի եյին ընկնում՝ Պետերբուրգը (այժմ Լենինգրադ), Մոսկվան և Դոնբասը: Նրանք բոլորը գտնվում եյին Եվրոպական Ռուսաստանում, նրա միջին և հարավային մասերում:

Իսկ նրանց շուրջը անծայրածիր տարածություններ, վորոնց վրա կարող եյին տեղավորվել տասնյակ խոշոր կուլտուրական պետություններ: Եվ այս բոլոր տարածությունների վրա իշխում է «կիսավայրենությունը և ամենախիստական վայրենությունը»— այսպես եր ասում Վ. Ի. Լենինը ցարական Ռուսաստանի մասին:

Բայց կառուցելով իր սոցիալիստական տնտեսությունը, ԽՍՀՄ-ն գյուղատնտեսական յերկրից դարձել է արդեն առաջավոր արդյունաբերական յերկիր: Ամբողջ յերկրով մեկ ծավալվել է նոր սոցիալիստական արդյունաբերություն, զարգացել են նոր բարդ արտադրություններ:

Փոխվել է Խորհրդային Միության քարտեզը: Բոլոր ծայրամասերում, վորտեղ իշխում եր «ամենախիստական վայրենությունը», աճում են գիգանտ խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ, գործարաններ, հանքահորեր, խոշոր ելեկտրակայաններ, քաղաքներ: Մեքենաների արտադրությամբ ԽՍՀՄ-ն այժմ արդեն յերկրորդ տեղն է բռնում ամբողջ աշխարհում, իսկ գյուղատնտեսական մեքենաներով գրավել է առաջին տեղը:

Հիշեցեք, թե ինչպես են ոգտագործվում ԽՍՀՄ-ի տարբեր գոտիների բնական հարստությունները: Բնական գոտիների քարտեզի վրա ցույց տվեք ձեզ արդեն հայտնի նորակառույցները: Հիշեցեք, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ նշանակություն ունի:

Բնական գոտիների քարտեզի վրա ցույց տվեք նրա վրա նշանակված կարևոր արդյունաբերական շրջանները: Ցույց տվեք քարածխի, նավթի, յերկաթահանքերը: Մշակման և անտառային արդյունաբերության շրջանները:

Քարտեզի վրա գտեք այն քաղաքները, վորոնց մեջ խոշոր գործարաններ են գտնվում՝ Մոսկվա, Գորկի (ավտոմոբիլային գործարաններ), Ստալինգրադ, Չելյաբինսկ (տրակտորային գործարաններ), Սարատով և Զապորոժյե (կոմբայնների գործարաններ), Ռոստով (գյուղատնտեսական մեքենաների գործարան):

ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա գտեք ամենախոշոր ելեկտրակայանները՝ Շատուրայի, Դնեպրի և Վոլխովի:

ԽՍՀՄ-Ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միության արդյունաբերության զարգացման հետ զարգանում է և գյուղատնտեսությունը: Նախկին միլիոնավոր անհատական գյուղացիական

տնտեսությունների փոխարեն կազմվել են կոլեկտիվ տնտեսություններ: Կուլակությունը վորպես դասակարգ հիմնականում լիկվիդացիայի յե յենթարկված. վճռական պայքար ե մղվում կոլեկտիվ տնտեսություններն ամրապնդելու համար, վճռական պայքար ե մղվում կուլակության մնացորդների դեմ: Խոշոր տնտեսություններն առաջվա նախնական գյուղացիական տեխնիկայից անցնում են բարդ մեքենաներին, վոր արտադրում ե նոր արդյունաբերություն: Հաղարավոր խորհրդային տնտեսությունների և մեքենատրակտորային կայանների ցանցով ծածկվել ե ամբողջ յերկիրը: Այսպես ԽՍՀՄ-ն դարձավ աշխարհի ամենախոշոր և ամենաառաջավոր սոցիալիստական գյուղատնտեսություն ունեցող յերկիրը:

Հիշեցեք, թե գյուղատնտեսության ինչ տեսակներ են յերևան յեկել տունդրայում, անտառային գոտում, սևահողային և չոր տափաստաններում և մերձարևադարձային գոտում:

Գյուղատնտեսության ինչ նոր տեսակներ են յերևան յեկել տունդրայում Խորհուրդների ժամանակ: Ի՞նչ նոր բույսեր են մշակում անտառային գոտում, տափաստաններում և մերձարևադարձային շրջաններում: Ի՞նչպես են տարբեր գոտիներում պայքարում գյուղատնտեսության համար վնասակար բնական պայմանների դեմ՝ ճահիճների դեմ, ջրի պակասության դեմ, վնասատուների դեմ:

ԽՍՀՄ-Ի ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Տրանսպորտը ժողովրդական տնտեսության շատ կարևոր մասն ե. առանց տրանսպորտի վոչ մի հիմնարկ չի կարող կանոնավոր աշխատել, չի կարող զարգանալ յերկրի տնտեսությունը:

Յերկաթուղային ցանցը Միության տարբեր մասերում միատեսակ չե: Յերկաթուղիները կառուցվում ե-յին Յեվրոպական Ռուսաստանի մի քանի մասերում միայն: Մոսկվան կարևոր յերկաթուղային հանգույցեր: Նրանից սկսվում են յերկաթուղիներ և ուղղվում դեպի տարբեր կողմեր: Յերկաթուղային խիտ ցանց ունի Ուկրայինան Դոնբասի հետ: Բայց նրանք շատ քիչ են Միության մյուս մասերում:

Խորհրդային շինարարությունն արդեն զգալի չափով մեծացրել ե յերկաթուղային ցանցը, իսկ մի շարք յերկաթուղիներ աշխատում են ելեկտրական եներգիայով:

Առաջադրություն: 1. ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք այն յերկաթուղիները, վորոնք Մոսկվայից անցնում են դեպի Լենինգրադ-Մուրմանսկ, դեպի Մինսկ, Արխանգելսկ, Կիև-Ոդեսսա, Ղրիմ և Կովկաս:

2. Ցույց տվեք Մոսկվայից մինչև Վլադիվոստոկ ձգվող յերկաթուղին:

3. Ցույց տվեք Մոսկվայից Տաշկենտ-Աշխաբադ տանող յերկաթուղին:

4. Ցույց տվեք Խորհրդային իշխանության կառուցած Թուրքեստան-Սիբիրական յերկաթուղին:

Յերկաթուղիների հետ միասին կարևոր նշանակություն ունեն նաև Ջրային ճանապարհները: Աղբանքը Ջրով տեղափոխելն ավելի եժան ե, քան յերկաթուղով: Միության շատ տեղերում, վորտեղ յերկաթուղիներ չկան, գետերը հաղորդակցության միակ ճանապարհներն են:

Ջրային ամենակարևոր ճանապարհը Վոլգա գետն ե: Ամառը Վոլգայի ջուրը քշանում ե, յերևում են ծանծաղուտներ, վորոնք դժվարացնում են նավագնացությունը:

Մրագրված ե Վոլգայի վրա կառուցել մի քանի խոշոր ամբարտակներ և հզոր ելեկտրակայաններ:

Պատվարները կբարձրացնեն Վոլգայի ջուրը և կբարելավեն նավագնացության պայմանները:

Ջրային ճանապարհները լավացնելու, նրանց ցանցը լայնացնելու համար կառուցվում են ջրանցքներ: Այս-



Նկ. 77. Մոսկվայի յերկաթուղային հանգույցը.

պես, Վոլգան ջրանցքների միջոցով միացված է Բալտիկ ծովի հետ: Այս ջրային ճանապարհը կոչվում է Մարիինյան ջրային սիստեմ: Նա Վոլգայից սկսվում է Շեկսնա վտակով, անցնում է մի քանի գետերով, վորոնք իրար հետ միացած են ջրանցքով, ապա Ոնեգա և Լադոգա լճերով և Նեվա գետով հասնում է մինչև Ֆիննական ծոցը:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա ցույց տվեք Մարիինյան ջրային ճանապարհը:

Խորհրդային իշխանության ջանքերով վերջերս կառուցվեց մի շատ կարևոր ջրանցք, վորով Ոնեգայի լիճը միանում է Սպիտակ ծովի հետ: Այսպիսով ստեղծվեց մի ջրային ճանապարհ, վորով կարելի յե Սպիտակ ծովից դուրս գալ Բալտիկ ծով—կառուցվեց Ստալինի անվան Սպիտակ-Բալտիկծովյան ջրանցքը:

Քարտեզի վրա գտեք Սպիտակ-Բալտիկծովյան ջրանցքը:

Սկսվում են Կաման Պեչորայի և Հյուսիսային Դվինայի հետ միացնելու աշխատանքները (Կամայի, Պեչորայի և Հյուսիսային Դվինայի մի քանի վտակների վրա կկառուցվեն ամբարտակներ, վորով կառաջանա մեծ լիճ. այդ լճի վրայով նավերը կանցնեն մի գետից մյուսը):

Ստորին Վոլգան ջրանցքով կմիացվի Դոնի հետ և դրանով նավերը հնարավորություն կունենան Վոլգայից Սև և Ազովի ծովը դուրս գալու:

Արդեն սկսվել է Վոլգա-Մոսկվա ջրանցքի շինարարությունը: Դա կառաջացնի կարճ ճանապարհ Մոսկվա-գետից դեպի վերին Վոլգան և Մոսկվան կդառնա կարևոր գետային նավահանգիստ: Այս բոլոր աշխատանքները կլավացնեն նավագնացությունը Վոլգայի վրա և կստեղծեն այսպես կոչված «Մեծ Վոլգա»:

Ուշադրություն դարձեցեք «Մեծ Վոլգա» քարտեզը: Յերկրորդ կարևոր ջրային ճանապարհը Դնեպր գետն է: Նրա վրա ստորին հոսանքի քարերը— վաղուց ի վեր արգելք եյին հանդիսանում նավագնացության համար: Դնեպրի ելեկտրակայանի ամբարտակները բարձրացրին

ջրի մակերևույթը: Ժայռերը թաղվեցին ջրի մեջ և ամբողջ Դնեպրը դարձավ նավարկելի:

Ծովային ճանապարհները կարևոր են ուրիշ պետությունների հետ կապվելու համար: Միության արտաքին առևտուրը կատարվում է ծովային նավահանգիստներով:



Նկ. 78. «Մեծ Վոլգայի» քարտեզը.

ների վրայով: Այս տեսակետից ամենակարևոր ծովերն են Բալտիկ և Սև ծովերը: Բալտիկ ծովի Ֆիննական ծոցի ափին գտնվում է Լենինգրադ նավահանգիստը, որը Խորհրդային Միության նավահանգիստներից ամենակարևորն է: Սև ծովի ափին գտնվում են Ոդեսա, Նովորոսսիյսկ և Բաթում նավահանգիստները: Ցապոնական ծովի ափին գտնվում է Վլադիվոստոկ նավահանգիստը, որով կապվում ենք Խաղաղ ովկիանոսի հետ:

Հյուսիսի բնական հարստությունները կանոնավոր կերպով ոգտագործելու, դրանց ուրիշ յերկրներ արտահանելու համար կարևոր նշանակություն ունի Հյուսիսային ծովային ճանապարհը, որն անցնում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսով Միության հյուսիսային ափերի յերկարությամբ: Ամենակարևոր հյուսիսային նավահանգիստներն են՝ Մուրմանսկը, Արխանգելսկը, Իգարկան:

Առաջադրություն: 1. ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք Վոլգա գետը և նրա գլխավոր վտակները: Նա վո՞ր բնական գոտիներով է հոսում:

2. Ցույց տվեք այն ջրային ճանապարհները, որով Վոլգան միանում է Ֆիննական ծոցի և Սպիտակ ծովի հետ:

3. Ցույց տվեք այն տեղը, որտեղ կառուցվում է Վոլգա-Մոսկվա ջրանցքը:

4. Ցույց տվեք ԽՍՀՄ-ի գլխավոր նավահանգիստները:

5. Համաշխարհային քարտեզի վրա ցույց տվեք հետևյալ ծովային ճանապարհները՝ Լենինգրադից Լոնդոն, Մուրմանսկից Նյու-Յորք, Իգարկայից Լոնդոն, Բաթումից Ֆրանսիա, Վլադիվոստոկից Տոկիո:

IV. ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Նայեցեք ԽՍՀՄ-ի վարչական քարտեզին: Դուք տեսնում եք Խորհրդային Միության ամբողջ տարածությունը ներկված է տարբեր գույներով: Առանձնապես պարզ յերևում են 7 գույն: Դրանք այն միութենական հանրապետություններն են, վոր կազմել են Խորհրդային Միության մեջ ապրող զանազան ժողովուրդներ: Այս հանրապետությունները միացել են իրար հետ և կազմել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Ահա միութենական հանրապետությունները՝

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն—ՌՍՖԽՀ, Ուկրաինական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն—ՈՍԽՀ, Բելոռուսական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն—ԲՍԽՀ, Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն—ԱՍՖԽՀ:

Թուրքմենստանի ՍԽՀ:

Ուզբեկստանի ՍԽՀ:

Տաջիկստանի ՍԽՀ:

Քարտեզի վրա ցույց տվեք հիշած հանրապետություններից յուրաքանչյուրը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բոլոր այն ժողովուրդների աշխատավորների յեղբայրական միությունն է, վորոնք ապրում էին նախկին ցարական Ռուսաստանում:

Ուկրաինայի սոցիալիստական խորհրդային հանրապետությունը գտնվում է Միության հարավ-արևմտյան մասում, Ռումինիայի և Լեհաստանի սահմանում: Հարավից նրա ափերը վողողում են Սև և Ազովի ծովերը: Ուկրաինայի մայրաքաղաքն է Կիևը:

Բելոռուսիայի ՍԽՀ գտնվում է Միության արևմտյան մասում, Լեհաստանի սահմանում: Մայրաքաղաքն է— Մինսկը:

Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը գտնվում է Կովկասյան լեռներից հարավ, Սև և Կասպից ծովերի միջև: Սրա սահմանը հարավից կազմում են Իրանը և Թուրքիան: Անդրկովկասի բնակչությունն իր ազգության կազմով բազմազան է: Անդրկովկասյան Ֆեդերացիան յերեք հանրապետությունից է բաղկացած՝ Անդրկովկասի արևմտյան մասում, Սև ծովի մոտ ընկած է Վրաստանի ՍԽՀ (մայրաքաղաքն է Թիֆլիս). արևելյան մասում, Կասպից ծովի մոտ ընկած է Ադրբեջանի ՍԽՀ (մայրաքաղաքն է Բաքու). հարավային մասում, Իրանի և Թուրքիայի սահմանում ընկած է Հայաստանի ՍԽՀ (մայրաքաղաքն է Յերևան):

Կասպից ծովից դեպի արևելք գտնվում են միութենական յերեք հանրապետություն՝ Թուրքմենստանի ՍԽՀ (մայրաքաղաքը — Աշխարաբադ), Ուզբեկստանի ՍԽՀ (մայրաքաղաքը— Տաշկենտ) և Տաջիկիստանի ՍԽՀ (մայրաքաղաքը— Ստալինաբադ):

Միության մնացած տարածությունը բռնում է միութենական հանրապետություններից ամենամեծը— Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը: ՌՍՖԽՀ և ամբողջ Միության մայրաքաղաքը Մոսկվան է:

Միութենական հանրապետությունների մեջ ապրում են զանազան ժողովուրդներ, վորոնք իրենց հերթին կազմել են ազգային ինքնավար հանրապետություններ և մարզեր:

ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Միության հսկայական տարածության վրա մոտ 170 միլիոն մարդ է ապրում: Իր բնակիչների թվով ԽՍՀՄ-ն բռնում է յերրորդ տեղը բոլոր պետությունների մեջ:


ՍՍՌ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆ
ՕՐԵՆԿՆԵՐ
ՕՐԵՆԿՆԵՐ
ՕՐԵՆԿՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ

1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

Բացի ԽՍՀՄ-ից յերկրագնդի վրա ուրիշ շատ յերկրներ ել կան: Բայց միայն Միության մեջ է իշխանությունը պատկանում բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիության: Միայն Միության մեջ է կառուցվում սոցիալիստական տնտեսություն: Մնացած բոլոր յերկրներում տեր ու տնորենը կապիտալիստներն ու կալվածատերերն են:

Նրանց է պատկանում ամբողջ իշխանությունը պետության մեջ, նրանց են պատկանում հողերի մեծ մասը, բոլոր ֆաբրիկաները և գործարանները:

Այդ յերկրներում բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունն աշխատում է կապիտալիստների և կալվածատերերի համար:

Կապիտալիստներն ու կալվածատերերը չահագործում են նրանց աշխատանքը իրենց չահվելու, հարստանալու համար:

Շահույթի յեռեից ընկած, կապիտալիստները փնտռում են նոր տեղեր իրենց ապրանքները սպառելու, եժան հումույթ և եժան բանվորական ձեռքեր ձեռք բերելու համար: Ուժեղ կապիտալիստական պետությունները այս նպատակով գրավել են բնության հարուստ, բայց անպաշտպան յերկրներ և այդ յերկրների պատճառով չարունակ պայքարում են իրար դեմ: Այսպիսի գրավված յերկրները գաղութներ են կոչվում:

Վերջին տարիներում խոր ճգնաժամը ընդգրկել եր կապիտալիստական պետությունները: Այդ պետությունների արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն դեպի անկումն են գնում:

Բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բոլոր կապիտալիստական յերկրներում համառ պայքար է մղում կապիտալիստների, կալվածատերերի և նրանց կառավարությունների դեմ:

Կազմակերպվում են գործադուլներ, «սոված յերթեր»: Մի շարք յերկրներում բռնկում են զինված ընդհարումներ վոստիկանության և զորքերի հետ, գյուղացիական ապստամբություններ:

2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Յերկրագնդի հինգ վեցերորդ մասը գտնվում է կապիտալիստների իշխանության տակ: Ուժեղ կապիտալիստական պետություններ գրավել են հեռավոր հարուստ յերկրներ Աֆրիկայում, Ամերիկայում, Ավստրալիայում և Ասիայում: Այս յերկրները դժվար չեր գրավել, վորովհետև նրանք բնակված եյին դանազան հեռամնաց ժողովուրդներով:

Կապիտալիստական պետություններն այս բոլոր գրավված յերկրները հայտարարեցին իրենց գաղութները: Կապիտալիստները դրանց մեջ տեր ու տնորեն են:

Նրանք իրենց ապրանքները մեծ ոգուտով սպառում են գաղութներում: Նրանք այդ յերկրների բոլոր բնական հարստությունների տեր ու տնորեն են: Կապիտալիստները կողոպտում են գաղութները և արտահանում հումույթներ, քայքայում են բնիկներին և խլում նրանց հողերը, ստիպելով, վոր աշխատեն նրանց համար:

Կապիտալիստական պետությունների կողմից գրավված յերկրների մեծ մասը գտնվում է տաք գոտում:

Նրանք ունեն տաք, շատ տեղերում խոնավ կլիմա. այդ պատճառով ել բուսականությունն այնտեղ շատ

ճոխ է: Այստեղ աճում են մարդու համար շատ արժեքավոր բույսեր՝ կաուչուկի ծառ, քինա-քինայի ծառ, հացի ծառ, կոկոսյան արմավենի, շաքարեղեգ, բանաններ: Մեծ բերք են տալիս սուրճի, կակաոյի, բրնձի, կաուչուկի պլանտացիաները (տնկարանները): Այստեղ շատ կան նաև արժեքավոր ոգտակար հանածոներ՝ ոսկի, արծաթի, պղնձի հանքեր և վոսկի:

Կապիտալիստներն այս բոլոր բնական հարստությունները թալանում են և իրենց յերկիրը տեղափոխում:

Գաղութային յերկրներում շատ ժողովուրդներ, են ապրում. դրանցից ամենաբազմամարդն են՝ նեգրերը, հնդիկները, մալայացիները և հնդկացիները:

Ծանր է գաղութային յերկրների բնակչության կյանքը: Աշխատանքից հրաժարվելու համար նրանց սովորաբար բանտ են նստեցնում: Ընչին զանցառության համար յենթարկվում են մարմնական ծանր պատիժների: Հաճախ նրանց մտրակով այնքան են ծեծում, վոր նրանք ծեծի տակ մեռնում են:

Ծանր է մանավանդ աֆրիկական նեգրերի դրությունը:

Յերբեմն ռազմական ուժով նեգրական ամբողջ գյուղեր քշում են կառուցվող յերկաթուղիների և խճուղիների վրա աշխատեցնելու համար: Հաճախ այնտեղ աշխատում են մինչև գոտկատեղը ճահճի ջրի մեջ խրված: Կառուցման նյութերը փոխադրում են նեգրերն իրենց մեջքով:

Կապիտալիստի համար նեգրն ավելի ձեռնտու է, քան մեքենաները: Մեքենաները շարժելու համար պետք է ծախսեր անել վառելիքի վրա: Նեգրը համարյա բոլորովին ձրի է աշխատում: Բենզինը թանգ է, իսկ բանանները, նեգրերի հիմնական սնունդը, ձրի է:

Կապիտալիստներն անգթորեն հափշտակում են գաղութների բնական հարստությունները, անգթորեն վոչնչացնում են բանվորական ուժը:

Նեգրերը և գաղութային յերկրների այլ բնակիչները ծանր աշխատանքից, հազարներով մեռնում են կաուչուկի անտառներում, յերկաթուղիներ կառուցելիս, պլանտացիաներում, մասսայորեն մեռնում են զանազան հիվանդություններից: Որինակ, Բելգիայի աֆրիկական գաղութներում միայն մեկ յերկաթուղի շինելիս մեռան 17 հազար նեգր:

Բայց գաղութների աշխատավորներն արդեն սկսել են պայքարել իրենց շահագործողների— կապիտալիստների դեմ: Գաղութներում հեղափոխական շարժումը հետզհետե ծավալվում է: Գաղութների աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ավելի ու ավելի համարձակ կազմակերպված յելույթներ են ունենում կապիտալիստների դեմ:

Յերկրագնդի վրա կան և այնպիսի յերկրներ, վորոնք ինքնուրույն են համարվում, բայց իսկապես նրանք յենթակա են կապիտալիստական ուժեղ պետություններին և զանվում են նրանց իշխանության տակ:

Այդպիսի յերկրներից մեկն է հսկայական, խիտ բնակված Չինաստանը:

3. ԳԼԽԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ ՅԵՎ՝ ՆՐԱՆՑ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ (Ա. Մ. Ն.)

Ամերիկայի Միացյալ Նահանգները կապիտալիստական յերկրների մեջ ամենահարուստն են:

Ամերիկայի Միացյալ Նահանգները գտնվում են Հյուսիսային Ամերիկայի կենտրոնական և հարավային մասում:

Քարտեզի վրա գտեք Միացյալ Նահանգները և նրանց մայրաքաղաք Վաշինգտոնը:

Քարտեզի միջոցով գտեք, թե Ամերիկայի Միացյալ Նահանգները, վոր ջերմային գոտում է գտնվում:

Նայեք, թե վոր պետություններն են սահմանակցում

ԱՄՆ-ին և վոր ովկիանոսներն են վողողում նրա ափերը:

«Աշխարհի քաղաքական բաժանումը» քարտեզի վրա ցույց տվեք այն ճանապարհը, վորով Նյու-Յորքից Լենինգրադ ենք բերում զանազան մեքենաներ:

Քարտեզի միջոցով իմացեք, թե Նյու-Յորքից մինչև Լենինգրադ քանի կիլոմետր է:

Ա. Մեծագույն Նահանգների գլխավոր գաղութներն են՝ Գոբտորիկո կղզին, վոր գտնվում է Նյու-Յորքից հարավ և Ալյասկան, վոր գտնվում է Հյուսիսային Սեմերիկայի հյուսիս-արևելյան մասում:

Գոբտո-Ռիկո կղզին գտնվում է տաք գոտում: Այնտեղ մշակում են սուրճ, կակաո և բանաններ:

Քարտեզի միջոցով գտեք այն ճանապարհը, վորով սուրճը Գոբտո-Ռիկո կղզուց փոխադրում են Սան-Ֆրանցիսկո քաղաքը:

ԱՆԳԼԻԱ

Անգլիան արդյունաբերության զարգացմամբ յեվրոպական յերկրերն և ամբողջ աշխարհում: Նա գտնվում է Մեծ Բրիտանիա և Արևմտյան Յեվրոպայի ափերի մոտ մի շարք կղզիների վրա:

Քարտեզի միջոցով իմացեք, թե Անգլիան, վոր ջերմային գոտում է ընկած: Գտեք Անգլիան և նրա մայրաքաղաք Լոնդոնը:

Անգլիան ծովային յերկիր է: Նա գտնվում է Ատլանտյան ովկիանոսում:

Հին ժամանակներից սկսած Անգլիան վարում է ծովային լայն առևտուր: Նրա նավերը լողում էին յերկրագնդի զանազան ծովերում: Ամենուրեք չատ հարուստ յերկրներ է գրավել նա:

Անգլիայի գրաված յերկրների ամբողջ տարածությունը 140 անգամ մեծ է, քան թե ինքը Անգլիան:

Նայեցեք քարտեզին. տեսեք թե վորքան մեծ է Անգլիայի գաղութների տարածությունը: Նրանք ներկված են նույն գույնով, ինչ վոր ինքը Անգլիան:

Ահա նրա գլխավոր գաղութները՝ Հնդկաստան, Ավստրալիա, Հարավային Աֆրիկական Միություն, Կանադա:

Քարտեզի վրա ցույց տվեք այդ գաղութները:

Անգլիայի գաղութների մեծ մասը գտնվում է Հնդկական ովկիանոսի շուրջը:

Քարտեզի վրա գտեք Լոնդոնից դեպի այդ գաղութները տանող ամենակարճ ծովային ճանապարհը: Նա անցնում է Միջերկրական և Կարմիր ծովերի վրայով: Դա շատ կարևոր ճանապարհ է Անգլիայի կապիտալիստների համար: Այս ճանապարհով նրանք գաղութներից ստանում են զանազան հում նյութեր իրենց գործարանների համար: Այս ճանապարհով նրանք գաղութներն են փոխադրում իրենց ապրանքները: Այս ճանապարհը կարևոր է նաև նրա համար, վոր հեշտացնում է գաղութների կառավարելը և նրանց պաշտպանությունը ուրիշ կապիտալիստական յերկրների գրավումից:

Քարտեզի վրա ցույց տվեք այն ծովային ճանապարհը, վորով նավերն Անգլիայից գնում են ԽՍՀՄ-ի հյուսիսային նավահանգիստները և հետ դառնում:

Քարտեզի վրա ցույց տվեք այն ծովային ճանապարհը, վորով կարելի յե Լենինգրադից Լոնդոն գնալ:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիան գտնվում է Յեվրոպայի արևմտյան մասում:

Քարտեզի վրա ցույց տվեք Ֆրանսիան և նրա մայրաքաղաք Փարիզը: Իմացեք թե նա վոր ջերմային գոտում է գտնվում:

Նա ի՞նչ ովկիանոսով է վողողվում: Վո՞ր պետությունների հետ է սահմանակից:

Ֆրանսիան ԽՍՀՄ-ից հետո ամենամեծ պետությունն է Եվրոպայում:

Քարտեզի միջոցով վորոշեցեք, թե Փարիզը Մոսկվայի վո՞ր կողմն է գտնվում:

Գտեք Մոսկվայից Փարիզ տանող ճանապարհը:

Ֆրանսիան շատ գաղութներ ունի: Գաղութների տարածության մեծությամբ նա հետ է մնում միայն Անգլիայից:

Նայեցեք քարտեզին, տեսեք թե վորքան տեղ են բռնում Ֆրանսիայի գաղութները: Նրանք ներկված են նույն գույնով, ինչվոր ինքը Ֆրանսիան:

Ֆրանսիայի գաղութների մակերևույթը 22 անգամ մեծ է բուն Ֆրանսիայի մակերևույթից:

Ֆրանսիայի գաղութները գտնվում է Աֆրիկայի հյուսիս-արևմտյան մասում: Նրան են պատկանում նաև Մադագասկար կղզին, վոր գտնվում է Աֆրիկայի հարավ-արևելյան ափերի մոտ, և Հնդկաչին թերակղզու արևելյան մասը՝ Ասիայում: Ֆրանսիայի բոլոր գաղութները գտնվում են տաք գոտում:

Քարտեզի վրա գտեք Ֆրանսիայի գաղութները:

Քարտեզի վրա ցույց տվեք թե ի՞նչ ծովի վրայով է անցնում այն ճանապարհը, վոր տանում է դեպի Աֆրիկայի հյուսիսային ափին գտնվող ֆրանսիական գաղութները. Ֆրանսիայից ապրանքներն ի՞նչ ծովային ճանապարհով են տեղափոխում Հնդկաչին:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիան գտնվում է Եվրոպայի կենտրոնական մասում:

Քարտեզի վրա գտեք Գերմանիան և նրա մայրաքաղաք Բեռլինը:

Քարտեզի միջոցով ցույց տվեք, թե նա վոր պետությունների հետ է սահմանակից, վո՞ր կողմից է վողողվում ծովերով: Ջերմային վո՞ր գոտում է գտնվում:

Քարտեզի միջոցով ցույց տվեք, թե Բեռլինը Մոսկվայի վո՞ր կողմն է գտնվում:

Ցույց տվեք Մոսկվայից Բեռլին տանող ճանապարհը:

Գերմանիան ներկայումս գաղութներ չունի: Նրա բոլոր գաղութները իմպերիալիստական պատերազմի ժամանակ խլվեցին:

Գերմանական կապիտալիստները և կառավարությունը յեռանդուն կերպով պատերազմի պատրաստություն են տեսնում, վորպեսզի կռվով ելի ձեռք բերեն գաղութներ:

ՅԱՊՈՆԻԱ

Յապոնիան Անգլիայի նման ծովային պետություն է: Նա գտնվում է մի շարք կղզիների վրա, վորոնք շղթայի պես ձգվում են Ասիայի արևելյան ափերի յերկարությամբ:

Քարտեզի վրա գտեք Յապոնիան և նրա մայրաքաղաք Տոկիոն:

Քարտեզի միջով իմացեք թե նա վոր ջերմային գոտում է գտնվում:

Նայեցեք քարտեզին. Մոսկվայի վո՞ր կողմն է գտնվում Յապոնիան: Մոսկվայից ի՞նչ ճանապարհով պետք է գնալ Յապոնիա:

Յապոնիայի ամենագլխավոր գաղութներն են՝ Կորեան և Ֆորմոզա կղզին:

Վերջերս Յապոնիան գրավեց Մանջուրիան:

Քարտեզի վրա գտեք Յապոնիայի գաղութները և նրա մայրաքաղաք Տոկիոն:

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինաստանը գտնվում է Ասիայի հարավ-արևելքում:

Քարտեզի վրա գտեք Չինաստանը և նրա մայրաքաղաք Նանկինը:

Իմացեք թե վոր գոտում է գտնվում նա:

Ցույց տվեք Մոսկվայից Նանկին տանող ամենակարճ ճանապարհը:

Չինաստանի բնական հարստությունները վաղուց ի վեր գրավում էին զանազան կապիտալիստական յերկրների ուշադրությունը:

Չինաստան ուղևորվեցին Անգլիայի, Ամերիկայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի կապիտալիստները:

Նրանք իրենց հետ տարան զանազան ապրանքներ: Նրանք սկսեցին այստեղ հողեր գնել, հանքահորեր շինել, գործարաններ հիմնել: Նրանք կամաց-կամաց իրենց ձեռքը գցեցին Չինաստանի համարյա բոլոր բնական հարստությունները, համարյա ամբողջ արդյունաբերությունը:

Չինաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Չինաստանի մեկ վեցերորդ մասում իշխանությունն անցել է խորհուրդների ձեռքը:

Քարտեզի վրա ցույց տվեք այն ծովային ճանապարհները, որոնք Լոնդոնից, Փարիզից, Տոկիոյից, Սան-Ֆրանցիսկոյից, Նյու-Յորքից տանում են Չինաստան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտներին 2

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

I. ԽՍՀՄ-ի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ 5

II. ԽՍՀՄ-ի ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՑԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ.

1. Բևեռային գոտի 14
2. Տունդրաների գոտի 35
3. Անտառների գոտի 53
4. Անտառատափաստանի և սևահողային տափաստանների գոտի 89
5. Չոր տափաստանների գոտի 110
6. Անապատների գոտի 125
7. Մերձարևադարձային գոտի 139
8. Լեռներ 157

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

1. Բնությունը 174
2. Տնտեսությունը 181

IV. ԽՍՀՄ-ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

1. Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միությունը 189
2. ԽՍՀՄ-ի ժողովուրդները 190

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ

1. Կապիտալիստական յերկրներ 194
2. Կապիտալիստական յերկրների գաղութները 195
3. Գլխավոր կապիտալիստական յերկրները և նրանց գաղութները 197

100

ՀՀ Ազգային գրադարան
NL0977293

ԳԻՆԸ 90 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 60 ԿՈՊ.

193
11
27207

Л. Г. Терехова и В. Г. Эрдели

ГЕОГРАФИЯ

Часть вторая

Учебник для IV класса начальной школы

Гиз ССР Армении, Эривань, 1935 г.